

Q. 33/4 Jack

free hook earle

it green

MPK/see 1919

19199-8
5-16

491.99-8

5-16

1005-10
2003

ԳՈՒՐԳԵՆ ԷԴԻԼԵԱՆ

ՓԱՅԼՈՒՄ ԱՐԵԿ



ՀՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ



ՔԻՑԻՒՄ
Տպ. «Ազգայական», Գոյսփ. 39
1919

01-303-1
15.04.2013

8391

ՀԱՅՈՎԱՐԴԱՐԱԿԱՆ

ԽԱՐԱՐԱԿԱՆ

ԴՊԲՈՑԱԿԱՆ ԿԵԱՆՔ

Կարդա

Ա. Շատուրեան




Կարդա, այ իմ խելօք մանուկ,
Կարդա, գըրի՛ր տարին բոլոր.
Կարդացողի խելքն է կարուկ,
Միտքը պայծառ ու լուսաւոր:

Դու կիմանաս, ինչու մարդիկ
Դէտք է ազգին իրար համար,
Ինչ է մարդկանց յամն ու կարիք,
Ինչ է լոյսը, ինչ է խուար:

Դիր կարգալով, դու զբքերում
Շատ նորանոր բան կիմանաս,
Շատ շատերից շատ բաներում
Մըաքով հեռու կը սըլանաս:

Կարդա, որդիս, որ հօրըդ պէս
Դու էլ անուս, խեղճ չը մնաս,
Որ ամենքին վիզ չը ծոես,
Եւ միշտ աղատ առաջ դնաս...

Կարդա, այ իմ խելօք մանուկ,
Կարդա, գըրի՛ր, տարին բոլոր.
Կարդացողի խելքն է կարուկ,
Միտքը պայծառ ու լուսաւոր:



36715-62

ԻՄ ՄԱՆԿՈՒԹԻՒՆԸ

I

Ուսումնարան

Եօթ տարեկան էի, երբ մայրս
ինձ տւեց ուսումնարան։ Ես մի միջակ
մանուկ էի, ոչ անշնորք, ոչ էլ մեծ
շնորքով։ Աշխատասէր չէի, բայց շատ
էլ ծոյլ չէի։

Ես շատ միամիտ տղայ էի։ Այ
պատմեմ ձեզ իմ միամտութեան մա-
սին մի գլարճալի բան։ Մի օր ու-
սուցիչս, որին Սարգիս վարպետ էին կոչում, ինձ վրա բարկացաւ։
Դառա լաւ չէի պատրաստել։ Նա ականջս մի լաւ քաշեց, յետոյ
բաց արաւ դասագիրքս, ցոյց տւեց դասս և ասաց։
—Տես, էգուց այստեղից մինչև այստեղ ջուր կանես։
—Շատ լաւ վարպետ, ջուր կանեմ, —պատրաստանեցի ես։

Մեր փողոցից ոչ հեռու կաը մի աղբիւր։ Միւս օրը դասա-
կիքս տարայ, պահեցի նրա տակ այնքան, որ բոլորովին ջուր
դարձաւ։ Տարայ ուսումնարան և հպարտ-հպարտ ցոյց տւեցի վար-
ժողեափս։

Սարգիս վարպետը առաջ մի կուշտ ծիծաղեց։ Բարի մարդ էր։
Բոլոր աղակերտներն էլ ծիծաղեցին։ Ես ապուշ ապուշ նայում էի
սրա ու նրա երեսին։

Յանկարծ Սարգիս վարպետը կատաղեց։ Նա հրամայեց բաց
անել առաջ մի, յետոյ միւս ձեռիս ափը և սկսեց քանոնով տուր
որ կը տառ։

Լաւ էր, որ քանոնի տափակ կողմովն էր զարկում և ոչ սուր
կրզմով։ Բայց և այնպէս ձեռներս սաստիկ ցաւեցին, ես լաց եղայ։
—Անիրաւ, —ասաց Սարգիս վարպետը, —ես քեզ երէկ ասացի,
որ դասդ ջուր տնես, այսինքն անգիր անես ջրի պէս, իսկ դու
տարել ես գիրք թրջել ու բերել։ Դէ լաւ, քիչ տըզտզա, դու դա-
ստիքը ես ջուր արել, ես էլ քո աչքերը ջուր արի։ Տես, միւս
անգամ ասածս լաւ հասկացիր։



Եւ զուրս բերելով գրպանից մի մեծ գոյնզգոյն թաշկինակ,
սրբեց աչքերիս ջուրը, այսինքն՝ արասասուքը։

Երկար, շատ երկար ժամանակ աչս էեւ ո՞ւ թիւ ու ու ու ու ու մ
իմ արածը և միշտ ծաղրում էին ինձ։

Ես երկար չմնացի Սարգիս վարպետի մօա։ Մայրս ինձ դուրս
բերեց և յանձնեց Տէր-Աւանէսի դպրոցը։

II

Տէր-Աւանէսը

Տէր-Աւանէսը մի հասարակ գիւղացի էր եղել, եկել էր մեր
քաղաք, գրել կարդալ սովորել և եկեղեցում տիրացու դարձել։ Թէ
ինչպէս էր քահանայ ձեռնադրւել, Աստւած գիտէ։ Գլխաւորն այն
էր, որ ինքը հազիւ հազ Աւետարանը կարդալ գիտէր, ուսումնա-
րան էր բաց արել և դաս էր տալիս մեզ, ամեն մէկից վերցնելով
ամիսը մի ուուրիլ։

Եւ ինչ դաս, «այբ, ժե, ճե, ուա, բեն, ինի» և այլն, բայց
այն էլ ասեմ, որ մեծ աշակերտները կարգում էին Սաղմոսադիքը,
Աւետարան, աւելի ուսեալները՝ Աստւածաշունչ։

Ես արգէն ուսեալներից էի։

Մի լղար գէմքով, ոև, թանձը և երկայն միրուքով մարդ էր
այդ Տէր-Աւանէսը։ Նրա ունքերը միշտ կիտւած էին, երեսը թըթ-
ւած, կարծես, միշտ փորը ցաւում էր։

Փոշտալիս երեսը խաչակնքում էր և ասում։

—Տէր, գու չարը խափանես։

Երկու բանում նա շատ եռանդուն էր, ուտելում և ծեծելում։

Ամենից աւելի սիրում էր խնձորի տոլմա և փախլաւա։ Ըն-
կոյզի հալւա էլ էր սիրում, բայց աւելի պակաս, քան ճառվ փլաւը։

Մեր ծնողներն այդ բանը գիտէին, ուստի ով կարսղ էր, տէր-
հօրը բաժին էր ուզարկում։ Ես այսօր էլ զարմացած եմ, թէ ին-
չու այդ մարդը ուտում էր ուտում, էլի լղար էր մոռմ։

Նա ծեծում էր մանաւանդ այն աշակերտներին, որոնց ծնող-
ները չէին կարողանում խնձորի տոլմա, կամ ընկոյզի հալւա ու-
ղարկել նրա համար։

Ամենից շատ ծեծում էր Շամշիանց Աւետը։ Այն էլ ասեմ,

որ զա մի վերին աստիճանի անշանգիստ տղայ էր. շարունակ թաշկառում էր, պարում, երգում. Երբեմն դասամիջօցներին կանգնում էր ձեռների վրա, զլուխը դուրս էր բերում ոտների արանքով և ասում.

—Փիշ փիշ, փիշ փիշ:

Նա սիրում էր սրան նրան խտղտել կամ կմշտել: Հակառակի պէս միշտ իմ կողքին էր նստում և գասի ժամանակ շարունակ կմշտում էր ինձ:

Մի օր Աւետը ինձ այնպէս պինդ կմշտեց, որ ես գոռացի.

—Վայ, վայ:

—Ի՞նչ պատահեց, —հարցրեց Տէր-Աւանէսը, երկայն ձիպոտը բարձրացնելով:

—Ճանճը կծեց ականջս, —պատասխանեցի ես:

Բանն այն է, որ ես վախեցայ մատնել Աւետին: Նա կարող էր փաղցում ինձ մի լաւ ծեծել, որովհետև ինձնից մեծ էր և ուժեղ:

—Ճանճը կծելով կարելի է արջի պէս բղաւել, —կատաղեց Տէր-Աւանէսը:

Բարեխախտաբար այդ օրը մենք ինձորի տոլմա ունեինք և տէր-հայրն արդէն իւր բաժինը սասցել էր, նա ինձ չծեծեց:

Երբեմն Տէր-Աւանէսը գալիս էր մեր տուն: Ամեն անդամ «պահպանիչ» էր ասում: Յետոյ գովում էր իմ գրութիւնը և աշխատափրութիւնը: Մայրս նրան հիւրասիրում էր շաջի օղիով և մուրաբաներով:

Ծիծաղս գալիս էր, երբ Տէր-Աւանէսը մուրաբա էր ուտում: Շատ անգամ ձմերուկի մեղրոտ կճեպը կամ վարդի տերեները ընկնում էին նրա երկայն սիրուքի վրա և յետոյ սահում դէպի ֆէրաջէն:

Առևասարակ, հանգուցեալը համ լաւ ուտում էր, համ էլ լաւ ծեծում:

III

Աւետի քիրը

Շամշիանց Աւետը շատ մեծ քիր ունէր: Եւ օր օրի վրա այդ քիրը մեծանում էր:

Աշակերտները շարունակ ծաղրում էին, անւանելով նրան «քիր

Աւետ»: Նա բարկանում էր, կատաղում, աջ ու ձախ բոռնցքով, ոտով, զիմով սրան էր խփում, նրան: Բայց որ մէկին յաղթէր: Չնայելով իր ուժին և քաջութեանը, նա օր օրի վրա ընկճում էր ու խեղճանում իր քթի պատճառով:

Վերջը, տեսնելով, որ նար չկայ ամենքի հետ կուելու, սկսեց ինքն էլ ծաղրել իր քթը: Կարծում էր, որ եթէ ինքը ծաղրէ, ուրիշները կը դադարեն ծաղրել: Բայց չեղաւ: Քանի նա խեղճանում էր, այնքան աշակերտները երես էին առնում:

Մի պատիկ տղայ կար Աղալօ անունով: Դա կատարեալ պատիժ էր Աւետի քթի համար:

Մի օր դասի ժամանակ Աղալօն թղթից մի կով շինեց, զլուխը թանաքով ներկեց և դրեց Աւետի քթի վրա: Յետոյ հանգիստ կերպով զլուխը թեքեց դասագրքին, իբր թէ դաս է սովորում:

Աւետը, ի հարկէ, իսկոյն կովը քթից դէն զցեց և բռունցքով մի լաւ զարկեց Աղալօի կողքին:

—Վայ մամա, —գոռաց Աղալօն և լաց եղաւ:

—Ի՞նչ պատահեց, —ասաց Տէր-Աւանէսը, որ այդ ժամանակ մի մեծ տանձ էր կազմում:

—Աւետը ինձ կոփեց, —գանգատւեց Աղալօն, հեկեկալով:

—Իժ, օձի զաւակ, ես քո քիթը ջարդեմ, —գոչեց Տէր-Աւանէսը, մօտենալով Աւետին: —Դէ եկ մէջ տեղ, եկ տեսնեմ:

Շատ բողոքեց խեղճ Աւետը, որ մեղաւորը Աղալօն է, ինձ էլ վկայ բերեց, ոչինչ չօգնեց:

Բանն այն է, որ տանձն Աղալօի հայրն էր ուղարկել Տէր-Աւանէսի հումար: Ինչպէս կարելի էր նրա որդուն ծեծել գոնէ այն օրը:

—Ֆալախկա բերէք, —հրամայեց Տէր-Աւանէսը: Ֆալախկան բերեցին: Այդ մի բաւական երկայն և հաստ փայտ էր: Նրա ծայրերից կապած էր մի կաշւէ ամուր թոկ:

—Պառկիր, —հրամայեց Տէր-Աւանէսը:

Աւետը պառկեց խոիրի վրա երեսն ի վեր:

—Ոտներդ բարձրացրու, —շարունակեց Տէր-Աւանէսը: —Այ, այդպէս: Հազցրէք ֆալախկան: Շուռ տւէք, այ այդպէս:

Երկու աշակերտ բռնեցին ֆալախկայի ծայրերը: Աւետի ոտներդ ցցւել էին օդի մէջ անշարժ: Պատառութած գուլպաների միշտ երկում էին նրա մատները:

Տէր-Աւանէսը, ճիպոտը տալով ինձ, հրամայեց:

— Զարկիր:

Ուղիղն ասած, ես խղճացի Աւետին: Ինչ մեղաւոր էր նա, որ

մեծ քիթ ունէր, Մի քանի անգամ ճիպոտը զարկեցի և կանգ առայ:

— Զարկիր, — հրամայեց Տէր-Աւանէսը, շարունակելով տանձն ուտել:

Մի քանի թոյլ հարւածներ ևս տալով, էլի կանգ առայ: Աւետը բառաշում էր հորթի պէս:

Նրա ստներն արդէն կարմրել, մատները ցցւել էին:

— Խեղճ է, — ասացի ես, — մեղաւոր չէ:

Տէր-Աւանէսը մի ապտակ տւեց ինձ, առաւ ճիպոտն և այնպէս զարկեց, որ խեղճ Աւետն ուշաթափւեց:

— Զուր բերէք, — հրամայեց Տէր-Աւանէսը:

Մի կուլա ջուր բերեցին, ածեցին Աւետի գլխին, ուշքի եկաւ: Վեր կացաւ և տնքտնքալով ու կաղէկաղ գնաց, նստեց իւր տեղը: Հետեւալ օրը նա ուսումնարան չեկաւ:

Երբորդ օրը եկաւ գոյնը թուած, լզարած և լուռ նստեց իւր տեղը: Նա ոչ մի խօսք չարտասանեց մինչև վերջը:

Աշակերտները փորձեցին դարձեալ սրախօսել նրա քթի վրա, ուշադրութիւն չդարձրեց: Ես մի քանի անգամ լսեցի նրա ծանր հաստաշանքները: Որքան էլ փոքը լինէի և միամիտ, հասկացայ, որ ընկերս տանջում է: Ես խղճացի նրան, կամեցայ կարեկցութիւնս արտայայտել: Բնացի նրա ծեռը և ամուր սեղմեցի:

Նա հասկացաւ, նայեց ինձ և բարեկամաբար ժպտաց:

— Ալէքսան, — դարձաւ նա ինձ, երբ փողոց գուրս եկանք: — Ես ուղում եմ քեզ հետ խօսել:

Նրա ձայնը դողում էր, դէմքը լուրջ էր:

— Ասա ինչ որ ուղում ես, — պատասխանեցի ես:

— Մէկէլօրը դու չէիր ուզում ոտներիս ճիպոտով խփել: Ես հասկացայ, որ խղճում ես ինձ: Շնորհակալ եմ: Դու լաւ տղայ ես, դու մեր հարևանն ես: Դու չես ծաղրում իմ քիթը: Զեւդ տուր, բարեկամներ ենք:

Ես զգացւած սեղմեցի Աւետի ձեռը: Այդ օրից Աւետն և ես դարձանք բարեկամներ: Ես կուռմ էի ամենքի հետ՝ ով ծաղրում էր նրա քիթը:

Անգրագետ

Սիրակոմիւս

Երբէք մէկին չեմ նախանձում ես աշխարհի երեսին, Միայն, գրագէտ դուք պարոններ, նախանձում եմ ձեր բախտին. Ա՛խ, գթացէք գեղջուկ որբիս, մի լաւութիւն միայն արէք— Տըւէք մի թերթ ինձ ձերմակ թուղթ, մի փետուրէ գրիչ աւէք:

Եւ ինձ գրել սովորցը էք, սովորցը լաւ, շուտով, Որ գրիչս կայծակից էլ արագ թոչի գրելով. Որ պատմելով թղթի վրա ես ձեզ ցոյց տամ ամեն բան՝ Մեր տառապանք, մեր չարչարանք ու արդիւնքն աշխատութեան:

Կը յայտնէի՝ ինչ ցնորքներ, ինչ մտքեր կան իմ գլխում, Մի ողջ աշխարհ ցոյց կըտայի ես աննման պատկերում... Բայց այժմ անհետ չըքանում են բոլոր իմ քաղցր երազներ. Ես անպապէտ, ես անուս եմ... Սովորցը էք, պարոններ:

Մեր նոր ուսուցիչը

Է. Գ. Ամիջիս

Մեր նոր ուսուցիչը ինձ շատ զուր եկաւ: Դեռ զասը չսկսած՝ նա նստած էր իր տեղը: Անցեալ տարւայ աշակերտներից շատերը մօտենում էին նրան և բարեսում, ուրիշները ներս էին մտնում դասարան, ձեռք էի տալիս նրան և փախչում: Երկում էր, որ սիրում էին ուսուցչին: Ուսուցիչը բարեսում էր նրանց և մասիսն պատուհանից դուրս նայում:

Դասի կիոին մեզ թելաղբութիւն անելիս, սկսեց դասարանում պտտել. յանկարծ նկատեց, որ աշակերտներից մէկի երեսը կարմըրած է. իսկոյն ընդհատեց թելաղբութիւնը, բռնեց տղայի կղակը, նայեց, ձեռքը ճակատին դրաւ իմանալու, թէ արդեօք տաքութիւն ունի:

Այդ միջոցին մի ուրիշ աշակերտ սկսեց ուսուցչի ետեսից ծամածութիւններ անել: Ուսուցիչը յանկարծ շուռ եկաւ, աղան իսկոյն տեղը նստեց և զիսակոր սղառում էր, թէ ինչ է մինելու:

— Միւս անգամ այդպիսի բաներ չանես, — ասաց մեր նոր ուսուցիչը, մօտեցաւ զրասեղանին և շաբունակեց թելադրել.

Թելադրութիւնը վերջացնելուց յետոյ, նա լուռ նայեց բոլորիս վրա, ապա հանդարտ, ուժեղ, բայց սիրավիր ձախով ասաց.

— Լսեցէք, տղայք: Այս տարի մենք միասին ենք անցկացնելու: Աշխատենք, որ լաւ անցնի. ձեր դասերը լաւ սովորեցէք և խելօք եղէք: Ես ընտանիք չունիմ, մայրս անցեալ տարի կենդանի էր, բայց վերջերս մեռաւ: Ես մենակ եմ և բացի ձեզնից ոչ ոք չունիմ այս աշխարհում. դուք էք իմ զաւակները, ես սիրում եմ ձեզ. ցոյց ուէք, որ լաւ և բարի տղաներ էք:

Այդ միջոցին զանգը տվին: Մենք լուռ դուրս էինք գալիս դասարանից: Չարութիւն անող աշակերտը մօտեցաւ ուսուցչին և դողդոշաւն ձախով ասաց.

— Պարո՞ն ուսուցիչ, ներեցէք ինձ:

Ուսուցիչը համբուրեց նրա ճակատը և ասաց.

— Դնա հանգիստ, որդեակ իմ:

Ակոփ-ապէրը

Մեր դպրոցին կից մի այգի կար. այստեղ թփերից շարան-շարան կախւած փայլում էին խաղողի հիւթալի ձութերը, կարմրաթուշ դեղձերը սլըսպրդում էիր ամեն կողմից:

Մենք երկար ժամանակ մտածում էինք, թէ ինչպէս օգտւենք այդու այդ պատուղներից: Վերջապէս գտանք միջոցը: Դպրոցի փայտանոցը գտնւում էր այգու կողքին և փոքրիկ մի բացւածք ունէր պարտէզի վրա: Մեր ընկերներից մէկը այգտեղից իշխում էր այգին, տօսլրակը լցնում խաղողով, դեղձերով և բերում փայտանոց, ուր ընկերներով ուտում էինք բերած պատուղները և լցնում գրալաններս:

Բայց երկար չակեց մեր այս քաջադործութիւնը, դպրոցի ծա-



Վ. Փափազեան

ռայ Ակոփ-ապէրը պատահաբար մի օր բաց արաւ մեր այդ գաղտնիքը:

Ակոփ-ապէրը միամիտ, բարեմիտ, դանդաղաշարժ և չափազանց քնկոտ ծերուակ էր: Կատակներ, խաղեր ու ծաղր՝ կարկուտի պէս տեղում էին նրա գլխին՝ աշակերտների կողմից. բայց դիմանում էր, լուռ ժապտում և երբէք չէր բարկանում:

Ահա այդ Ակոփ-ապէրն էր, որ մի օր վրա հասաւ մեղ այն ըսպէին, երբ վեց հոգի շարւած փայտանոցի մութ անկիւնի փայտերի վրա՝ խազող ու գեղձ էինք խժում:

Հէնց որ գէմ առ գէմ եկաւ մեզ, սասակի վախեցաւ: Նախ կարկամեց, յետոյ վիզն առաջ պարզեց, լուռ զննեց ամենքիս ու գոչեց.

— Եա... Էս ինչ ա...

Մենք էլ շատ էինք վախեցել: Վեր թուանք: Այդ միջոցին մեր ընկերը, որ այգու մէջն էր, երկի լաւ կշտացած, փէշի մէջն էլ դեղձ ու տանձ՝ երկաց լուսամուտից ու ներս ոստնեց:

Ակոփ-ապէրը ցնցւեց ու ետ փախաւ դէպի սանդուխքը: Կարծեցինք զնում էր վերակացուին կանչելու: Միմեանց զլիի վրայից ոստնելով առաջ նետւեցինք, ծերունուն հրեցինք, հրմշտեցինք, զրեթէ ցած զլորեցինք... ու նետւելով դէպի բակը, ցրւեցինք, անհետացանք:

Ազատւել էինք. մեղ այդպէս էր թւում: Բայց Ակոփ-ապէրը զնացել վերակացուին պատմել էր ամեն ինչ, մի առ մի էլ մեր անունները տւել:

Պատժւեցինք, փայտանոցը կողպւեց, այլիս պտուղի երես չը տեսանք, սակայն մտածեցինք ապէրից մեր զրէժը հանել. եթէ ոչ այօր, գոնէ վազը:

Վրէժիննդրութիւնով զբազւած՝ հնաբք էինք որոնում տանջելու, մի խոշոր վասու տալու Ակոփ-ապէրին:

Հնաբքը գտաւ այգին իջնողը նորից:

Ակոփ-ապէրը հեռաւոր զիւղերից եկած՝ միայնակ մի ծերունի էր, որ ապրում էր գալրոցում: Տւել էին նրան մի խուց, ուր կար նրա անկողինը, մի ճրագ, մի կուժ, մի քանի ամանեղէն: Դուռը փակել չէր էլ մտածում. դողացւելուց վախ չունէր:

Մի օր, երբ ծերունուն դպրոցից գուրս գործի էին ուղարկել
մտանք նրա խուցը, մի առ մի գուրս բերինք ինչ որ կար այնտեղ.
նոյն իսկ աթոռակնու կուժը. ամեն, ամեն ինչ, և աարանք թագ-
ցը զանազան տեղեր. Ամանները ջարդ ու փշուր արինք:

Խուցը բոլորովին գատարկւեց: Մնաց լերկ փայտէ մահճակալն
ու սեղանը միայն: Ոչ իսկ աւելը թողինք:

Գոհ մեր արածովը, դասերից յետոյ առւն գնացինք: Ոչ մէկին
չպատմեցի մեր արածը և ամբողջ գիշեր մտածում էի, թէ ար-
դեօք Ակոփ-ապէրը ինչպէս պիտի ապշէր, երբ ներս մտնէր խուցը.
յետոյ պիտի շւարած նստէր և գուցէ... գուցէ լաց լինէր:

Իսկ գիշերը: Ո՞րտեղ, ինչի մէջ պիտի քնէր: Զէ որ ես ահա
անկողնիս մէջ, վերմակում փաթաթւած պառկել եմ, բարձ էլ ու-
նեմ, ներքնակ էլ, իսկ նա ոչինչ չունի: Սկսեցի սաստիկ անհան-
դիս՝ շուռ գալ անկողնիս մէջ. քիչ էր մտում լայի: Ի՞նչ անպի-
տանութիւն էր մեր արածը: Միթէ խեղճ չէր: Զէ որ իմ փոքրիկ
շան համար իսկ այս երեկոյ տեղ էի պատրաստել փայտանոցում,
քուրձեր զրել, որ չմրսէր դրսում փչող աշնանային քամուց...
իսկ այնտեղ ի՞նչ էի արել... Կողոպտել էի մի ծերունու, թողել
այդ քամուն առանց անկողնի, առանց թէյի, առանց ճրագի...

—Հայրիկ...

—Ի՞նչ կայ, զաւակս...

Հայրս նստած՝ կարդում էր: Զարմացաւ, որ դեռ չէի քնել, չը
նայելով որ վաղուց ի վեր պառկած էի:

—Հայրիկ, Ակոփ-ապէրը մեղք չէ...

—Ի՞նչ Ակոփ-ապէր է դա.—աւելի զարմացաւ հայրս, թողեց
կերը և մոտեցաւ անկողնիս:

Կոկորդս գառնացել էր: Հենց որ հայրս իր ձեռքը դրեց զլիիս,
այլևս դիմանալ չկարողացայ: Լացի:

—Ի՞նչ է եղել, ի՞նչու ես լավիս... Գլուխդ է ցաւում:

—Ոչ, հայրիկ... Սյաօր մենք մի վատ, շատ վատ բան արինք
դպրոցում:

—Վատ բան... Պատմիր, ի՞նչ էք արել:

—Ակոփ-ապէրին, ծառային կողոպտեցինք... ի՞նչ ունէր. չու-
նէր՝ թագցըրինք... Այժմ նա ոչ անկողին ունի, որ պառկի, ոչ ճը-
ցնացտ...

Հայրս դէմքը կնճռեց:

—Պատմմիր ամեն ինչ, պատմմիր... ինչու այդպէս արիք, ի՞նչ
էր արել ձեզ խեղճ ծերունին:

Մատնեց մեղ:

—Մատնեց... Բայց պատմմիր բալորը:

Ու ես պատմեցի: Լացի և պատմեցի ամեն բան:

Միւս առաւօտ դպրոց մտնելիս՝ առաջին լուրը, որ լսեցինք՝
այն էր, թէ Ակոփ-ապէրի խուցը կողոպտւել էր երէկ: Կարծում
էին թէ գողեր են մտել:

Տեսանք իրեն ծերունուն՝ նստած խուցի առաջ, արտասուքն
աչքերին, շւարած և անշարժ:

Այնպէս խղճալի դէմք ունէր, այնքան յուզիչ, որ դիմանալ չը
կարողացանք: Ճիշտ է, գիշերը նա քնել էր վանահօր ծառայի խու-
ցում, ընթրել էր այնտեղ, բայց խօ այդ միշտ չէր կարող լինել:

Եւ դաւագիրներս տիսուր, միմեանց մօտ եկանք դաստմիջոցին,
հաւաքւեցին մի ծառի տակ:

—Տղէրք, ասաց յանկարծ վրէժ մտածողը, մեր արածը ան-
պիտան բան էր: Սկսած պտուղ գողանալուց մինչև այս վերջին
մեր վաքմունքը՝ չարագործութիւն էր... Ուղենք մեր սխալը:

—Ի՞նչպէս, ձայնեցինք ամենք:

Ըստ երեսյթին, ինձ նման բոլորն էլ տանջւել էին և այժմ
խղճահարւում էին:

—Շատ պարզ է. նախ՝ բոլոր թագցրած բաները հանենք և
աեղք դնենք:

—Իսկ յետո՞յ...

—Յետոյ՝ պիտի կոտրած բաները մեր փողովն առնենք ու
տանք Ակոփ-ապէրին:

—Փող նվ էր տայ մեղ:

—Բաժանենք մեղ վրա, ասացի ես, հայրիկիս ես պատմել եմ
մեր արածը. նա խոստացաւ փող տալ, եթէ մենք վճռենք ուզզել
մեր սխալը:

—Ուրեմն ես էլ կը պատմեմ:

—Ես էլ:

—Ես էլ...

Վճռւած էր: Պէտք էր տեսնել, թէ ինչպէս խսկոյն զւարթացանք մենք, ինչպիսի ողերութեամբ սկսեցինք որոնել թաղըրած իրերը, խուցը տանել, լաւ սարքել այնտեղ, տեղաւորել:

Սկսփ-ապէրը մեր գործի կէս տեղին վրա հասաւ և ապշութեամբ կանգ տռաւ խուցի դռան առաջ:

— Եա... արաւ նա միայն ու մնաց անշարժ:

— Ոչինչ, ապէր,—կանչեց մեղնից մէկը. դու սկի դարդ մի անի. այ, բոլորը կը բերենք, կոտրածների փողն էլ կը տանք, որ առնես...

— Մենք էինք արել բոլորը, — աւելացրեց մի երկորդը. — հանաք էինք արել, մի նեղանալ, ապէր. ես քեզ համար մի լաւ կուժ կը բերեմ:

— Ես էլ ջրածիկ.

— Ես էլ... ես էլ ափսէներ...

— Իսկ ես, ասում էր մէկը. Ես ինչ բերեմ:

Ծերունին ժպտուն՝ արտասւում էր: Սաստիկ յուղւել էր: Եւ երբ ամեն ինչ տեղաւորել էինք, յանկարծ բոնեց մեղնից մէկին ու մինչզեռ նա վախից ձչում էր, ասաց.

— Ոչինչ, մի վախենալ, բալոս... սպասիր մէկ համբուրեմ քեզ...

Եւ արտասւախառն՝ համբուրեց նրան, յետոյ բաց թողեց, դարձաւ ամենքիս ու ասաց.

— Աստւած պահի ձեզ, տղէրք...

Միւս օրը զանազան իրերով լցրինք խուցը:

Ոչ միայն կուժ, այլև թէյ, շաքար, մոմ ու բաժակներ էլ էինք բերել:

Ծերունին զւարթ, ժպտուն՝ տեսաւ այդ ամենը, յետոյ թողեց, որ տեղաւորենք ու ինքը ուղղակի գնաց գպրոցի տեսչի մօտ:

Դասերը վերջանալուց յետոյ, տեսուչը մեզ կանչեց իր սենեակը: Երբ հաւաքւել էինք, երկար նայեց ամենքիս, ապա մօտեցաւ, ձեռքը դրեց առաջինի ուսին և ասաց.

— Ապրիք, տղէրք... Այժմ տուն դնացէք. այլևս ասելիք չունիմ ձեզ...

Յետոյ ժպտաց ու զլխով արեց:

ՀԱՍՏՐԱԿԱԿԱՆ ԿԵԱՆՔ

Դատաստանը

1.


Փոքը էի, հազիւ տասներեք տարեկան, բայց լաւ յիշում եմ, որ այն երեկոյ հայրս զայրացած տուն վերադաւ այգուց: Փոքրիկ հորթին պարանից քաշ տալով ետևից և կանաչ, թարմ խռափ մի կոյտ թեփ տակ՝ նա բակը մտաւ խորհրդաւոր լուսիթեամբ:

Կասկած չկար, որ նա զայրացած էր. իսկ երբ նա զայրացած էր, նշանակում էր, թէ տասնեցիներից մէկն ու մէկը յանցանք էր գործել:

— Կապիք հորթը, Սարգիս, — հրամայեց նա ինձ խստութեամբ:

Ես մօտեցայ, հորթի պարանն առայ նրա ձեռքից և սկսեցի կապել:

Հայրս խոտը ցած դրեց, մօտեցաւ սրահի թմբին ու նստեց, փայտն ու զլխարկը դնելով կողքին: Մայրս կովկիթն էր լւանում, սպասելով կովերին, կթելու համար: Ես աչք չէի հեռացնում հօրիցս. նա անեանգիստ էր. մի քանի անգամ ձակատը շփեց ու դարձաւ մեծ քրոջս.



Ա.Ահարոնեան

—Աղջի, Թորոսն այս առաւօտ կովերը ո՞ր կողմով դաշտ տարաւ. այգու կողմանվ, թէ նախրի ճանապարհով:

—Զգիտեմ, հայրիկ. առաւօտը երբ քաղահանի էինք գնում, նա մեզանից առաջ քշեց, գիւղից դուրս եկաւ, նրան չհասանք:

—Այդու կողմից, ի հարկէ. նա միշտ այն կողմից է տանում, բացականչեցի ես, հէնց այնպէս, առանց մտածելու, թէ իմ ասածը որևէ բանի կարող էր ծառայել:

—Են է, ուրիշ ով կարող է լինել. նզովից արմատ, միշտ նա, — մրմուց հայրս ու լռեց:

Թորոսը իմ խորթ եղայրն էր, հօրս առաջին ամուսնութիւնից ֆացած միակ տղան: Ես և քոյքերս մեր ամենափոքր հասակից տեսել էինք նրան միշտ լուսկեաց, մույլ, մտածելու ու յամառ:

Հայրս չէր սիրում նրան, որովհետեւ նա յամառ էր ու միշտ մույլ և երբէք հօրս երեախն ուղիղ չէր նայի: «Կախ զլուխ» տղայ է, մանկութիւնից այդպէս էր, ասում էր նա առանձին ցաւով, աւելացնելով որ «կախ զլուխ» մարդիկ միշտ կասկածելի են:

Թորոսն ամբողջ որը դաշտումն էր լինում, մեր տաւարի ետելց: Երբ երեկոյեան տուն էր գալիս և հայրս սկսում էր նրան յանդիմանել նրա որևէ յանցանքի համար, որի հեղինակը սովորաբար ես էի կամ քոյքերիցս մէկը, նա առանց նայելու մօտենում էր հացի տաշտին, մի հաց վերցնում, փաթաթում թևի տակ և լռութեամբ դուրս գալիս, Թողնելով որ հայրս շարունակի իր անէծքը, գանգատն ու տրատնչները:

Կովերը դաշտից վերադարձան: Թորոսն էլ նրանց ետելց ներս մտաւ գնից, ինչպէս միշտ, զլուխը քաշ, դէմքն արեառ, յոզնած ու մույլ: Նա կովերը ներս քշեց գոմը, թողնելով բակում նրանց, որնք պիտի կթւէին: Ապա ձեռնափայտը զբեց մի անկիւնում, նստեց իր սովորական տեղը, սրահի մի հատիկ աստիճանի վրա և սկսեց արեխների միջից թափ տալ աւազի հատիկները և դուլպաների վրայից՝ փշերը:

Մայրս կովերն էր կթում, քոյքերս օդնում էին նրան:

—Թորոս, — յանկարծ լուեց հօրս ձայնը:

—Հը, եղաւ պատասխանը:

—«Հը» կատի... չնո ու ցաւ. հրամմէ էլ չի կարողանում ամել: Սյս առաւօտ տաւարը որ կողմով տարար դաշտ. — հօրս ձայնը

դոզգոզում էր, նա վրդովմունքից ասես խեղդւում էր. ես նրան երբէք այդ աստիճանն բարկացած չէի տեսել. վախեցայ ու կծկւեցի:

Թորոսի փոյթը չէր. նա լուռ էր:

—Լեզուդ պապանձւի, խօսիք էէ. այդին մաել ես:

Թորոսը շարունակում էր լութեամբ թափ տալ արեխները:

—Սարգիս, — դարձաւ ինձ հայրս. — զնա այն իմ բերած խոտը քանդի, մէջը բան կայ, բեր այստեղ:

2

Ես մօտեցայ, խոտը բաց արի և միջից հանեցի խաղողի որթի մի մեծ ճիւղ, վրան մի քանի կիսահամ ոզկոյզներ: Ձեռք առայ և քարացայ տեղումս... Սյն ես էի կոարել. ոչ այսօր, այլ երէկ կոարել էի ու լռել. ողկոյզը քաշքշեցի, ճիւղը կոարենց և ես փախաց: Հայրս այս երեկոյ էր գտել ու կարծում էր թէ առաւօտեան է կոարւած:

Յանցանքը կրկնակի էր. նախ կոարւած էր այդ հագւագիւտ որթը, որ հօրս առանձին խնամքի առարկան էր, որովհետեւ հեռու տեղից էր բերել լռել և շուտ համնող, մեծ գեղին ողկոյզներ ունէր և նրանից պատրաստւած գինին համնում էր Աստւածածնի տօնի պատրաստին, երբ խաղող են օրէնում. և երկրորդ՝ որթը կոարողը կերել էր և խաղողը, մինչդեռ Աստւածածնի տօնը դեռ հեռու էր, շխաղողն օրէնուած» չէր, հետեւապէս՝ պառ էր:

Թորոսը աչքի տակով նայեց իմ ձեռքի ճիւղին, նայեց ինձ ու դուխը կախ քոշ ձգեց, լռեց: Ես էլ քարացել էի իմ տեղում և զուխո վեր բարձրացնել չէի համարձակում. իմ դատաստանն էր կատարում և ոչ Թորոսի:

—Ասա, — շարունակեց հայրս աւելի և աւելի տաքացած, — Աստւած նզովի քեզ, մգ է տեսել, որ հայ քրիստոնեան Աստւածունքնից երկու շաբաթ տաշջ խաղող ուտի. հարամ է, չէ. նայի՞՛ ինչ ես արել. թնդ ձեռքդ կոարւէր դրա փոխարէն:

Մայրս մէջ մտաւ:

—Ի՞նչ ես այդքան տաքացել, անաշէնի մարդ. գէ բան է, պատահել է. գուցէ Թորոսը չի, գոզ է մտել. խօ դիտես, գոզերը քաղցած գէլերի պէս չղերն ընկած աւերմունք են անում:

—Խելքիդ ինչ ասեմ, ա կնիկ, գոզը մի ճութ խաղողի համար այզի չի մտնի, բոլոր թմբերը պէտք է ոտի տակ տոր, մասիկ մտ-



Բայց կայ դատաւոր վրէժինդրութեան,
 նա ամենքին կանէ դատաստան:
 —Ալս՝, ուր էր, ուր էր, թէ այդպէս լինէք
 Զարագործներին խստութեամբ պատժէր.
 Հազիւ հառաչեց աղաւնին մարած:
 Սուր-ոուր ճանկերում սաստիկ սղմւած:
 —Ինչպէս, ինչպէս, այդ ինչ ասացիր,
 Ա՛խ, դու ուրացող, մի մէկ էլ կրկնիր.
 Դու չես հաւատում հա, արդար դատին,
 Մարդկանց կառավարող այդ հզօր ուժին:
 Է՞հ, ուզում էի աղաւել ես քեզ,
 Բայց, չէ, տեսնում եմ, դու արժանի չես,
 Ուրեմն մեռիր, զաւը է փրկութիւն,
 Անհաւատներին չըկայ թողութիւն:

Օրէնք և դատաստան

Արհօլք Ֆօրստ

1. Բոլոր լուսաւորւած երկրներում կան դատարաններ և դատատրներ: Դատաւորները քննում են մարդկանց մէջ եղած վէճերը և դատում ու պատժում են մեղաւորներին:
2. Միմիայն անկիրթ և վայրենի ժողովուրդները դատաւորներ չունին. Նրանց մէջ արդարը նա է, ով ուժեղ է. ուժեղը կարող է զրկել թոյլերին և նրանցից խլել ամեն ինչ:
3. Առանց երկար մտածելու կարելի է համոգւել, որ այդպիսի երկի վրա խաղաղութիւն ու հանգստութիւն չի լինի. Թոյլերն ու ուժեղները իրար մեծամեծ վնասներ կտան:
4. Նսինը կարելի է առել նաև մեղաւորներին պատժելու մասին. Հին ժամանակները, ինչպէս էլ հիմա շատ երկրներում, երբ մէկը սպանում էր մի ուրիշ մարդու, սպանւածի ազգականներն ու բարեկամները զէնք վերցնելով յարձակում էին սպանողի վրա և ամեն կերպ աշխատում էին նրան էլ սպանել: Սպանողի ազգականներն էլ պաշտպանում էին սպանողին. շատ անդամ այնպէս էր պատահում, որ մարդասպանի ողբականներն աւելի զօրեղ էին դաւր գտնիս և վասներ էին տալիս արդար կողմին:

5. Այն ժամանակ մարդիկ մոռանում էին երկու կանոն.
- Առաջին. «Ոչ ոք իւր սեփական գործի մէջ դատաւոր լինել չի կարող»:
- Երկրորդ. «Ոչ ոք իւր ծեղողվ դատաստան կտրելու իրաւոնք չունի»:
6. Ամեն մի լուսաւորւած երկրում աշխատում են, որ այդ երկու կանոնները պահւեն, զրա համար էլ կան առանձին մարդիկ, որոնք լուսում, քննում են բոլոր վէճերը և պատժում յանցաւորներին: Այդ մարդիկ դատաւոր են կոչւում:
7. Դատաւորները նոր օրէնքներ չեն հրատարակում, օրէնք հրատարակել կարող է միմիայն պարլամենտը: Դատաւորների պաշտօնն է որոշել, թէ պարլամենտի տաւած օրէնքները պահւում և կատարուած են:
8. Բացի այդ, դատաւորներն որոշում են, թէ ինչ պատիք պէտք է տալ մեզաւորին: Բայց չկարծէք, թէ դատաւորը կարող է իր ուզած պատիքը տալ, նա ամեն մի յանցանքի համար պէտք է տյն պատիքը տայ, ինչ գրւած է օրէնսդրի մէջ:
9. Առա և մի քանի գլխաւոր կանոններ դատաւորների և ժողովրդի համար.
1. Օրէնքի առաջ ամենքը հաւասար են:
2. Ոչ ոքի չի կարելի ազատութիւնից զրկել, եթէ նրա յանցանքը չի հաստատած:
3. Ոչ ոքի չի կարելի մինոյն գործի համար երկու անգամ դատել:
4. Բոլոր դատարանները ժողովրդի առջև բաց են:
5. Ոչ ոք իւր սեփական գործի մէջ դատաւոր լինել չի կարող:
6. Ոչ ոք իւր ծեղողվ դատաստան կտրելու իրաւոնք չունի:

Գայլն ու գառը

Ար. Խնկոյեան

Մի ամլիկ գառ

Իրեն համար

Զուր էր խմում առւակից.

Մէկ էլ գէմի ձօրսկից

Դայլն է կարում վերկը, Ան ովհամ զայլ
Շնորհին տալով էս ձեզ.

—Ես ինչ պրութիւն,

Ի՞նչ յանդգնութիւն, զան խանոսի մի և
Այ դու վախքոս, ու ոչ ու չեղանակ
Ոչխարի լակոտ.

Դու ինչի տէր եպ, ու ոչ ու չեղանակ
Որ դաս դնչովդ,

Քթով-պնչովդ, ծաղաւառոյ զն մնեն և
Նուրս պղտորես:

Բննեմ զունչդ, որոց մն նաևն և ուսոյ զնոց
Կարի շունչդ, մն զրասար յարդուն ու մն

«Մի բարկանար, պարոն դայլ, ու ուսուզառուն և
Քեզնից ցած եմ քանի քայլ, որոց թխարակոց

Էնպէս բան են տառում որ...

«Սնտու եմ առում, այ լզպոր, որոց զնայ և
Եղ էլ չըլնի հերւանը, ու ուսուզառուն ու ու զնայ

Չեմ մոռացել էն բանը, ու ու զնայար նորու զն և
Որ հենց էստեղ, նոյն օրը, ու ու զնայար հետ և
Հայնոյեցիր իմ հօրը:

—Մի տարեկան գեռ չըկամ... զնայ զն և ու ու և
«Է՛հ, եղայրդ էր, անզգամայ խոս հցան»

—Ես մի ծին եմ, մինուճար, ու ու զն և և
—Խնամիդ էր անպատկառ, ու ու զն և և
Կամ մէկը ձեր պիղծ ցեղից, ու ու զն և և

Ել ժաժ չը դաս ըս տեղից, ու ու զն և և
Զեր չերի, ու ու զն և և

Հովիւների ու ու զն և և

Ոիը քեզնից ես հանեմ,

Տես, վուխդ ինչ բերեմ:

Սաւ, հասած գտանը,

Սուս, թուս անտառը:

Նարեկի նժոյգը

Արար Նարեկը մի այսպիսի հազւագիւտ և գեղեցիկ նժոյգ ու-
նէր, որ ամենքը նախանձում էին նրա տիրութը: Մի արար ուրիշ
ցեղից, անունը Դագեր, կամենում էր ձեռք բերել այդ նժոյգը

Իզուր էր նա առաջարկում Նարեկին նժոյգի փոխարէն ուղաեր ու
գանձեր, Նարեկը ոչ մի կերպ չէր համաձայնում տալ իր սիրելի
նժոյգը:

Այս ժամանակ Դագերը խորամանկութեան զիմեց: Մի օր իր
երեսը խոտի հիւթով ներկեց, ցնցոտիներ հագաւ, վիզն ու ուները
փաթթեց իրեն մի ցաւագար մուրացկան, ու զնաց նստեց մեծ
ճանապարհի վրա, որով պիտի անցէր Նարեկը: Երբ Նարեկը մօ-
տեցաւ Դագերին, Դագերն ասաց նւաղած ձայնով.

—Ես մի աղքատ օտարական եմ: Երեք օր է, որ այստեղ նըս-
տած եմ ու չեմ կարողանում տեղից շարժել, որ գնամ մի կտոր
հաց ճարեմ: Ցաւից մեռնում եմ, օդնիր ինձ:

Նարեկն առաջարկեց ծպտեալ աղքատին նստել իր ձիու քա-
մակին և միասին գնալ իրենց տուն: Բայց խարերն պատասխա-
նեց.

—Ես չեմ կարող ոտքի կանգնել, ուժ շունիմ: Գթայրա Նա-
րեկը ձիուց վայր թուաւ, մօտեցրեց ձին Դագերին և մեծ գժւա-
րութեամբ նստեցրեց նրան ձիու վրա: Երբ Դագերն իրեն թամքի
վրա զգաց, զարկեց նժոյգին ասպանդակներով և առաջ սլացաւ,
ասելով.

—Այս ես եմ, Դագերը. ահա վերցնում եմ նժոյգի և տանում
եմ իմ տուն:

Նարեկը ետեից կանչեց, որ գոնէ իր մի խօսքը լսէ: Դագերը
համոզւած էր, որ ոչ ոք իրեն չի հասնիլ, ուստի շուռ տւեց ձիու
զլուխն ու կանգ առաւ Նարեկից բաւականին հեռու, որովհետեւ
նրա ձեռքին նիզակ կար:

Նարեկն ասաց.

—Դու իւլեցիր իմ նժոյգը. եթէ այդպէս է Ալլահի կամքը,
կարեքի ժամանակ կարող է օգնութիւն խնդրել, և կըկասկածեն՝
շինի թէ խարում է: Ես կը լինիմ պատճառը, որ մարդիկ միմիանց

ոչ մի բարութիւն չանեն, որովհետեւ ամենքն էլ կըվախենան ինձ
պէս խարւելուց:

Դագերն այս խօսքերից տպած մտածմունքի մէջ ընկաւ. յե-

առյ իջու ձիուց և ասաց.

— Ես մոլորւեցի, որովհետեւ նախանձը կուրացրել էր ինձ, զու ինձ ճշմարտութեան ճանապարհը յոյց տիր, ներիք ինձ:

Եւ նա զրկեց Նարէկին ու վերադարձրեց նրան նժոյդը: Սրա-
նէց յետոյ Դագերը ճանապարհ ձգեց Նարէկին մինչև նրա վրանը
և մաց նրա մօս երեք օր ու եղբայրացաւ նրա հետ:

Խոզի ու ազուար

Արք. Խնկոյեան

Մի դարեւոր կազմու տակ
Խոզը ագահ ու անյագ
Հնաքան կաղին զխուեց,
Որ ցած ընկաւ ու փափեց:
Զարթնեց քնից ու տակից
Շառը փորեց արմատից:

— Ի՞նչ ես անում, այ անդէտ,
Կը չորանայ արեկից,
Ադաւն ասաւ վերեկից:
— Չորանում է՝ չորանայ,

Ինձ ի՞նչ օգուտ՝ զօրանայ,
Միայն կաղին ունենամ,
Ուաեմ, պաւկեմ, զիրանամ:
— Այ ապերախտ կենդանի,
Ով քեզ նման վիզ ունի,
Իր կոյր աչքով չի տեսնի,
Որ կաղինը հիւթալի
Լոկ այս ծառն է ձեզ տալի.
Ազաւն առաւ խոզուկին,
Այն կախ զլուխ կուզիկին:

Վաւավար

— Եյ, նաւավար, ի՞նչ ես անում,
Տւր ես նստում դու նաւակ.
ու ամպեր են, տես, բարձրանում
դէպի երկինք կապուտակ:

Հորիզոնն է մութով պատաճ՝
նեռուում ամպն է որոտում:
նայի, ծովաչել կամաց-կամաց
պարզ երեսն է կը հնուում:

Եհ, ապա ջան, դարդ մի արա,
ծովափին եմ ես ծընուել.



Արք. Խնկոյեան

մեծացել եմ ծովի վըրա,

ծովի բերքովն եմ սընւել:

Մանուկ օրից շատ եմ տեսել
և փօթորիկ, և աղէտ.

ծովն է ինձ միշտ օրօր տաել,
նոր չեմ ծանօթ ծովի հետ:

Հայր ունէի, ծովում կորաւ՝

որոի ելած մութ գիշեր.

և զբայրներիս ծովը տարաւ,

ձեկնորս էին անվեհեր:

Կեանքը լաւ է... բայց ինչ արած...
համ էլ մահից ինչ փախչեմ.

ծովն է տալիս մեզ կեանք ու հաց,
ծովի տակն էլ կը հանգչեմ...»

Պատիկ նաւաստին

Կ. Ստանիսլավիչ

I

Փոթորիկը մի փոքր հանգստացել էր: Հերթապահ նաւաստինե-
րը հաւաքւել էին քամուց պաշտպանւած մի անկիւն և հանգիստ
զբոյց էին անում: Դրանց մէջն էր նաև «Պատիկ նաւաստին»: Նրա
խկական անունը կուշկին էր, բայց բոլորը Պատիկ նաւաստի էին
ասում, որովհետեւ երբ մի անդամ աւագ նաւաստին հարցըն էր,
թէ ով ես, նա փոխանակ ասելու նաւաստի կուշկին, միամտօրէն պա-
տասխանել էր. «Պատիկ նաւաստի», Եւ ճիշտ որ անունը երեն սա-
զում էր:

Նա մի կարճահասակ, լղար, թխաղէմ երիտասարդ էր, քան-
երեք տարեկան, կենսուրախ և բարի գէմքով: Նա ման էր գալիս արտգ-
արագ և սիրում էր կոկ ու վայելուց հագնւել: Նրա բոլոր շարժում-
ները գուրեկան էին և ամենքը, նրան նայելիս, ժամանակ էին:

Յանկարծ դիտարանից լսեց հերթապահի ձայնը.

— Ոռաջ նայեցէք:

— Ի՞նչ է զուը տեղը կոկորդը պատում, — նկատեց նաւաստի-
ներից մէկը:

— Գուցէ զուը չէ, ասաց Պատիկը:

— Եթէ վախենում է մի ուրիշ նաւի հանդիպելուց, մին-
չոյն է, ոչինչ չի երեւմ. բայց սոսկալի գիշեր է:

— Հերթապահն էլ հենց դրանից է վախենում... առաջ գնալու
հայր չկայ, ասաց Պատիկ նաւաստին:

— Ինչո՞ւ...

— Որովհետև չպիտենք, թէ փոթոքիկը ուր է բերել մեղ։ Է՞ն, եղբայրներ, ծովի գրա միշտ պէտք է պատրաստ լինել, —ասաց Պրատիկը, շուռ եկաւ և սկսեց նայել ովկեանուին։

Նա շարունակ նայում էր. յանկարծ անբնական ու բարձր ձայնով ձշաց.

— Խութեր, խութեր։

— Կանգնեցնել նաւը, —անհանգիսու ձայնով հրամայեց հերթապահ պաշաօնեան։

Նաւը վայրկենապէս կանգնեց, խրւեց ժայռերի մէջ և, թակարդն ընկած թռչունի պէս, սկսեց թըրպըրտալ։

II

Նաւապեաը քնած էր. նա իսկոյն արթնացաւ և մի բոպէից յետոյ դիտարանի վրա էր. Բոլորն էլ արագ հագնւելով՝ վերև վազեցին։

Նաւն ուժգնութեամբ դիպչում էր քարերին։ Մեքենան գործում էր, որքան ուժ ունէր, բայց չէր կարողանում նաւը տեղից շարժել, նա սաստիկ խրւել էր։

Սոսկալի գրութիւն էր. փշում էր ուժել քամի, շուրջն էլ անտանելի մութն էր։

Տասը բոպէից յետոյ իմաց տւին, որ ջուրը ճեղքով նաւն է թւում. բոլոր հարները գործ դրին, բայց ջուրը հետզիետէ աւելանում էր. Դրութիւնը ծանր էր. ազատւելու ոչ մի հնար չկար, ոչ ոքից օգնութիւն սպասել չէր կարելի։ Ամեն ինչ ներքեից բարձրացըրին ստաստակամած։ Նաւն ազատւելու մասին էլ ոչ չէր մտածում։

Բայց գիշերով և այն էլ սոսկալի ալեկոծութեան միջոցին մակոյիներով հեռանալը՝ անմտութիւն էր, պէտք էր սպասել լուսաբացին։

Վերջապէս արևելքը սպիտակեց և հարիւրաւը սրտերից դուրս թռած «ուսան» թնդաց ովկեանոսում։

Նաւից յիսուն սամէն հեռաւորութեան վրա երկաց բարձր և ուղղաձիգ ափը։ Շուտով ուրախութիւնը յուստատութեան փոխւեց. Բամին չէր հանգարաւում և ալիքներն ահեղ մոնշիւնով դարկում էին ափին։

Մօտիկ ափն անհասանելի էր թւում, մաէն անխուսափելի։ Ափն էին հաւաքւել մի խումբ արտօներ, բայց ի՞նչ կարող էին այդ արաբներն անելը, կամ ինչո՞վ օգնել։

III

Լուսացաւ։

Մութ ամպերը պատել էին երկինքը։ Քամին չէր հանդարտում. ալիքներն առաջւայ պէս ահազին էին։ Նաւո երբեմն ճօճւում էր հարւածներից, բայց դեռ ջրի երեսին էր մուռմ։ Նաւապետը պաղարիւնութեամբ շրջում էր ամեն կողմ և ոգեորում նաւաստիներին։

— Թէ տղէրք, մի վախենաք, քամին շուտով կըդադարի, և նամակներով ափ գուրս կը զանք։

Նաւապետն դառնալով հերթապահին՝ ասաց։

— Եթէ հսարաւոր լինէր պարանի ծայրն ափ հասցնել և այնտեղ ամրացնել, դա միակ փրկութիւնը կը լինէր։ Բայց իսկապէս չի կարելի. մակոյին իսկոյն ջրով կը լցի, քամին չի դադարում։

— Գուցէ հսարաւոր լինի լողալով։

— Լողալով։ Բայց ով սիրտ կանի. Եթէ նոյն իսկ մէկը հրաշքով համնի լողալով, ափի քարերին կըդիպչի ու կըջարդվի... Բայց և այնպէս, պէտք է փորձել... Եթէ արաբները պարանի ծայրը բռնեն, մենք փրկւած ենք։ Հրամայեցէք, որ նաւաստիները հաւաքւեն։

Երբ բոլորը շարքով կանգնեցին, նաւապետը մօտեցաւ և բացարելով իր միտքը, ձայն տւեց։

— Թէ, տղէրք, կայ արգեօք ձեր մէջ մէկը, որ ուղում է մեզ բոլորիս սպատել. Եթէ կայ, թող այս կողմ կանգնի։

Ոչ ոք չշարժւեց. բոլորը ստուգով նայում էին փրփրած ալիքներին։

Միայն Պատիկ նաւաստին դուրս եկաւ շարքից, համարձակ մօտեցաւ նաւապետին և քաշւելով ու կարմրելով տաց։

— Ես եմ կամենում, պարոն նաւապետ։

— Դու, — զարմացած բացականչեց նաւապետը։

— Այս, պարոն նաւապետ։

— Ի՞նչ քո բանն է, դու իսկոյն կըդիպւես։

— Անհոգ եղէք, պարոն նաւապետ, ես սովոր եմ ջրին. լողալ գիտեմ։

— Լաւ ես լսում:
 — Քաւականին լու:
 — Բայց գու հասկանմամ ես, թէ ինչ ես անում:
 — Հասկանում եմ, պարան նուազեմ:
 — Բայց և այնպէս կամենմամ ես:
 — Ընկերներին համար ինչպէս չաշխատեմ:
 — Եթէ պարանի ծայրն ափ հասցնես, դու մեր փրկիչը կը դառնաս... Աստւած քեզ հետ: Բոլորի կողմից շնորհակալութիւն եմ յայտնում քեզ,—ասաց նուազեալ յուզւած:

Պատիկ նաւասածին արագութեամբ մերկացաւ, կոսպեց խցանէ գոտին և պարանի ծայրը փաթաթեց մէջքին:

Երբ պատրաստ էր, խոնարհութեամբ գոտւմ աւեց ամենքին և դոդողացող ձայնով ասաց:

— Մնաք բարե, եղբայրներ:

— Գնաս բարե, Պատիկ:

Բոլորը նայում էին նրան իրեւ մի զոհի: Նա խաչակնքեց երեսը և նետւց ալիքների մէջ:

IV.

Բոլորի աչքերն ուղղւած էին դէպի անվախ լողորդը: Նրա պատիւ ու կէտի նման երբեմն երեսում էր ալիքների միջից, երբեմն անհետանում:

— Կեցցես, լու է լողում, —ասում էր ինքն իրեն նաւազեալ, աչքը չհետացնելով լողորդից:

Ճիշտ որ Պատիկը լու էր լողում... Արգէն մօտ է, մի քանի շարժում ես, և ահա ափ կը հասնի: Արաբները ինչ որ բան են ազաղակում նրան, դէպի աջ ցոյց տալով, բայց նա ոչինչ չի հառկանում: Յանկարծ մի ալիք ուժով վերցրեց նրան և խփեց ծովեղքեայ մի սուր քարի... Սասկալի ցաւն ու թուլութիւնը իսկոյն յազմեցին նրան և մթագնած աշքերով պարանի ծայրը միայն կարողացաւ ցոյց տալ մօտ վազող արաբներին:

Արաբները դուրս քաշեցին Պատիկի գիտեց և սկսեցին պարանը ձգել:

Կէտ ժամից յետոյ պարանի ծայրն ամուր կապած էր մի ժայռի: Նուի վրա եղաղ մարգիկ սկսեցին նրա օգնութեամբ ափ դուրս գոյ:

Երբ բոլորն ափ ելան, նուազեալ, ցոյց տալով Պատիկի դիմում, ասաց:

— Եղբայրներ, ուն ոս եք, ոք ու ունեց իր կոտորում ու ունի լու համար: Նա վերցրեց պլխարկը, խոնարհուց և համբուրեց կուցեալիք ճակատը:

Բոլորն էլ վերցրին պլխարկիները և մէկ-մէկ սկսեցին համբուրել Պատիկին:

Այդ միջոցին նաև ընկզմւում էր:

Արեւի մօտ

Մի որը երեխայ, մի խեղճ երեխայ, ցնցուախիներ հագուծ՝ կուչ էր եկել հարուստ ու շէն աների պատերի տակի:

Հարուստ ու շէն աների պատերին մէջքը յենել էր և ձեւն էլ մեկնել դէպի մարդիկի:

Նոր էր բացւել գարունը, մօտականը սարերը կանաչին էին տալիս և գարնան անուշ արել բարի աչքերով նայում էր ամենքին:

Իսկ հարուստ ու շէն աների մայթերով անց ու դարձ էին անում մարդիկ, և ոչ մի մարդ չէր նայում, չէր ուզում նայել խեղճ ու որը երեխային:

— Կարմիր արե, բարի արե, դու ես ինձ տաքացնում միայն: Ինչ էլ լինէր իմ հալը, թէ դու էլ քաղցը չնայէիր ինձ: Ես կը սառէի հօ, մարդիկ աչք չեն դարձնում վրաս: Ես մրսում եմ այսակեղ:

Եւ երեխան աւելի էր սեղմւում հարուստ ու շէն աների պատերի տակի: Էլ նա չէր նայում մարդկանց, նա նայում էր միայն զթասիրտ արեին և ձեռքերը մեկնում դէպի արել:

— Կարմիր արե, մայր արե, ես քեզ շատ եմ սիրում: Վերցրու ինձ քեզ մօտ, ճամպայ ցոյց տուր, գամ քեզ մօտ: Ես մենակ եմ այսակեղ, ցուրտ է այստեղ, գիշերը որ գայ, մւր պիտի պահւիմ ես: Մմեն գուս փակ է իմ առաջ, ես կը սառեմ գիշերը, տար ինձ քեզ մօտ...



Ա. Խատիսիեան

Երբ արել կամաց-կամաց թեքւում էր մօտաւոր կանաչ սարերի ետեւ, վերջալոյսի վառ-վառ շողերը ներկում էին ցիր ու ցան ամպերը, փեց բարակ ցուրտ քամին և երեխան դողում էր խեղճ և անսում...

— ԱՌ, բարի արե, իմ լաւ արե, դու ուր ես գնում, ինձ մենակ ես թողնում...

Եւ լալիս էր երեխան, լուս ու մունջ լալիս էր, ու արցունքները զոր-զոր սահում էին նրա գունդատ երեխից, խոկ մարդիկ տուն էին դառնում. բայց ոչ ոք չէր լսում ու տեսնում նրան, ոչ ոք չէր ուզում լսել ու տեսնել նրան...

Իսկ արել թեքւեց անցաւ, պահեց սարի այն կողմը...

— Ես կերթամ արեի մօտ, ես գիտեմ ճամպան. այ, այ, նա գնաց այս սարի ետեւ. ես կերթամ նրա մօտ:

* * *

Խեղճ ու որբ երեխան օրորւելով ու դողալով շին ու հարուսա տների պատի տակով գնաց, գնաց և քաղաքից դուրս եկաւ:

Քաղաքից քիչ հեռու էր գտնուում այն սարը, որի ետեւ իջաւ արել. երեխան արդէն հասել էր լանջերին և բարձրանում էր սարը վեր:

Փշում էր բարակ ցուրտ քամին, մըսում էր երեխան և աւելի արտգացնում էր քայլերը:

Դժւար էր սարը ելնելը. բարեր ու քարեր. ոտքը զիտչում էր քարերին, խիստ ցաւում, բայց նա ուշը չզարձնելով բարձրանում էր ու բարձրանում:

Եւ մութը իջնում էր, թանձր ու ծանր զիգլում. երկնքում ասաղերը ազօտ շոշում էին պլղացող ճրագների պէս:

Փշում էր սարը քամին, որ մէկ-մէկ կատաղում էր, ձորերի մէջ ու քարափների գլխին օռնում. մէկ-մէկ թռչում էին գիշերահաւերը, որոնք որսի էին դուրս եկել. մէկ-մէկ էլ լսում էին շների հեռաւոր խուլ հաջացները:

Երեխան անվախ և հաստատ քայլերով գնում էր վեր, բարձր, մէշտ բարձր. կէս գիշերն անցել էր, երբ լսեց նա մօտիկից շների հաջոց, մի քիչ յետոյ էլ տեսաւ, որ շատ մօտիկ մի կրակ է շողում:

— Ո՞վ ես, — լսեց խաւարի միջից մի ձայն, մէւր ես գնում: — Մի ճամպորդ տղայ եմ, արեի մօտ եմ գնում: Ասա, որն է արեի ճամպան, հեռու է, թէ մօտիկ:

Այդ միջացին ճրագը ձեռքին մօտեցաւ երեխային մի մարդ և քնքուշ ձայնով ասաց.

— Դու դադրած կը լինես ու քաղցած, արի ինձ մօտ: Մւմ տղան ես. ինչ անգութ են քո հէրն ու մէրը, որ այս մութ գիշերին քեզ ցրտի ու քամու բերանն են դցել:

— Ես հայր ու մայր չունիմ. որբ եմ ու անտէր. իմ մէրը արեն է, իմ տէրը արեն է, գնում եմ նրա մօտ...

— Գնանք, տղաս, գնանք ինձ մօտ: Ես քեզ վաղը կը ճամպեմ արեի մօտ, — ասաց բարի անծանօթը և երեխայի ձեռքից բռնելով տուն տարաւ:

Սնծանօթի տունը մի հասարակ խրճիթ էր, մէջտեղում վառւում էր օջախը, որի շուրջը նստել էին բարի մարդու կնիկը և երեք փոքր երեխաները, որոնք համարեա հաստկակից էին որբ ու խեղճ երեխային: Նրա խրճիթին կից մի մեծ սրահում որոճում էին սխարաները: Նա հովիւ էր, սարի հովիւ:

— Սիրելի երեխաներս, ձեզ եղբայր եմ բերել: Թող շինէք երեք եղբայր, լինէք չորս. երեքին հաց տւող ձեռքը չորսին էլ կը տայ: Սիրեցէք իրար, եկէք համբուրեցէք ձեր նոր եղբօրը:

Ամենից առաջ հովէք կինը մօտեցաւ, զրկեց երեխային և մօք պէս ջերմ-ջերմ համբուրեց. յետոյ երեխաները եկան և եղբօր պէս համբուրեցին նրան:

Երեխան այնպէս զգաց, որպէս թէ իր սրտի մէջ մի տաքութիւն անցաւ, և նրան թւաց, թէ արել հենց ուղիղ նրանց տան վերեն է գառւում...

Աւրախութիւնից անուշ-անսւշ լաց եղաւ և պատմեց իր գլխին եկածը, քաղաքում աեզան ու ճամպին պատահածը:

Յետոյ օջախի մօտ սեղան նստան. կերան, խմեցին ծիծագեցին, մայրը նրանց համար անկոզին շինեց և ամենքին քնացըրեց իր կողքին: Երեխան շատ էր յոդած, տեղը մտաւ թէ չէ, իսկոյն աշքերը խփեց և անուշ-անսւշ մնչաց...

Երազի մէջ որբ երեխան ուրախ ժպասում էր. որպէս թէ նա արեի մօտն է, զրկել է նրան ամսուր ու պատկել է նրա զրկում առք և երջանիկի:

ՄԵԿ էլ նա սրտի ուրախութիւնից վեր թռաւ և ահսու, որ արեի փոխարէն նա գըկել է իր եզրայրներին և ամուր բռնել է իր նոր մայրիկի ձեռքը:

Երազ

Սմբատ Շահապետ

Ես լսեցի մի անուշ ձայն,
իմ ծերացած մօր մօտ էր.
Փայլեց նըշոյլ ուրախութեան...
Բայց ափանս որ երազ էր:

Եւ մեղեղին տիսուր, մայրենի,
յիշեց մանկութեան օրեր.
մօրըս համբոյըն ես ըգտացի...
Այս ափանս որ երազ էր:

Կորկաչանս աղբիւրն այնաեղ
թաւալում էր մարդարիտ,
նա յըստակ էր, որպէս բիւրեղ...
Այն երազ էր ցնորամիտ:

Կրծքին սեղմեց կտրօտագին,
աշքս սըրբեց՝ շատ թաց էր.
արցսմքներըս գնում էին...
Այս, այդ ինչմու երազ էր:

Հօր իրատները որդուն

Սիրելի որդի

Ես արդէն տեսնում եմ, սիրելիս, որ գու ուսումը դառը բան
ես համարում, ևս դեռ չեմ տեսել, որ ուրախ ու զւտըթ սըր-
տով դպրոց վնայիր: Բայց իմացիր, եթէ դպրոց չզնայիր, օրերը
քեզ համար դատարկ ու ձանձրալի կանցնէին. խաղերն անդամ քեզ
բաւականութիւն չեն պատճառիլ:

Այժմ ամեն մէկն աշխատում է սովորել: Բանւորներն ամբողջ
օրը չարաչար աշխատելուց յետոյ, երեկոյեան դպրոց են շտապում.
աշխատաւոր կանայք, աղաներն ու տղամարդիկ ամբողջ շաբաթն
աշխատելուց յետոյ, կիրակի օրը դպրոց են գնում. զինւորները
մարզանքներից յետոյ, իրենց ձեռքը տեարակ ու զիրք են
վերցնում: Իմացիր, կոյրերը, համբերը, բանտարկեալներն անզամ
կարդալ են սովորում:

Առաւոտեան դպրոց գնալիս մատծիր, որ հենց այդ ըստէին
մեր քաղաքի հագաբաւոր երեխաներ դպրոց են շտապում:

Երեակայիր, երկրազնողի վրայի միլլիոնաւոր երեխաները գրե-
թէ նոյն ժամին դպրոց են գնում. զնաւմ են, զնում հանդարտ գիւ-
ղերի ու աղմկալի քաղաքների փողոցներով, ձորերի, անտառների
միջով, հեղեղների վրայօվ, լեռնային ամայի շաւիղներով, առան-
ձին ու խմբով—ամենքն էլ գրքերը բռնած, հազար տեսակ հա-
զումներով, արքեր—տարբեր լեզուներով,—բոլորն էլ դպրոց են
գնում սովորելու:

Երեակայիր բոլոր ազգերի երեխաների այս մըջիւնանցը,
երեակայիր այս կանգ չառնող շարժումը, որին մասնակից են նաև
դու: Մտածիր, եթէ այդ շարժումը դադարէր, մարդկութիւնը նո-
րից բարձարուսութեան մէջ կընկնէր: Այդ շարժումն է մարդկու-
թեան յառաջադիմութիւնը, յոյսը, փառքը:

Դէ, զօրացիր, հսկայ բանակի փոքրիկ զինւոր: Գրքերն են քո
զէնքերը, դաստիարանն է քո գունդը, լուսաւորութիւնն է՝ յազիտ-
նակդ: Ուրիշն մի յու սահատուիր և կտրիչ կաց:

Սիրելի որդի

Դու այսօր վիրաւորեցիր մօրդ, Տես, որդի, միւս անդամ այդ-
պիսի բան չկրկնու: Կոպտութիւնդ դանակի պէս սիրաւ խցեց:

Այժմ պարզ յիշում եմ, թէ ինչպէս տարիներ անաջ մայրկ,
ամբողջ զիշերն անկունիր վրա կուցած, անկանջ էր դնում շնչա-
ռութեանդ և դառն լաց էր լինում երկիւզից, թէ մի գուցէ զրկի
քեզանից:

Եւ գու վշտացնմաւ ես նըսան, վշտացնում ես այս մօրը, որ
պատրաստ է զոհել իր հանգիւտը, իր երջանկութիւնը քո մի ժամ-
ւայ հանգստի համար:

Որդիս, լսիր և միտզ պահիր, գուցէ գու էլ դառն օրեր ունե-
նաս, բայց ամենազամն ու սսոկալին այն օրը կը լինի, երբ կոր-
ցնես մօրդ:

Որդիս, մայրական սէրը մարդու զզայմունքներից ամենա-
սուրբն է ու ազնիւը: Վայ նըան, ով ոտնակոխ կանէ այդ սէրը:
Մարդկասպանը զեռ մարդ է, եթէ յարդում է իւր մօրը. ամենա-
մեծ մարդն անդամ մի ստոր ու զարշելի արարած է, եթէ վշտա-
ցնում է իւր մօրը և չի սիրում նըան:

Զաւակս, եթէ միւս անդամ էլ վշտացնես մօրդ, միսթաթւիր
նըա ուղերով և ներողութիւն խնդրիր, և Բող մայրդ ձականդ
համրուրելով ների քեզ:

Ես քեզ սիրում եմ, սրգեակ իմ, զնւ ես իմ յոյսը, բայց աւելի լաւ է քեզ մեռած տեսնեմ, քան մօրդ վերաբերմամբ՝ ապել բախտ:

Մարիկս

Ա. Խահակեան

Հայրենիքո հեռացել եմ,
Իեղմ զանգաւիտ եմ, տառն չունիմ.
Ազիդ մօրէս բաժանւել եմ,
Տիւր, արտում, քռն չունիմ:

Սարէն կուզաք, նաշխուն հաւքեր,
Ա'խ, իմ մօրս աեսել էք.
Շովէն կուզաք, մարմանդ հովեր,
Արդեօք բարե բերել էք:

Հաւք ու հովեք եկան կշտիս,
Անձէն զիպան ու անցան.
Պաղակ սըտիս, փափագ սըտիս
Անխօս զիպան ու անցան:

Ախ, քո աեսքին, անուշ լեզմին
Կարօցել եմ, մայրիկ ջան.
Երնէկ, երնէկ, երազ լինեմ,
Թաշեմ մօրդ, մայրիկ ջան:

Երբ քռնդ զայ՝ լուռ զիշերով
Հողիդ զրկեմ համբոյր տամ.
Սըտիկ կանեմ զառ կարօտով,
Լամ ու ինդամ, մայրիկ ջան:

Երկրի մշակներ

Ա. Խատուշեան

Օ, ծանր հոգուերի խզուկ զաւակներ,
Արքան համբերող, քաջ է ձեր հոգին.
Ֆանջւում էք մավերլու թքեր, տարիներ...
Կարծես առն ջանքն է միայն ձեր բաժին...

Մանուկ օրերից ձեր մէջ աղբելով,
Վկայ եմ եղել ձեր շատ ցաւերին.
Տեսել եմ, ինչպէս տանջանքի գնով
Դուք մշակում էք տնմշակ դաշտեր:

Տեսել եմ, ինչպէս յուսալից, զւարթ
Դուք մշակում էք տնմշակ դաշտեր.
Ինչպէս տաջանքում անլաց, անվիտ
Դուք երդ էք երգում վաստակի երգեր:

Տեսել եմ, ինչպէս տմուռայ շոգին,
Երբ կրտի է թափում արեառ երկինք,
Առկեշող արտում, մանգաղը ձեւքին,
Դուք մէջք խոնարհած թափում էք գրտինք:

Տեսել եմ, ինչպէս գունաթափ աշնան
Հայրենի երկրի կուբճքը պատռելով,
Այնտեղ թաղում էք գանձերի նման,
Ուկի հատիկներ, ոոկի յոյսերով...

Տեսել եմ գարնան սիրուն օրերին
Պայծառ արելը զեռ նոր ծագելիս,
Կանաչ ալեծուփ արտերի մօտին
Ձեզ ծունկ խոնարհած ջերմ աղօթելիս:

Տեսել եմ, ինչպէս և ցուրտ տաղտկալի
Զմրան գիշերներ նստած խրճիթում,
Ցողնած ձեռքերիդ գադար չէք տալիւ
Խոփին էք նորոգում, մանգաղը սրում:

Օ, հայրենիքիո քրանաջան որդիք,
Արքան համբերող, քաջ է ձեր հոգին
Ձեզնոնի է միայն կանգուն հայրենիք,
Համբոյր ու օրհնանք ձեր սուրբ վաստակին:



Քան օր գետնի տակ

Հ. Մելիք-Նայկազեան

1

Ես բանում էի հանքի խորքում. գործիքովս բանդում էի ապառքը: Ընկերս ծալապատիկ նստած ճրագը ձեռքին լոյս էր անում:

Յանկարծ մեր ականջին հասաւ մի խուլ հեռաւոր դղբրդիւն:

—Ի՞նչ էր, —բացականչեց ընկերս, ոտքի կանդնելով վախեցած:

Մեր մօտից մի մարդ անցաւ վազէվազ. նա հեռում էր:


—Ի՞նչ էք կանգնել անշարժ, —գոչեց նա առանց կանգ առնելու, —Հանցիք... գազի պայթիւնը... Շնոր, դուքս վախէք: Եւ անհետացաւ: Նոյն վայրկեանին մեր ճրագները հանդան և մենք թողւեցինք թանձր խաւարի մէջ: Օդը սաստիկ խեղդաղ դառաւ:

Գլխապատառ վազում ենք, սայթաքելով ամեն մի քայլափախին: Բայց ուր ենք վազում: Մեր աջ ու ձախից ձգւում են անհաշի ոլորուն անցքեր, որոնք նոյնպէս թաղւած են խաւարի մէջ: Նրանց վրա գտնուում է նոյն տեսակ մութ անցքերի մի ուրիշ շարք, ապա ելլորդը, չորրորդը:

Ի՞նչպէս գտնենք մեր ճանապարհը այդ սոսկալի ստորերկեայ աշխարհում, երբ զբկւել էինք նոյն իսկ մեր անքաժան ընկեր լազարի լոյսից:

Վազում ենք շարունակ, Յանկարծ մեր առաջ թանձր ծաւմի մի պատ է բարձրնում: Մոայլ, գարշելի նոտ սնեցող խաւարը պատել է մեզ չորս կողմից, այլում է մեր գէմքնը: Դրուխս պատյտ է զալիս, և նզուելու վրա ենք: Շատապահ եա ենք վազում այդ դժոխքից:

Մենք փորձ ենք առաջ վերի յարկը ընկնելու, ճանապարհին նոր ընկերների ենք հանդիսում և նրանց էլ մեզ հետ տանում:



Բայց ափսոս, ուր որ գնում ենք, այդ անիծած զաղերն անանցանելի պատճենշի նման մեր ճանապարհը կարում են ու եռ հրում:

Միևնոյն տեղում չենք կարողանում մնալ, ու դէս ենք նետում, պղում, պատառում այդ մութ հանքում, որը չի ուզում մեղ բաց թողնել, պինդ բռնած պահում է մեղ իր մռայլ ճիրաններում: 2

Անցնում են երեք երկար, դաժան օրեր:

Բավառումների ժամանակ ընկերների մի նոր խմբի ենք հանդիպում: Նրանց մէջ գտնում է Պետրոսը, որին հանդիպելը ինձ մեծ ուրախութիւն է պատճառում:

Պետրոսը շատ հմուտ և փորձառու բանւոր է: Արդէն երկար տարիներ է, ինչ նա աշխատում է մեր հանքում: Նա ճանաչում է հանքը իր հինգ մատների պէս, զիափ նրա բոլոր անցքերն ու ամեն ծակ ու ծուկ: Նրանից աւելի լաւ ընկեր չի կարելի երևակայել այս գժւար հանդամսնքներում, մանաւանդ աչքի առաջ ու նենարակ նրա ստուն, չընկճող ընաւորութիւնը, նրա խելացի, առողջ գատողութիւնը:

Պետրոսի հետ խորհուրդ արինք մեր անելիքի մասին: Վճռեցինք առ ժամանակ գագարեցնել մեր թափառումները, թողնել մերեկ յարկը համելու ապարդիւն ջանքերը, մինչեւ որ անցնեն ու ցրւեն այնտեղ գանուղ գազերը: Իսկ առ այժմ լաւ է մի քէչ հանդստանանք և զբաղենք մեր ներկայ գրութիւնը լաւացնելու խնդրով:

Ամենից շատ առաջում էր մեղ ուտելիք ճարելու հարցը:

Մինչև այդ բոլէն քաղց այնքան էլ չեինք զգացել ընորհիւ մեր լարւած ջղերի: Այժմ ստամոքսը կարուկ կերպով ուտելիք էր պահանջում:

Բայց ի՞նչ ուտելինք:

Հետներս ունեցած կերպուրը թողել էինք մեր բանելու տեղում և այժմ չեինք կարողանում գտնել:

Յանկարծ յիշում ենք հանքի փայտէ շինւածքը, այն փայտը, որոնք ամուր ցանցով պատռմ են փուլ զալուց: Եւ մենք սկսում ենք եղունգներով պոկել կաղնի փայտերի կեղերը: Դում ենք այդ կեղեր բերածը ու թքով լաւ թրջելուց յետոյ, ծամում, փափկացնում, դարձնում ծամոնի նման բան:

Այդ ծամօնը սաստիկ ծովառում է մեր կոկորդը, բայց մազդ ամեն բանի ընաելանում է, ուստի որ մեզանից ոչ մէկը սիրա թոփեց այդ տարօրինակ կերակուրից:

Զրի հարցն աւելի յաջող լուծւեց. Պետքուը յայտնեց, որ մեզանից ոչ այնքան եւռու մի ազդիւր էր գաեր. Մենք բռւն ուրախութեամբ ընդունեցինք այդ լուրը, քանի որ ծարաւից աւելի էինք առնջւռում, քան սովոր:

3

Նորից սկսեցինք մեր թափառումերը. երկար տանջւելուց յետոյ, վերջապէս հասանք հանքի հորի բերանին, բայց մեր բախտից հորի բերանը փակւած էր փլւածքներով. անկարելի էր դուրս գալ. Մեզ համար չկայ փրկութիւն, մեզ համար չկայ փրկութիւն. Մեր բուրու զուրծ դրած ջանքերը պարզ ցոյց էին տալիս, որ այլ ևս պէտք չէր յայտ ունենալ, պէտք էր հաշաւել մեր ծանր վիճակի հետ և մեռնել:

Միայն Պետքուը չէր հաշաւում այս զրութեան հետ և նորանոր ծրագիրներ էր կազմում:

Մէկ էլ տեսնեմ, մթութեան մէջ քաշում է թև:

— Ի՞նչ կայ Պետքու:

— Լսիր. գիտես չէ, որ հանքերը կապւած են իրար հետ.

— Լաւ. յետք:

— Դէհ, որ այս հանքում չի յաջողուռմ ազատւել, անցնենք միւս հանքը: Գուցէ այնտեղ մեր բախտը բանի:

Ծրագիրը շատ համարձակ էր:

— Բնց պիտի անցնենք հարեան հանքն առանց ճրագի. անպայման կը մոլորւենք ոլորուն անցքերի մէջ, — տացի ես:

— Չենք մոլորւի. հաւատու խօսքիս: Ես լաւ ծանօթ եմ հարեան հանքի ճանապարհներին. երկար աշխատել եմ այնտեղ:

Այնուհետեւնա սկսեց ուշադրութեամբ զննել դէպի հարեան հանքը տանող ճանապարհը: Այս ճանապարհի վրա մի մեծ փլւածք կար, որ բոլորովին կապել էր անցըը: Մի լաւ զննելուց յետոյ, Պետքու այս փլւածքի մէջ մի փոքրիկ ձեղք: Նա անմիջապէս եկաւ մօտե և յայտնեց ինձ ուրախով լուրը:

— Ա՛խ, Պետքու ջան, այդ ինչ լաւ բան ես մտածեմ — բոցականչեցի ես սաստիկ ուրախութած:

Երկուսով սկսեցինք խորհրդակցել մեր անելքի մասին: Եր-

կուսս էլ այն կարծիքին էինք, որ պէտք է ծակենք գլուխք, մի տնօք փօրենք միւս կողման անցնելու համար:

Փօրենք, բայց ինչմզ:

Մենք ոչ մի գործիք չունեինք, բոցի մեր եզրանգներից:

— Ի՞նչ արած. փորձենք եղունգներով, — տասց Պետքու:

4

Մենք պատմեցինք մեր ընկերներին այս ծրագրի մասին:

Նըանք առաջւայ պէս կասկածանքով, նոյն իսկ թշնամաբար վերաբերեցին մեր առաջարկին:

— Ասուած սիրէք, թողէք ձեր նորանոր առաջարկները:

— Բաւական է էլի, ինչքան խարեցիք մեզ զսւք յոյսերով:

— Թողէք, որ հանգիստ մեռնենք, — լուեցին մէկը միւսի ետևից ընկերների բարկացած բացականչութիւնները. կարծես նրանց ամենաոխրիմ թշնամիները լինէինք և ոչ նրանց վիճակակիցները: Բայց ահա լուեց Պետքուի ուժեղ ձայնը.

— Ընկերէք, ներեցէք ինձ. Ես սխալել եմ: Կարծում էի, որ գործ ունեմ ուժեղ տղամարդկանց հետ, որոնք երբէք ձեռները չեն ծալում, այլ միշտ անսքաք կոփւ են մզում թէ ընութեան և թէ իրենց շահագործողների գէմ: Կարծում էի, թէ դուք մահը կը պատւրէք անվրդով ու հանգիստ սրտով: Բայց աեսնում եմ, որ սխալել եմ: Դուք աւելի լաւ էք համարում ողբալ մահը դեռ նրա դալուց առաջ և դողում էք խրտնած տաւարի նման: Դուք նոյն իսկ չէք յանդոնում լաւ ապագայի յոյս ունենալու և իսկապէս գուշ արժանի չէք այդ լաւ ապագային: Ես, ծերունիս՝ երիտասարդ եմ ձեր տառջ: Եկ ընկեր, — դարձաւ ինձ, — քեզ հետ միասին գնանք աշխատելու և թողնենք այդ թուլասիրտներին իրենց բախտին:

Դժւար է նկարագրել Պետքուի տպաւորութիւնը: Բուլոր հանքահանները վեր թռան տեղներից և մօուեցան Պետքուին.

— Ոչ, Պետքու, ոչ: մեզ մի թողնիլ. մենք էլ կը գտնք ձեզ հետ աշխատելու:

— Դու ամանչեցրի մեզ:

— Մենք ամեն ինչ կօննենք, ինչ որ դու կարդադրես: Պետքուը յուզւած բոլորի ձեռքը սեղմեց:

— Դէհ, եթէ այգակէս է, ընկերներ, սկսենք մեր դործը:

Պետքուի հրամանով բոլոր շարւեցինք մէկը միւսի ետեք և

ևոանդով կղանք զործի: Երկու օրւայ մէջ ծակեցինք մի փոքրիկ
անցք, որի միջով անցնել կարելի էր:

5

Բանեբորդ օրը մենք հարևան հանքում էին արգէս:

Մեր ետեն էր մասնել փակւած հանքը, որ քիչ մաս մեր գե-
շեղմանը դառնար: Իսկ մեր առջև նոր հանքն էր, որի բերանը բաց
էր. դա պարզ զգացւում էր օդի թարմ հոսանքից, որը շոյում էր
մեր գէմքերը:

Բոլորն ուրախութիւն էին յայտնում. նրանք, որոնք քիչ առ-
աջ մըթմթում էին Պետրոսի և իմ դէմ, այժմ ուրախ ձայնով կեց-
է էին կանչում:

Շարունակում ենք մեր ռանապարհը:

Թամին մարակի ուժով դարկում է մեզ, մենք բոլորս սաստիկ
թռվանում ենք. հազիւ ենք կարողանում կանգնած մնալ:

—Ո՞հ, այս ինչ հրաշալի օդ է, շշնջում է Պետրոսը. —Երբէք
այսպիսի օդ չեմ ծնել. Ի՞նչ ազատ է շնչում կուրծքս:

—Դէմ, առաջ, առաջ, գէպի կատարեալ ազատութիւն:

Խենթերի պէս նետում ենք առաջ, ուրտիսութիւնից պաւզնե-
րը կորցրել ենք: Խոր լուսթեան մէջ, երկու շարքի բաժանւած,
առաջ ենք գնում: Յանկարծ մեր աշքին մի ինչ որ լուսաւոր կէտ
է երեւմ առաջներս: Թանի գնում էինք, այնքան մեծանում էր
լոյսը և աւելի պայծառ դառնում:

Յանկարծ ես զուռ եկայ գէպի ետեկցս եկող ընկերս և... զարմա-
նալի բան... տեսոյ... տեսայ նրա գէմքը, երկու խոշոր սիածքերը:

Այ քեզ բան. ես տեսնում եմ, տեսնում եմ բոլոր միւս ըն-
կերներին, որոնք ստեղների նման շարժում են, անվստան կեր-
պով փոխելով շայլերը: Տեսնում եմ նոյնպէս քաջ առաջնորդի,
Պետրոսի վուխը:

—Պետրոս, ճրագ է, իսկական ճրագ: Պետրոսը դարձնում է
գէպի ինձ իր վլուխը, և ես նրա աչքերի մէջ մի ինչ որ խենթ ու-
րտիսութիւն եմ նկատում:

—Այս, դա ճրագ է, —նրա ձայնը դողում է սաստիկ յուզմուն-
քից, — դա այն ճրագն է, որ կախւած է իմնում հախաղան պատից:

Ծնկերները ցնծութեան ձայներ են հանում, և մենք բոլորս
միասին վազում ենք գէպի ճրագը:

Ահա մեր առաջ, ճրագի մօտ, կանգնած է մի բանւար: Դեռ
նրան չհասած, ձայն ենք տալիս նրան, բղաւում, աղմկում:
—Էյ դու, նշան տուր, որ մեզ համար զամբիւղ իշեցնեն:
—Զանգ տուր, իմացրու, որ հանքից մարդիկ են դալիս:

Բանւորը շուռ է զալիս դէպի մեզ և տեսնելով՝ ապօւշ կըտ-
րում: Սոսկալի երկիւղ էր դրոշմւել նրա դէմքին. նա վախից դո-
ղում էր: Խեղճ մարդ:

—Ի՞նչ օր է այսօր:

—Ժամը քանի՞մն է:

—Մեղ պէս շատ մարդ է աղաւաւել:

—Մերժուք ինչպէս են:

Կարկափ պէս թափուում էին նրա վլախին մեր հարցերը, բայց
նա չէր պատասխանում:

—Դէմ, մի զանգ տուր, որ մեղ վերև տանեն:

—Զանգ տուր, զանգ տուր:

Նրա ձեռքերը դողում էին. նա չէր կարողանում երկաթէ
շվթան վերցնել:

Մենք երեքով վերցրինք շղթան և այնպիսի մի զօղանշիւն բար-
ձըրացրինք, կտրծեն թէ ուզում էինք բոլոր մեռածներին արթնա-
ցընել: Մեղ պատասխանեցին վերելից. լսեց իշնող զամբիւղի ճըռ-
ճըռոցը և մի բոպէից յետոյ զամբիւղը կանգնեց մեր առաջ:

Այսուղից շտապով գուրս եկաւ ճարտարապետը բանւորների
հետ, նրանք մեզ նստեցրին զամբիւղ և մի բոպէից յետոյ մենք
տեսնում լոյս աշխարհը, աղմկող ամբոխը և արեի պայծառ շողերը:

Հարուստն ու զաւորը

Վ. Հրեց

Երբ ձեր հոյակապ, զքեզ տներում
Անթիւ զարդարանք ձեղ շրջապատած—
Պոհար, աղամանդ, գիղակ, ապրեշում,
Դուք ծիծաղում էք՝ կեանքեցից լիացած.
Եւ այլքան զանձերն առատ ու անբաւ
Չեն էլ շլաշնում ձեր տչը անբաւ.

Երբ դուք բախտաւոր, «կենաց» բաժակներ
Աւրափի պարզում էք փարթամ խնճոյքում,
Սոացէք գուք ինձ, ով մեծատռներ,
Այդ գւարթ ժամին դուքսը, վաղցում
Դուք նկատնում էք անձար աղքատին
Լալով նայելիս ձեր լուսամուտին:

Խղճուկը քաշւած փողոցի անկիւն,
Քաղցած նայում է նա ձեր խնջոյքին
Եւ խուլ մրմնջում. «Ահա լիութիւն,
Առատ բարիքներ, ահա խնդապին
Եւ պայծառ օրեր, և վիճակ խաղաղ,
Ահա ամեն ինչ—կեանք, վայելք, ծիծաղ...»

«Իսկ ես... ես թշւառ, ես մերկ, անօթի,
Իմ օթևանը խարխուլ ու մթին,
Վայ ինձ... ես մի այլ դառն վիճակի
Դատապարտած եմ երկրիս երեսին.
Կինս թոքախտում, տանս հոգս ու ցաւ:
Խեղճ գաւակներս քաղցած ու ծարաւ...»

«Եւ շատ քչերին աւած է կեանքում
Վայելել օրեր լի երջանկութեան.
Անարդար բախտը կնանքի խնջոյքում
«Ապրիլ», ասում է հարուստ մեծատան.
Իսկ ինձ՝ «դու հեռու, դու բախտին օտար,
Անվերջ երազիր բախտալից աշխարհ»:

Օհ, նա, միայն նա կարող է զգալ,
Թէ ինչ ասել են այս դաժան խօսքեր,
Ով ինքն է եղել թշւառ, տառապեալ:
Բայց դուք, դուք, բախտի հարուստ ընարեալներ,
Ձեզ ինչ փոյթ, ձեր կեանքն առատ է, լեցուն.
Բայց կրգայ և հատուցման օրը սիրուն:



Խնայողութիւն

Աւեօթ Ֆօրստ

Սմեն մարդ պէտք է սև օրւայ համար փող խնայի, որպէս զի
ծերսութեան հասակում, նեղութեան կամ հիւանդութեան օրերին
ապրելու հնարաւորութիւն ունենայ և կախած չլինի սրա կամ
նրա օգնութիւնից:

Թեզ համար խնայիր

Մարդ պէտք է փող խնայէ նախ և ասաջ հենց իւր համար:
Երփառապրդ, առողջ, զօրեղ և ժիր մարդիկ դժւար կը հասկանան,
թէ ինչ վատ վիճակի մէջ կարող է ընկնել նա, ով սև օրւայ հա-
մար ոչ մի խնայողութիւն չունի:

Յաճախ, այս, շատ յաճախի է պատահում, երբ հմուտ աշխա-
տաւոր մարդը չափից աւելի է վստահանում իր ճարպիկութեան,
ուժին և առողջութեան և չի ուզում հեռուն տեսնել, չի ուզում
ապագայի մասին մտածել: Բանի որ նա գործ ունի, քանի որ
առողջ և առոյգ է, ստանում է իր ոռնիկը և լու էլ ապրում
է: Բայց մի օր յանկարծ գործը պակսում է, կամ դադարում, կամ
ինքն է հիւանդանում, և կամ մի որե է ձախորդութեան է հան-
կիպում, այն ժամանակ նա մի անգամից աղքատանում է. այժմ
ոչ ընակարանի վարձը կարող է տալ, ոչ բժշկին վճարել, հաց ան-
գամ չի կարող գնել իր համար:

Ծերութեան համար խնայիր

Կարող է մի այնպիսի բախտաւոր մարդ պատահել, որը վերե
նկարագրած աղէտներից ազատ մնայ և իր կեանքի մեծ մասն
առանց կարիք զգալու անց կացնէ: Բայց չէ որ վերջապէս զալիս
է ծերութիւնը. և եթէ այդ բախտաւորը խնայողութիւն չի արել,
նրա կեանքի վերջին օրերն անչափ դառն կանցնեն. նա նեղու-
թեան և կարօտաւթեան մէջ կ'ընկնի:

Տանջտնքով չապրելու և աղքատութեան մէջ չմեռնելու համար
մարդ պէտք է խնայողութիւն անի:

Ուրիշներին օգնելու համար խնայիր

Թիշ մարդիկ կան, որոնք միմիայն իրենց մասին եմ հոգ տա-
նում: Ամռւսինը պարտաւոր է իւր կնոջ համար փող վաստակել, կի-
նը պարտաւոր է մարդուն օդել, ծնողները պարտաւոր են զուակ-

ներին դաստիարակել և խնամել: Եթէ ընտանիքի անդամներից մէկը հիւանդանայ, կը տուժեն նաև ընտանիքի միւս անդամները: Իոէ եթէ խնայողութիւն եղոծ չինի, անկարելի կը լինի օդնել հիւանդին:

Այսպիսով կարող է աշխատաւոր մարդը իսկի էլ չհիւանդանա, բայց կարող է նրա կինը և կամ որդին հիւանդանա: այդ դէպքում նա ստիպւած պէտք է հիւանդնութեան համար փող ծախոէ այնպէս, ինչպէս եթէ ինքը հիւանդան լինէր:

Ուրեմն ամեն մարդ պարտաւոր է խնայողութիւն անել նեղ օրերին իր ընտանիքին, բարեկամներին և օտարներին օգնելու համար:

Երրանից սկսել խնայողութիւնը

Քոնի շաւու սկսէք, այսքան լաւ, իոկոյն խնայողական գանձարանի մէջ փող դրէք: Պահեստի տւած ձեր ամեն մի կոպէկը ոչ միայն կը պահնի, այլ և կոպէկ ու կէս կը զառնայ: Գանձարանին տւած փողերն օրէ օր աճում են և իրենց տէրերին ազատում են նեղութիւնից, աղքատութիւնից և յուստհատութիւնից:

Ճպուռն ու մրջիւմը

Թոփ-զոհ մի ճպուռ
Ողջ ամեառ շուռ ու մուռ,
Երգեց, ճուաց,
Ճրաճրաց:
Մին էլ, ընը, ձմեռը
Փոեց իրա թերը.
Բացեց գործը սպիտակ,
Դաշտերն առաւ ծիւնի տակ:
Անցան պայծառ օրերը...
Էլ նրն տաեմ, էլ նրը.
Երբ տան մի թփի տակ
Թէ սեղան կար, թէ օթեակ:
Նկան օրեր ցըտաշունչ,
Ճպուռն ընկաւ լուռ ու մունչ,
Բաղցած փորին էլ չնչ երգ,
Տուրաը տարու ու մեռը:

Զոգը-զնկը գողալով,
Ծանըր-ծանըր սողալով,
Նա մը ջիւնին ասում էր.
— Գլուխու մատազ, սանամէք,
Մի ճար արտ շունչ առնեմ,
Ճրտից, սովից չը մեռնեմ:
Կերակրի, տաքացընու,
Մինչև զարուն ապլեցընու:
— Ի՞նչ խաբար է, սանիկու,
Զարմանում եմ, ջանիկու.
Զաշխատեցիր աժառը,
Առա, ինչ էր պատճառը:
— Հզպէս բանի, սանամէք,
Ել ժամանակ ով ունէք.
Էն խորելում ըուրաւէտ
Եղուամ էի մերոնց հետ:

— Աւքեմն դու...— Այս ես,
Ողջ ամտուր դէս ու դէս
Երդ երգեցի մշտադէս:

— Երգեցիր, հա, ջատ բարի,
Այժմ էլ բռնի վերպերի,
Քամին ծափ տայ՝ գու պարի:

Արցունքի աղբիւդ

Դ. Ասւածատեան

1

Մօտեցաւ արեն Սրեմուտ սարին ու լանջն շոքեց: «Թնում եմ մօրս ծոցը, ճամպայ տուր, թէ չէ կը վառեմ ևս քեզ»: Սաը ճամպայ տւաւ, արել ժպատաց, սարերի պլաները, ամուեն ու երկինքը կաբմըրեցին յանկարծ:

Նախիրն է դարձում հեռու դաշտից, զանսեր են մայում, այծեր մը կը կում, կովեր բառաջում, երեխաներ ծւում: Ինչու են լալիս սրանք լեղուճաք, այս ինչ պատահեց:

— Վայ, Սարէ—մէրիկ, զուռում են նրանք, —օրդ խաւարեց: Սև ձորի միջում ենք խաղում ու պարում էինք, երբ վրա աւին մեղ յանկարծ փաշայի քուրդ ծառաները: Նրանք մարտկով մեղ լաւ ծեծեցին ու տուն քշեցին, իսկ քո Անուշին ամուր կապեցին ու թամքին զրին: «Մայրիկ էր կանչում, մայրիկ ջան, մւր ես, ինձ սպանեցին: Բայց նրանք Անուշին ապտակ խփեցին, իսկոյն լուցըին: Նա ձայնը կարեց, քրգերը փախցրին տարան: Անուշի կորպաւ: Վայ, Սարէ—մէրիկ, քեզ սե լուր բերինք, օրդ սեացաւ:

Դառը կսիծծը նրա զուռին ընկաւ, տանել չկարտց, արցունքը ցամաքեց, աչքերը պլշտած ու կանգնած մաց... Յանկարծ ծիծաղեց ինքը կորցրած...

— Եկէք, բալաներ, այսօք Անուշին ես հորս եմ շինել, հարսանիք արել... մեռնեմ ես նրա մարմար թշերին, շիմշատ մատերին, մեռնեմ փեսոյին բոյ ու բաստին... դէ, պար բանեցէք, հարսանիք է, բալէք»:

Աւ ինքը պարեց... բայց յանկարծ ճչաց, մազերը փետեց ու զուրս արշաւեց...

2

Վեր կացաւ քամին, երկինք ու երկիր իրար հեա խառնեց: Առ մութ ամպեր իր ծոցից հանեց, մէկ մէկին զարիկց: Լոեց ա-

մեն բան. քամին էր միայն, որ մոնչում էր, քամին էր միայն, որ
սուլում, օռնում ու շտաշում էր...

Բայց ձորի միջից մի ձայն է գալիս: Նա էլ է հեծկլտում, նա
էլ է օռնում ու վայ է տալիս: Արգեօք բորենի՞ն, թէ գայն է
սպառնում այս խուզ գիշերին, թէ բուն է վախից սարսափած՝
գիւղին սև շիւան ըերում: Ոչ, ոչ, չի կարող ոչ մարդագելլ, «չ
բում, —ոչ մի նշաւոր չի կարող դիմանալ կատաղած քամուն»:
Մարէ—մէրիկն է այն ձորում նստած, Սնուշին կանչում: Նա հեծ-
կլուում է, մազերն է փետում...

Անցան տարիներ: Մարէ-մէրիկը ձորը չէր թողնում. մազը
շրջագաւծ, տկոր ու նիհար խոռ էր ճարակում, աչքերին ար-
շունք և թափուելով Սնուշ էր կանչում:

Այսքան կակիծից, այսչափ արցունքից գաղան փալայի սիրալ
չկակլեց: Բայց ժայռը կակլեց, իր սիրող պատւեց թշւառ մօր
լացից և արահեսուց Սև-Զորի միջից պաղ ու վճիտ ջութ, որ մին-
չև այսօր այսուղ կոչում են «Արցունքի Սողիւթ»:

Մուտքեկն ու հայ աղջիկը

I.

Էլօ-լօ, լօ-լօ, մերն են սարեր,
Մաղկուսարեր ճարօնի,
Լօ, լօ, լօ-լօ, մերն էն ճարօն
Վայելքներով իր բոլոր...

Գլուխ տըւէք, գոռող սարեր,
Սնց է կենաւմ Մուսարէկ,
Գլուխ տըւէք, վախկոտ հայեր,
Չընչին գիւղեր ու օբէք:
Ռուք կայ սոկի, ուր սիրուն կին,
Սևաշ բերէք զըմաբաց.

Ո՞ կայ ընուէմ նըրտ կտմքին,
Բնդ է կեանըը զրաւաղած...
Մըշու երկրում թուր է զարկում:



Յովհաննես Թումանյան

Դոգում են Վան իր թափից,
Դոգում են Վան, մինչ Արզըրում,
Ենեղ թափից, սարսափից...

II.

Գլուխ տըւէք վախկոտ հայեր.

Զըրը նդ, եկաւ Մուսարէկ.

—Հէյ, դուրս արի, քէմիշ բարա.

Ո՞վ կայ տան մէջ դուրս եկէք...

Ու սըրանի կիսամութի մէջ

Կում հուզ եկաւ քահանան,

Դոգում ծելով, ծերուկ ու խեղճ,

Բընած սարսափն իր մահւան:

—Հտւմն ես ինձ, քէմիշ բարա,

Հապտ նայի մի վերև...

—Աստւած է քեզ հաւանել, աղա,

Աստւած կեանք տայ ու արե:

—Դէ բեր, հապտ, որ հաւան ես,

Սողիկը բեր, տուր ինձ կին,

Դէն, շուտ արա, քէմիշ բարա,

Դուրս բեր սիրուն Շողիկին:

Լուռ կանգնած է ծեր քահանան,

Դէմքը դեղին, միրքի պէս.

Ծիծաղում է լացի նըման,

Թէ լալիս է ժպտերես...

—Հա, հա, հա, հա... հաւան չես ինձ...

Խնդաց խումբը՝ հա, հա, հա...

Ու սոսկալի էն ծիծաղից

Մարսուփ ընկաւ տան վըրա:

—Ո՞վ չի հաւան Մուսարէկին...

Մի Մուսարէկ—մի աշխարհք...

Բախդաւոր ենք՝ եռ... իմ որդին...

Բ՞վ է տեսել կապէս փառք...

Միայն թէ, աղա, զութ արտ մեզ,

Ժամանակ տուր երկու օր,

Որ պատրաստենք բէկին վայել.
Ոտիդ հողն ենք նորից նոր...»
—Մի երկու օր...բայց իմացիք,
Ետ եմ գալու ևս նորից.
Երկինք թրամիք, գետինն անցիք,
Զես աղատւիլ իմ ձեռից...»

«Լօ—լօ, լօ—լօ, մերն է Տարոն
Վայելինելով իր բոլոր...
Լօ—լօ, լօ—լօ...»: Հանգաւ «լօ—լօ»-ն
Սարի ետև հեռաւոր:

III

Ի՞նչ է զօղանջում զանգակը գուժկան,
Դիւզի զանգակը էս անվախտ ժամին.
Կարկնւտ է գալիս մըթնած երկնքից,
Հրդեն է ձըգել գիւղը թըշնամին...
—Ի՞նչ է պատահել, ծերունի տէրտէր,
Ի՞նչ ես վրդովում էս յաջնած խաղիին;
—Եկէք, իմ որդիք, եկէք, իմ որքէր,
Երկինքը փլաւ իմ ճերմակ գըլիին...»

Ու լաց է լինում զանգակը ժամի,
Գալիս է կանգնում ամբողջ Տալւորիկ,
Ու ձայն է գալի, զոչում ծերունի
Իրենց քահանան ձայնով զարհուրիկ:
—Եկէք, ընկեր—հարեաններ,
Իմ Շողիկի հարսանիքին.
Ծաղիկ բերէք ալ ու կարմիր
Իր անթառամ պսակին...
Դուստր եմ պահել ես նողելի,
Սըրտիս ինողում, աչքիս լուս.
Քուրդը եկաւ դուստրը խըլի,
Կեանքը իրի ծերունուու.
Հայր էք գուք էլ, զաւակի տէր,
Մի ճար գլուէք իմ ցաւին...»
Ու ծերերը՝ չնը, աղեհեր,

Հառաջում են խըմբովին.
—Ափսոս Շողիկ, սիրուն Շողիկ,
Մեր աչքի լուս, մեր ալ ծաղիկ...
Վայ խեղճ ծընող, ծեր քահանայ.
Քըրպի ճամփէն տատառի դառնայ...»

IV

Հայի գիշեր, հայի գիշեր,
Ցաւի անդունք անյառակ...
—Աղջիկս, ինչու չես քընում գեռ,
Ի՞նչ ես լալիս տեղի տակ:

—Զգիտեմ, մայրիկ, ինչու էսպէս
Քուն չի գալիս էլ աչքիս.
Աչքը քանի փակում եմ ես՝
Քուրդն է կանգնած առաջիս...»

—Թնիք, բալաս. մի վախենար,
Ասուած կայ զեռ երկնքում.
Քուրդ ու տաճիկ, զարկ ու աւար
Շատ ենք տեսել մեր կեանքում...»

—Մայրիկ, մայրիկ, չես իմանում,
Ո՞վ է լալիս զուրքն անտէր...
Մայրիկ, մի տես՝ չի լուսաննում...
Այս, ինչ ծանը է էս գիշեր...»

—Թնիք, բալաս, Ասուած զեռ կայ,
Աղօթք ասա մըտքիդ մէջ,
Հիմի զուտով լին էլ կը գայ,
Էս գիշերն էլ ունի վերջ...»

Հայի գիշեր, անքուն գիշեր,
Լի առանջանքով ու մութով,
Հայի գիշեր, անհուն գիշեր,
Լի ահաւոր խորհուրդով...»



Աղուդ

Յ. Յովաննիսեան

Եղուդ ախպէր, առ չունգուրդ,
մեղ բան ասա սրտալի.
Կարօտ ենք քո անուշ ձէնին,
մի բան ասա սրտալի.
Մրտի խօսք ենք ուզում քեզնից,
որ վեր հանի մեր հոգին—
Առ չունգուրդ, գտրդոտ աշուդ,
մեղ բան ասա սրտալի:
Առ չունգուրդ, տուր լարերին,
կրակ վասիր մեր սրտում.
Մեղ ամենիս նոր շունչ տուդ
մի բան ասա սրտալի:

Գիշերապահ Մկօր երազը

Կ. Մելիք-Շահնազարեան

1

Դաժան ձմեռան մի ցուրտ գիշեր էր: Թիֆլիզի մեծ փողոցներից մէկում, մի շքեղ տան սայլադռան առաջ, մի մաշւած քուրք ուսերին՝ փալտնի վրա պազած էր մշեցի զիշերապահ Մկօն: Նա աշքերը ձգած գետնին՝ տխուր մտածում էր... Լոռութիւն էր չորս կողմը, անցուդարձը կտրւել էր, միայն երբեմն երբեմն ազաների կառքը մօտից անցնելով մի բռպէ նրա աչքը գրաւում էր և կրկին զլութը խոնարհում:

Գիշերւան երկու ժամը խփել էր և ահա մի կողմից ցուրտը, միւս կողմից դաշտածութիւնն ու նինջը, կամաց-կամաց յաղթեցին Մկօնին. Նա զուխը թաղեց քուրքի մէջ, թինկ տւառ պատին և անշարժ մնաց տեղը կուչ եկած: Հենց էն է քաղցր քնի մէջ էր մտել, որ մէկը կողքին աքացի տալով զարթեցրեց «Տօ, յիմար, այդպէս ես ամենը նայում: Քանի անգամ եմ ասել, որ քեզ էլ քնած չտեսնեմ, թէ չէ...»

Իեզ Մկօն քնից վեր թռաւ, աեսաւ տաճտէր աղային, որ սա-

ուր քուրքի մէջ կոլորւած, փուհ-փուհ անելով, բերանից հայեցաներ էր թափում: «Աղա, ոտացդ մեռնիմ, բաշխի: ցուրտ կենէր, չդիմացայ ու աչքս նոր խուզ էրի»:

—Աղա փողն ինչպէս են աշխատում: Երկնքից իո չի թափում ներքիւ, անքուն որ չմաս, էլ քեզ ինչմւ եմ փող տալիս: Այս վերջին անգամն եմ տառմ, եթէ քեզ մի անգամ էլ քնած եմ տեսել, գուրս կամեմ:

Աղան մի քանի սպառնալիքներ էլ աալով, քոշեց տան զանգը, դուռը բացւեց և մըթմըթալով գնաց իր տաք ունեակում մինչև կէսօր խռմփալու, իսկ Մկօն վաշ-վիշ անելով, մի քանի բոտէ անցուդարձ արաւ տան գիմացը, սառած ուները թմփմփացրեց գետնին, որ քիչ տաքանոյ ու կրկին քաշւեց սայլադռան անկիւնը և առաջւան մտածմունքի մէջ ընկաւ:

2

Մկօր մտածութիւնները Թիֆլիզի սահմանից շատ հեռու էին. Նա մտքով փոխադրւել էր Վասպուրական, իր հայրենի զիւղը. յիշում էր իր մանկութեան քաղցրիկ օրերը՝ երբ մի խումբ ընկերների նետ ճան (վէդ) էր խաղում, լճակներ շինում, գաշտում ծաղկիներ փնջում, կամ գառնուկներն առաջն արած՝ հանդում արածացնում. յիշում էր՝ երբ տափը վարելիս, հայրը գութանի մաճը բռնած, իսկ ինքը եզների լուծի վրա հօտազների հետ լայլայ կանչելով, երգում, աշխոյժ էր տալիս եղ ու գոմշուկին և ակօսի կողքից ընկնելով, ահազին դաշտը մի քանի օրում հերկում, պատրաստում էր...

Բայց շուտով նրա առաջ արձանացան մի շարք պատկերներ, արիւն արաւաստնքով ներկւած. Նա յիշեց այն սոսկալի օրը, երբ հինգ առքի առաջ քըդերը մտան իրանց գիւղը՝ սուդ ու շիւան զցեցին ամեն տուն, թալաննեցին և իրանց խրճիթը, և երբ հայրը գութանի ձեխչը ձեռին պաշտպանում էր իր ընտանիքը, իր կայքը, ինչպէս քրդի նիզակը նրա կուրծքը խրեց և արիւնաթաթարի գետնին փուեց...

Ցիշեց նաև հարկանանից ոչ պակաս քաշած առջանքները և այն պարտքը, որ ընտանիքը պանիլու համար արել էր և ուրէցաւրի դիզում էր ու արիւն քըդերի վառակը ձեռքից իլում...

Եկաւ և այն դառն քողէն, երբ պարկն ուսին, վիզը ծուռ,

Յաս քարով ասեց իր մօրը, քոյրերին, ամուսնուն, համբուքեց օրօրոցում քնած փոքրիկ զտւակը և արցունքն աչքերին՝ հեռացաւ հայրական օջախից դէպի կովկաս պանդիտութեան...

3

Այժմ նա Թիֆլիզում, ցերեկը փալանը կոնսակին, քար ու ցեխ է կրում աղաների տունը շինելու համար, աղք է դուքս ածում, փողոցներն է մաքրում, իսկ գեշերները անքուն մնում, գիշերապահութիւն անում այն ցեխ ու ձնի մէջ, որ դարձեալ նոյն աղան հանգիստ ու ապահով քնի իր տաք անկողնում և ինքը կարողանայ մի քանի շահի յետ զցել իր աղքատ ընտանիքի համար...

Այս և սրա նման մտածութիւններ էին պաշարել Մկօի միտքը, որ յանկարծ քունը կրկին խժբժաց աչքերում. շատ էլ աշխատեց ողայի ահից արթուն մնալ, բայց չկաբաց... Նինջը յաղթեց նրան, զուրբը ծանրացաւ և ծուեց կրծքի վրա:

Մկօն երազների աշխարհի մէջն էր. նրա դէմքից, շրթունքների ժպտից կարելի էր որոշել նրա ուրախ վիճակը. նա տեսնում էր իրան կրկին հայրենի տուն վերադառնալիս, շորերը նոր, քիսոն փողով լիքը, մի խուզին էլ ուսին չմեղէններով լցւած. Իր գիմացն են գալիս պառաւ մայրը, կինը, քոյրերը, իրար ճառով են ընկնում. նրանց պատմում է իր երեք տարւայ քաշած պանդիտութիւնը և այժմ նրանցից էլ չի բաժանւիլ, նա հարուստ է. խուրջինից հանում, բաժանում է նրանց համար բերած ընծաները, ամենքն ուրախ են, ամենքը գոհ են...

Տեսնում է նաև իր փոքրիկ Սաքօն տօտիկ-մօտիկ տուն ովծաւ, նա չի ճանաչում իրան. մայրը քո պապօն է», ասում է նրան... «Իմ պապօն», կանչում է մանուկը և ցատկում հօր գիրկը... «Սաք ջան»... սեղմում է իր զըկին հայրը և համբոյըներով ծածկում նրան...

Հենց այդ հայրական գգւանքի մէջ էր Մկօն, որ կրկին մի քեթե աքացի դիպաւ կողքին:

Մկօն սարսափած վեր թռաւ տեղից. «Ուս, կորսւեցայ, բաշե՛ի, աղա ջան, ոտացգ մեռնիմ», և սպասում էր աղայի նոր հայուանքներին, բայց սխալւեց. իր դիմաց այժմ կանզնած էր իր ընկեր Խաչօն:

— Ծօ, Մկօ, հերիք քնես էս ցրտուն, էթանը բանուտեղ, ինը բացւեր է:

Մկօն ոչխնչ չխօսեց, մի դառն ախ քաշեց, փալանը ձգեց ուսովը և ցրտից ոբթորթալով տխուր հետեւց ընկերին...

Դառն քաշեց

Կոռւնկ

Կռունկ, ուստի՞ կուզաս, ծառայ եմ ձայնիդ,
Կռունկ մեր աշխարհէն խաբրիկ մի չունիս:
Մի վազիր, երամիդ շուտով կու հասնիս,
Կռունկ, մեր աշխարհէն խաբրիկ մի չունիս:

Թողեր եմ ու եկեր մլքերս ու այգիս,
Քանի որ ախ կանեմ, կը քաղցի հոգիս,
Կռունկ պահ մի կեցիր, ձայնիկդ ի հոգիս,
Կռունկ, մեր աշխարհէն խաբրիկ մի չունիս:

Ես իմ աշխարհի գարունը կուզեմ...

Հ. Հայրապետեան

Ես իմ աշխարհի
Գարունը կուզեմ
Զւարթ ու զսեմ.
Գետակը փրփուր,
Հաւքերը կայտոս,
Շաղիկը պայծառ:

Ես օտար երկրի
Գարունն է մոռալ,
Շաղիկն անփայլ,
Արել կրակ,
Գետակը ախուր,
Ռոշունները լուս:

Մեր սիրուն ձորի
Զեփիւռն է քնքոյշ,
Արել անուշ...
Ա՛խ, իմ աշխարհի
Գարնանն եմ կարօս,
Անուշ ու հոտոս...

Հայրենասիրութիւն

Աշնօղ Ֆօրստ

Հայրենասիրութիւն նշանակում է իւրաքանչիւր մարդու ուրբ
դեղի իւր հայրենի երկիրը. Եւ զարժանալի էլ կը լինէր, եթէ
մենք չսիրէնք այն երկիրը, ուր ծնւել ենք և որի երջանկու-
թիւնց մեր բախան է կախւած:

Ուղիղ հասկացւած հայրենասիրութիւնը շատ է օգտակար
մարդկանց համար. այն մարդը, որ սիրում է իր հայրենիքը և
պարծենում նրա անցեալով, կաշխատէ մի այնպիսի բան չանել,
որ նախատինք բերէ հայրենիքի անւանը. Միւս կողմից էլ նա ջանք
կը թափի, որ իր հայրենիքը առաջինը լինի բոլոր ազնիւ և արժա-
նաւոր գործերում:

Այդ է պատճառը, որ շատ անգամ մարդիկ իրենց կեանքն ու
ունեցածը զոհում են ոչ թէ իրենց ազգականների ու բարեկամնե-
րի համար, այլ որպէս զի իրենց հայրենիքը վտանգից փրկեն և
նրա փառքը մեծացնեն: Եւ մենք, այսօր ապրողներս, շատ բան
ենք պարագան նրանց, որոնք տանջւել են և ամեն բան նւիրել
իրենց երկրի օգտի համար:

Հայրենիքը ջերմ սիրով սիրող մարդիկ միշտ էլ պատրաստ են
ծառայել նրան, առանց մտածելու, թէ քաջալերութիւն կամ գո-
վասանք են ստանալու:

Երեմ մարդիկ գործում են իրենց հայրենիքի օգտի համար
մինչև անգամ այնպիսի ժամանակ, երբ ժողովուրդը նրանց լաւ
գործը ոչ տեսնում է և ոչ էլ գնահատում, ոչ միայն չի գնահա-
տում, այլ նոյն իսկ հալածում է և տանջում նրանց:

Կենդանութեան ժամանակ արհամարտած և հալածւած լաւ
մարդկանց ցանած սերմերը միայն նրանց մեռնելուց յետոյ են
պտուղ բերում: Որոշ ժամանակ անցնելուց յետոյ, ժողովուրդը
սկսում է օգուտ քաղել նրանց գործերից, արածներից և նրանց
ճշմարիտ հայրենասէրներ է հոչակում:

Սակայն պէտք է շմուանար, որ հայրենասիրութիւնը մի կեղծ
և վատ կողմ էլ ունի. կան հայեր, որոնք հայի արած ամեն մի
բան գովում են ոչ թէ նրա համար, որ լաւ բան է, այլ որովհե-
տե անոզները հայեր են: Այզպէս մտածելը շատ սխալ է և կարող
է վնասներ պատճառել մեզ: Անիրաւ և վատ բանը չպէտք է պաշտ-
պանել, այլ պէտք է հալածել:

Կ ա ր օ տ

Յ. Պարքեան

Ես մեր այն խարխուլ խրձիթն եմ ուզում,

Հայրենի գիւղիս խրձիթը այն հին.

Մեր ուռիների կարօտն եմ քաշում—

Դալար ու ճնուար թաւ ուռիների:

Արևն է այնտեղ մեղմ վերջալուսին

Իր վերջին դադար—հանգիստը առնում,

Ու վեհ Մասիսի ծիւնապատ գլխին

Իր վերջին ոսկի շողերը փռում:

Ի՞նչ լաւ է այնտեղ, իմ հայրենիքում,

Մօրս ծնկանը զլուխս դրած՝

Այնտեղ եմ ես միշտ հանգիստ գտնում,

Շառերի անուշ հովումը պառկած:

Շուշաններ

Ա. Թամիակեան

Ամառն էր: Մայրական գլկից, հայրական օճախից պոկւած՝ ես
գնում էի հեռու, շատ հեռու երկիր, ուր ամեն ինչ խորթ էր ինձ
համար:

Ահա ճանապարհին հայրենիքիս կապոյտ լեռները սեխն են տա-
լիս... ես նրանց լոիկ ծոցումն եմ:

Հայրենիքին կարօտղ սրտիս մի նւէր տւէք, լեռներ, սիրուն
լեռներ... ժայռի ստերում զողզողաց ծերուկ—դալուկ շուշանը:
Ես խոնարհեցի, քնքշութեամբ քաղեցի նրան, դրեցի կըծքի վրա...
վերցրի ինձ հետ նաև հայրենի հողից մի քանի բուռ և շարունա-
կեցի ճանապարհ:

Անցայ լեռները, անցայ հայրենիքիս սահմանը, ինձ հետ առ-
նելով հայրենի երկրի թանկադին յիշատակները՝ հողն ու թօշնած
շուշանը:...

Ապրում եմ այժմ օտար աշխարհի մի խուլ ու խաղաղ անկիւ-

նում. ծագկամանի մէջ եմ լըրել հայրենիքիս մի քանի բուռ հողը
և մէջը թաղել գունատ շուշանի սերմերը:

Օրեր անցան. ահա զուրս եկան հողի կրծքից մեռած շուշանի
մատաղ ծիլերը, աճեցին և դարձան սպիտակափառ շուշաններ:

Նեղիկ սենեակս նրանք լըրել են անուշ հոտով և ես սուզուում
եմ այդ խնկաբոյր հոտի մէջ, միանում են հայրենիքիս հետ, մեղ-
մելով կարօտիս զգացմունքը:

Մի գիշեր, հոգիս սիրով ու կարօտով, վշտով ու իզծով լի, նայե-
ցի նազիկ շուշաններին... սիրու փղձկաց, ջերմ արցունքերս թափ-
եցին հեղիկ ծաղիկների վրա. սրբազն յափշտակութեամբ, անհուն
կարօտով աչքերս յառել էին նրանց վրա և չէի կշտանում նայե-
լուց հայրենիքս յիշեցող ծաղիկներին:

Ծիծեռնակ

Դոդոխան

Ծիծեռնակ, ծիծեռնակ,
Դու գաբնան սիրուն թոշնակ,
Դէպի ուր խնձ ասա,
Թըռչում ես այդպէս արագ:
Ա՛ս, թոփր, ծիծեռնակ,
Ծընած տեղըս Աշտարակ,
Անդ վնիր քո բունը
Հայրենի կտորի տակ:
Անդ հեռու ալեռ,
Հայր ունիմ սըզաւոր,
Որ միակ իր որդուն
Սպասում է օրէ օր:
Երբ տեսնես դու նրան,
Ինձից շատ բարեւ արագ,
Ասա, թոզ նա բացւած
Իւղուց եմ թառամած,
Ինչպէս ծաղիկ սիրուն
Հայրենի հողից զըկւած:
Քէհ, սիրուն ծիծեռնակ,
Հեռացիր, թոփր արագ
Դէպի հայոց երկիրը
Ծնած տեղս—Աշտարակ

Դու պատմէլի, թէ ինչպէս
Անտէր ու խեղճ եմ ես,
Միշտ լալով, ողբալով
Կեանքս մտշել, եղել է կէս:
Ինձ համար ցերեկը
Մութ է շըջում արեգը,
Գիշերը բաց աչքիս,
Բունը մօտ չի դալիս:
Ասա, որ չը բացւած
Վաղուց եմ թառամած,
Ինչպէս ծաղիկ սիրուն
Հայրենի հողից զըկւած:
Քէհ, սիրուն ծիծեռնակ,
Հեռացիր, թոփր արագ
Դէպի հայոց երկիրը
Ծնած տեղս—Աշտարակ

Փոքրիկ լրտեսը

Ե. Գ. Ամբիկ

1.

Յունիս ամսի մի գեղեցիկ առաւօտ մի փոքրիկ հեծելազօր
վաշտ, ուշադրութեամբ դիտերով ամայի ճանապարհը, հանդարտա-
քայլ առաջ էր գնում թշնամու գէմ. Վաշտի առջնից լոիկ գնում
էին սպան ու յիսնապեար, շարունակ իրենց շուրջը նայելով և
ամեն վայրկեան սպասելով, որ ծառերի մէջ թագնւած թշնամու
առաջապահ զինւորներին կըտեռնեն. Վաշտը մօտեցաւ մի գիւղա-
կան տան, որ սոսիներով պատած էր. Դուն մօտ նստած էր
տասներկու տաքեկան մի տղայ և փայտ էր տաշում դանակով:

Տղան վաշտը տեսնելուն պէս փայտը գէն ձկեց ու գլխարկը
հանեց. Սիրուն տղայ էր՝ արքադէմ, խոշոր ու կապայտ աչքերով,
երկայն ու շէկ մազելով, առանց բաճկոնակի, պարզ շապկով,
կուրծքը բաց:

—Ի՞նչ ես անում այստեղ,—հարցրեց սպան, իւր ձին կանո-
նեցնելով—Ի՞նչո՞ւ դու էլ ծնողներիդ հետ չես փախել:

—Ես ծնողներ չունիմ,—պատասխանեց տղան,—որբ աղայ եմ,
մնացել եմ պատերազմ տեսնելու:

—Թշնամիներն անցան այստեղից:

—Ոչ, ահա երեք օր է, որ չեն երեսում:

Սպան փոքր ինչ մտածեց, յետոյ ձիուց վայր թուաւ, ներս
մտաւ՝ տանիքի վրա բարձրացաւ. Տնտկը ցած էր. անիքի վրա-
յից հետո նայել չէր կարելի:

—Լաւ կըլինէր ծառի վրա բարձրանալ,—ասաց սպան, վայր
իշնելով:

Ամբարի առջն բուսած էր մի մեծ սոսի, որի գագաթը ձօճուռմ
էր կապուտակ օգի մէջ. Սպան մէկ ծառին նայեց, մէկ զինւորին,
և յետոյ յանկարծ տղային դարձաւ:

—Այ աղայ, աչքերդ սնուր են.

—Ի՞մ աչքերը,—պատասխանեց տղան,—մղոնից հեռու թաշող
ձնադուկին էլ կըտեռնեմ:

—Կարո՞ք ես այս ծառի ամենաբարձր գագաթը ելնել:

—Այս ծառի. կէս բովէտում կը բարձրանամ:

—Կարող ես տեսածներդ ինձ պատմել։ Արդեօք թշնումիւներ չեն երևում, փոշու ամպեր, փայլատակող հրացաններ, ծուխու ձիեր։

—Կարող եմ։

—Ի՞նչ առմ քեզ դրա համար։

—Ի՞նձ, այլ բանի համար, —կրկնեց տղան։ —Ի՞նչ էք ասում։ Եթէ թշնամիների համար լիներ, —ի՞նչ էլ տային, չէի բարձրանալ, —իսկ մերոնց համար... ես հօ լաւ հայ եմ։

—Լաւ ասացիր, դէ ուրեմն բարձրացիր։

—Մի ըսպէ ժամանակ տւէք, որ կօշիկներս հանեմ։ Կոշիկները հանեց. վարտիկի կապը քաշեց, գլխարկը գետնով տւառ ու գրկեց ծառի բունը։

—Սպասիր, գոչեց սպան, ահ գգալով։

Տղան իւր գեղեցիկ կապոյտ աշքերով հարցական նշան արտաւ։

—Բան չկայ, բարձրացիր... ասաց սպան. Տղան կտուի պէս վեր մագլցեց։ —Իսկ դուք ձեր շուրջը նայեցէք, —գոչեց սպան զինւօրներին։

2

Մի քանի ըսպէից յետոյ տղան արդէն գագաթի վրա էք. ճիւղերը նրա ոտքերը ծածկում էին, շապիկը մինչև գոտին սիալտակ սիպտակ փայլում էք, շէկ գլուխն արեի տակ պապղում. Հազիւ կարելի էք նշմարել նրան—այնքան բարձր էք։

—Հեռու նայիր, —գոչեց նրան սպան։

Աւելի լաւ տեսնելու համար՝ տղան աջ ձեռն արձակեց ու ձակատին դրաւ։

—Ի՞նչ ես տեսնում, —հարցրեց սպան։

Տղան գլուխը ցածացրեց ու կանչեց ձեռի միջով։ —Երկու ձիաւոր հանապարհի վրա։

—Այստեղից հրչափ հեռու։

—Մի կէս մղան։

—Շարժումնեմ են։

—Ոչ, անշարժ կանգնած են։

—Էլ ինչ կայ. ապա նայիր դէպի աջ։

Տղան նայեց դէպի աջ։

—Գերեզմանատան մօտ, ծառերի մէջ, մի բան է փայլում... կարծեմ սիներ են։

—Մարդիկ տեսնում ես։

—Ոչ. երեխ պահուուել են արտերի մէջ։

Նոյն վայրկեանին մի գնդակ սուր շշելով՝ բարձրացաւ ու զնաց ընկաւ տան ետեք։

—Իջիր, իջիր, —աղաղակըց սպան, —նրանք քեզ նշմարել են... էլ ոչինչ հարկաւոր չէ. վայր իջիր...»

—Ես չեմ վախենում, —պատասխանեց տղան։

—Իջիր, —կրկնեց սպան։ —Էլ ինչ է երկում ձախ կողմէց։

—Զախ կողմէց։

—Այո, ձախից։

Տղան գլուխը գէպի ձախ թեքեց... Մի ուրիշ սուր շաշիւն աւելի մօտիկից ծակեց օղը. Տղան սոսկաց։ —Այ քեզ բան, բըռնում եմ, —գոչեց նա։ —Գնդակը մօտովս թուա։

—Իջիր. —կրկնեց սպան հրամայաբար։

—Խսկոյն, խսկոյն, աղատասխանեց տղան։ —Սակայն ծառն ինձ պաշտպանում է։ Ուկում էք իմանալ, թէ ձախ կողմում ինչ բան կայ։

—Այո, ձախ կողմը, —բայց իջիր իջիր...»

—Զախ կողմը, —կանչեց տղան, մինչև գոտին դուքս կախւելով տերեների միջից, —այստեղ, ուր կանգնած է մատուոը. տեսնում եմ, կարծեմ այստեղ...»

Մի երբորդ սաստիկ շաշիւն... տղան սկսեց ցած իջնել ու յանկարծ գլխիվայր ընկաւ։

—Անիծւին, —աղաղակեց սպան, վրա հասնելով։

Տղան ընկաւ մէջքի վրա և փուեց բաղկատարած. կրծքի ձախ կողմից արեան վտակ էք հոսում. Յիմնապետն և երկու զինւախ կողմից արեան վտակ էք հոսում. Վայց մինչև նա որ վայր թուան ձիերից. սպան կոտցաւ, շապիկը պատոեց—թըց նամու գնդակը մտել էք ձախ կողքը։

—Մեռած է, —գոչեց սպան։

—Կենդանի է, —պատասխանեց յիմնապետը։

—Ափսոս, կտրիչ տղայ, —աղաղակեց սպան։ Բայց մինչև նա այս ասաց ու թաշկինակով վէրքը կապելու վրա էք, —տղան մեռաւ։

—Խեղճ տղայ. —կրկնեց սպան տիբրադին, —պատւական, կտրիչ տղայ։

Սպան մօտեցաւ տնակին, հանեց պատուհանից եռագոյն դրօն շակն ու փոեց մեռելի վրա, իրրի ծածկոյթ, բաց թողնելով երեսը։

Յիսնապետը հաւաքեց և տղայի մօտ զբաւ նրա կօշիկները, զլութրէ,
դանակն ու փայտը: զինւորները մի փայրէնան լուռ կեցան:
Սպան դիմեց յիմնապետին:

— Մաքմի ետևից մարդ կուղարկենք, մեռաւ իբրև զինւոր,
զինւորներն էլ կըթագեն: Նա համբուրեց փոքրիկ աջը և հրաման
տւառ. — Հեծէք: Վաշտը առաջ խաղաց:

3

Արեգակը մայր մտնելու վրա էր: Նոյն ճանապարհով անց էր
կենում հետեակ զօրքի մի գունդ:

Պատանաւ մահւան լուրն արդէն յայտնի էր զինւորներին: Նը-
րանց ճանապարհը ձգւռաւմ էր տնտեկի մօտով սահող մի առւակի
երկայնութեամբ:

Առջևից գնացողները տեսան սօսիկ արմատի մօտ փոքրիկ գիա-
կը՝ ծածկւած եռագոյն զրօշակով, և զինւորական պատիւ տոին: Սպաներից մէկը ծաղիկներ քաղեց առափ տիփից ու սիռեց մեռելի
վրա: Յետոյ բոլոր զինւորներն էլ անց կենալիս ծաղիկ քաղելով՝
նոյնն արին. դիմումայն ծաղիկներով ծածկւեց: Ամենքն
էլ նրան ողջունում էին, մաս բարե առամ. — Ապրիս փոքրիկ
աղայ: — Կեցցես, քաջ ողատանի: — Մնաս բարե, խարտեաշ մանուկ: — Ապրես: — Փարք և պարծմանք:

Մի սպայ իւր քաջութեան մէղայլը ձգեց մեռելի վրա, միւսը
համբուրեց նրան. իսկ ծաղիկներն անվերջ թափւում էին նրա մերկ
ոտքերի, արիւնաթաթախ կըծքի և շիկաներ դիմու վրա:

Իոկ ինքը ննջում էր բարձր խոտերի մէջ, զրօշակի տակ,
սպիտակ ու ժպտերես, կարծես թէ ողջոյնները լսելով և երջանիկ,
որ տւել էր կեանքն իւր թանկագին հայրենիքի աղատութեան
համար...

Հայրենիք

Ա. Խահակիսն

Էյ ջան հայրենիք, ինչքան սիրուն ես,
Սարերդ կորած երկնի մովի մէջ,
Զրերդ անուշ, հովերդ անուշ,
Սենակ բալերդ արիւն ծովի մէջ:

Քո հոգին մեռնեմ, անդին հայրենիք,
Ալ քիչ է, թէ որ մի կեռնքով մեռնեմ,
Էրնէկ ունենամ հազար ու մի կեանք,
Հաղպարն էլ սրտանց քեզ մտաղ անեմ:

Ու հազար կեանքով քո դարդին մեռնեմ,
Բալերիդ մատաղ, մտանազ քո սիրուն.
Մենակ մի կետնք թող ինձի պտնեմ,
Էն էլ քո փառքի գովը երդելուն, —

Որ արտաւարի պէս վեր ու վեր ճախրեմ
Նոր օրւայ ծէպիո, ազիդ հայրենիք,
Ու անոնշ երգեմ, բարձր ու զիլ դոմեմ
Կանաչ արեկ, սիրուն հայրենիք:



Քաջ թմրկահարը

Ե. Դ. Անդրիս

1

Մի վաշտ տեղաւորւել էր բլրի վրա ջոկ կանդնած մի տան.
Մի վաշտ տեղաւորւել էր բլրի վրա ջոկ կանդնած մի տան.

Քաջ նեղացնում էր: Վաշտի գրութիւնը ծանը էր:
Գնդաղեաց մի տունակ զրեց, ծալեց և ընեւեց թմրկահարի վրա:
Թմրկահարի վրա գորշագոյն, պաղ աշքերը, որոնք ստրափ էին աղգում զին-
ուորներին:

— Թմրկահար:

Թմրկահարը գլխարկին զբաւ իւր ձեռքը:

— Ե՞կ մեղ մի ծառայութիւն արա, կարմդ ես:

Գառանու աշքերը ցոլացին:

Կարսդ եմ, պարոն գնդաղեաց:

Նայիր, — գնդապետը պատուհանից դուրս ցոյց տւառ, տեսնում ես, մօտերքում, այ այն հսկոի մէջ սւիններ են պսպղում. — այդ մերոնք են: Ահա մի տոմսակ. բռնիր այս պարանի ծայրը, պատուհանից վայր սահիր, վազելով անցիր դաշտի միջով մերոնց մօտ և տուր տոմսակս առաջին քեզ պատահող սպային: Հանիր գոտիդ ու պայուսակդ:

Թմբկահարը գոտին ու պայուսակը հանեց և տոմսակը ծոցը դրաւ: Յիսնապետը պարանի մի ծայրը պատուհանից վայր ձգեց, իսկ միւս ծայրը երկու ձեռքով բռնած ունէր. գնդապետն օգնեց աղային դուրս ելնել պատուհանից:

— Միտդ պահիր, ամբողջ վաշտի փրկութիւնը կախւած է այժմ քո քաջութիւնից և ոտքերիդ արագութիւնից:

— Կստահ եղէք իմ վրա, պարոն գնդապետ, — պատասխանեց պատոնին, վայր իշնելով:

— Ճկւիր դաշտի միջով վաղելիս, — աւելացրեց գնդապետը, ինքն էլ պարանի ծայրից բռնելով:

— Միամիտ կացէք:

Մի բոպէից տղան ոտք գրաւ գետնի վրա, յիսնապետը պարանը քաշեց ու հեռացաւ. Գնդապետը շտապով դուրս կախւեց պատուհանից. տղան արագ ցած էր վազում զառիվայրից. գնդապետն արդէն վստահ էր թէ փախուստը յաջողւեց: Բայց յանկարծ աղայի առջկից ու ետեից փոշու ամպիկներ երեացին. թշնամիները նշմարեցին փախչողին: Փոշու ամպիկներն առաջ էին դալիս այն հողից, որ փորում ու բարձրացնում էին գնդակները: Սակայն պատանին կարեցածի չափ վազում էր: Յանկարծ նա տատանւեց ու ընկաւ:

— Ա՛, սպասիր, — որոտաց գնդապետը. բայց թմբկահարը նոյն վայրկեանին ոտքի ելաւ:

— Ա՛, միայն ընկել էր...

Գնդապետն ազատ շունչ քաշեց: Թմբկահարն, իրաւ, շարունակեց վազել բռլոր ուժով, բայց կազում էր:

— Ոտքը ցաւեցրած կըմինի... մտածեց գնդապետը, Դարձեալ փոշու մի քանի ամպիկներ վեր ոլացան, բայց տղան արդէն հեռու էր և սպահով: Գնդապետն ուրախացաւ, սակայն չեր դադարում սրտաթրուփ նայելուց:

Եյժմ ամեն բան կախւած էր ժամանակից. եթէ պատանին

չկարողանայ ժամ առաջ լուր հաղորդել իւրայիններին, նրանց, ուրոնք կանգնած են հոգտի մէջ, եթէ անմիջապէս մի օգնութիւն չհասնի, բոլոր վաշտը կըկոսորւի և գնդապետը գերի կառնւի:

Տղան վազում էր մերթ արագ, մերթ քայլերը փոքրացնելով, երբեմն կաղում, սայթաքում, կանգ էր առնում:

— Գուցէ վիրաւորւած լինի... — մտածեց գնդապետը ցնցւելով, և հետեւում էր տղայի ամեն մի շարժման: Ամեն բոպէ տագնապալից աչքերով չափում էր նա փախչող պատանու և այն սւինների վազութիւնից, որ պապղում էր արևափայլ արտի մէջ: միջև եղած արածութիւնը, որ պապղում էր արևափայլ արտի մէջ:

Ստորին յարկի սենեակում շաշում էին գնդակները. լուսում էր սպաների հրամանը, վիրաւորների աղեկէզ հառաջանքը, տապալող կահ կարասիքի դզրդիւնը, վայր ընկնող ծեփի շունդը:

2

Գնդապետը ներքեւ վազեց:

— Աըլութիւն, — գոռում էր նա. — մի վհատիք, ամուր կացէք: Շուտով օգնութիւն կըհամնի:

Թշնամիները բռլորովին մօտեցել էին. արդէն կարելի էր ծխի միջով նշմարել նրանց երեսները. հրացանների որոտման հետ լւաւում էր և նրանց վայրագ աղաղակը, որով պահանջում էին անձնատուր լինել.

— Անձնատուր եղէք, — գոռաց մի ձայն:

— Ոչ, — որոտաց գնդապետը պատուհանից:

Եւ հուրն սկսեց երկուստէք նորից տեղալ աւելի ուժգնութեամբ և սաստկութեամբ: Օրհասական ժամն արդէն մօտենում էր:

— Զե՞ն գալիս, չե՞ն գալիս, — գոչեց գնդապետը, իւր սուրբ ճօճելով, և մոլեգնաբար առաջ անցաւ մեռնելու հաստատ որոշմամբ:

Մի յիսնապետ, վայր իշնելով օճրքից, բարձրածայն աղաղակեց. — Գալիս են:

— Գալիս են կրկնեց գնդապետը ինդութեամբ:

Այդ ձայնը հնչելուն պէս՝ յիսնապետներն ու սպաները թէ ասողի, թէ վիրաւոր, միահամուռ պատուհանների վրա ընկան, և կրկին դիմադրութիւնը սաստկացաւ:

Մի քանի վայրկեան անցնելուց յետոյ, թշնամիների մէջ մի տեսակ անկարգութիւն ու վարանման նշան երևաց: Օգնութեան ետեսակ անկարգութիւն ու վարանման թիկունքից: Թշնամին տակած հեծելագունդը հարւածեց թշնամուն թիկունքից: Թշնամին արտադրութիւնը շաբաթակացաւ, վայր առաջ գնդապետը կուր մէջ գընդադարձակ վէրք ստացաւ ձախ թերից:

Ճակատամարտից յետոյ գնդապեամին ցոյց տւին մի եկեղեցի, որ շտապով զինւորական հիւանդանոցի էր փոխարկւած։ Նա գնաց այստեղ, Եկեղեցին լիքն էր վիրտուուներով, ոմանք պառած էին սնկողիններում, ոմանք էլ յատակի վրա։ Երկու բժիշկ ու մի քանի սպասաւորներ զբաղւած էին հիւանդներով, լուսում էին սրամամիկ աղտղակներ ու հաստշանջներ։ Գնդապեար կանդ առաւ շեմքի մօտ և որոնում էր իւր օգնականին ու զինւորներին։ Յանկարծ մի խոպոտ ձայն նրա անունը առաւ։

— Պարոն գնդապետ...

Գնդապետը շաւու եկաւ. կանչողը փոքրիկ թմբկահարն էր։ Ծղան պառկած էր անկողնում ձգւած, գունատ ու նիհար, բայց աչքերը աղամանդի պէս վառվուն։

— Այստեղ ես դու, — հարցրեց ապշած գնդապետը։

— Ապե՞ս — պարաքդ լաւ կտարեցիր։

— Ինչ որ կարողացայ՝ այն արի, — պատասխանեց թմբկահարը։

— Վիրաւորեցին քեզ, — հարցրեց գնդապետը, ման ածելով աշքերը միւս մահիճների վրա՝ իւր օգնականին գտնելու համար։

— Ի՞նչ արած, — ես վազում էի, նաար եղածին չափ կռանում էի, բայց և այնպէս նրանք իսկոյն նկատեցին ինձ, եթէ վերը չստանայի, քանի ըովէ առաջ տեղ կը հասնէի։ Ծարաւը հոգիս հանում էր, վախենում էի, թէ կուշանամ. լաց էի լինում զայրոյթից ու սարսափից. կարծում էի — զանգաղում եմ, ես արի, ինչ որ միայն կարսղացայ, և գոհ եմ... Բայց ներեցէք, պարոն գնդապետ, արիւն եմ տեսնում ձեր մատների վրա։

Եւ իրաւ՝ գնդապետի վէրքը վատ էր կապւած և արեան կաթիւները ձեռի վրայից հոսում էին։

— Թոյլ տւէք կապն ամբացնեմ, պարոն գնդապետ։ Թոյլ տւէք, ես մի վայրկեանում կամբացնեմ։

Գնդապետը ձախ ձեռը մեկնեց, իսկ աշովն օգնում էր պատանուն վէրքի կապը բաց անել. սակայն թմբկահարը բարձի վրա յինւելուն պէս՝ երեսի գոյնը նետեց ու վայր ընկաւ։

— Հերիք է, թնդ — ասաց գնդապետը, նայելով վրան ու ձեռը ետ քաշելով, որ պատանին զեռ բանած ունէր. — Լաւ է՝ զու ըռ ցտին գարման անես. ամենաթիթէ վէրքերն անդամ, եթէ լաւ չըխնամւին, կարող են սաստիկ վատանալ։

Թմբկահարը գլուխը թօթւեց։ Գնդապետն աւելի ուշադրութեամբ նայեց վրան։

— Երեխ զու շատ արին են կորցրել, որ այդ աստիճան թուլացել ես։

— Շատ արիւն, — ասաց ազան ժպտալով։ — Ոչ միայն արին... նայեցէք... Նա մէկդի քաշեց վերմակը։

Գնդապետը զարհուրելով ցնցւեց, պատանու ձախ ուղը կտրւած էր, այլանգակ կոճղը վաթաթւած։ Էր արիւնու լաթերով... Անց էր կենում հաստիկ բժիշկը։

— Ա՛, պարոն գնդապետ, — ասաց նա արագ, ցոյց տողօվ պատանուն. — այ դժբախտ պատահար. չէ որ կարեկի էր ոտք ֆրկել, եթէ վէրքը սաստիկ զրգուած չինէր. մնիծած բարրոքում. Ճար չը վրա վէրքը սաստիկ զրգուած չինէր. մնիծած բարրոքում. Ճար չը կար... հարէ եղաւ կորել ոտք... Ո՞հ, բայց... կորիչ տղայ է, հաւակար... մինչև անդամ ձայն չինէց, մի կաթիլ որտասուք չթատցէք։

Բժիշկը գլուխ տւառ ու շուտով առաջ գնաց։ Գնդապետը յօնքերը կրտեց, միրմակը տղայի վրա - ծածկեց և երկար կարուց առաջ հանեց և զիւլորական պատւանդան տւեց։

— Պարոն գնդապետ, — գոչեց ապշած պատանին. — Ի՞նչ էք անում, Պարոն գնդապետը իմ առջևն...»

— Ես գնդապետ եմ, իսկ գու հերձն, — պատասխանեց զորավաճառիկ պատանը մերէք ստորագրեալ զինւորները մի քով այդ կոշտ մարդը, որից երեք ստորագրեալ զինւորները մի քարի խօսք չէին լսած, — և խոնարհելով գէպի մահուկը, երեք անդամ համբուրեց նրան։

Կոռուկներ

Գ. Մանուկն

Առ էք գնում շարժն-շարան, Զը լինի արգեօք մեր վաթամը Դառ նեղ դատք ձեզ համար

Հէյ վաւք սիրուն կառնեներ, Եւ շատպավ թաշում էք Առ էք թռչում այդպէս արտդ Սի երջանիկ նոր աշխարհ։

Բայց մի, զիտեմ, դուք ել ինձ պէս եւ պիտի զաջ զարձեալ շատոց
Այս զաթանին գերի եք, Այս զաթանը մեր սիրուն,
Դուք ել ինձ պէս, եւ, կառնկներ, երբ ենունոյ ցուրտ ամեւը,
Երբ լեռների փերին եք: Երբ որ բացւի նոր զարուն:

Սամիտար շունք

Կուի ժամանակ վիճուրը ուսից և ձեռքերից պիրարևեց և
զարւեց ուշաթափ:

Երբ նա ուշի եկաւ, արգեն գիշեր եր և շուրջը խաւար, ծառերի
արտնքով թոյլ փայլում եր լուսնի լոյսը:
Ոչ ոք չկար. շշակայթը հանգիստ ու խաղաղէք. նա վախենում էր և
չէի էր մուռ երեխոյի պէս լոց լինէր:

Ժամանակը գտնդագ անցնում էր... Ականջ է դժում, ոչ ոք չը-
կայ. քիչ էր մուռ անջող ծարաւից մեռնէր... գլուխն այրւում
էր առքութիւնից:

Յանկարծ մօնեքում շփշոցի ձայն լսեց. մէկը մըթմըթում
էր... վիրաւորը մտածեց որ զայլ է. շուռ եկաւ և ճիշտ որ նկատեց
մի ինչ որ դադան, որ գէսի իր կողմն էր զալիս. պաշտպան-
մալու համար նա չէր կարող տեղից շարժւել: Արեմն մահը մօնե-
նում էր...

Գազոնը մօնեցաւ նրան, հոտուաց և ապա լիզեց ձեռքը:
Վիրաւորի ուրախութեանը չափ չկար. առջեր կանգնած էր
սանիստար շունը, մէջքին երկու պայուսակ ամրացրած, որտեղ կա-
մի վիրակասներ և այլ պարագաներ:

Խելօք կենդանին ոչ ու ձախ կողմից կախւած պայուսակները
մօնեցնում էր վիրաւորին, բայց նա անկարող էր ձեռքերը շար-
ժել, որովհետ երկուսն էլ վիրաւորւած էին:

Յանկարծ լրնը վեր կացաւ, վազեց մի կողմ, դումչը վեր ցը-
ցեց և սկսեց կաղկանձել, յետոյ էլ սկսեց կայճ ու ընդհատումնե-
րով նաշել և աղտ շտապ հետացաւ:

Մօտ կէս ժոմ անցաւ. Յանկարծ շվկոցի և յետոյ էլ քայլերի
ձայն լսեց. Ներկ ժարդիկ և զալիս մօտած, մտածում էր վիրա-
ւոր, Արախութեանը չտի չկա: և բգաւեց:

— Եղբայրներ, բարձրացրեք ինձ:

Սանիտարները լսեցին ձայնը, որոնեցին և դատն նրան, պատ-
կեցրին պատգարակի վրա, իսկ աղատարաք շամը փախաւ կեռում՝
որից վիրաւորներ գտնելու համար:

Սովոր մեր բանակում

Ա. Մելիքեան

Տասն օր էր, ինչ աօվ աւելի էր սաստկանում մեր բանա-
կում և աւերածութիւններ զործում: Զինքն ընկնում, սատկում
էին զարսակ ու զարի չվինելու պատճառվ. իսկ մեր ուսեւ էր
էին զարսակ ու զարի չվինելու պատճառվ. իսկ մեր բանակում
վերջին մացորդները սպառել էին և երկու օր էր, ինչ ապրում
էինք մի քանի կառը հայտ ու շրով:

Մօտենում էր սոսկալի, սպասնալից քաղցը. մւր գնալ, մւմ
գուռը ծեծել, ամեն աեզ նոյն զբութիւնն էր: Նոյն իսկ սպասու-
կուր վրա էր շաքարի շտա փոքր պաշարը. վերջի վերջոյ պէտք է
թէյից էլ զրկէինք:

Զինւորների մի մասը շամփուրի վրա կրեայ և դորտ էր խո-
րովում և ուտում: Նրանք, որոնք շտա էին թուլացել և չէին կա-
րող պահակ կանգնել, գնում էին պատկում և երկար ժամանակ
ընում: Երբ զարթում էին և ընկերների երեսին ծիծաղ չէին նկա-
քնում, նորից էին պատկում քունը շարունակելու համար: Յա-
տում, նորից էին պատկում զարթներով պատմում էր տեսած
ճախ նրանցից մէկն ու մէկը զարթներով պատմում էր ամեն-
իրաշալի երազը — ռապիտակ հաց, վրան էլ մի կտոր պանիր:

Մենք մեր վերջին յոյսը գրել էինք մեր ընկեր Տիգրանի վրա,
առաւուած կանուխ գնացել էր ու դեռ չէր վիրադաբել: Հեռա-
ուրը առաւուած կանուխ գնացել էր ու դեռ չէր վիրադաբել: Ամբողջ
նախիս նա երդուել էր անպատճառ ուտելու մի բան բերել: Ամբողջ
օրը սպասում էինք. նա երկու զինւորի հետ գնացել էր հարկար մի
գիւղ, որաեղից քաջւել էին թուրքերը:

Վեշալոյսի ցուշերն անհետանում էին լեռների յետել ու գի-
շերն արգեն իր մթնշաղն էր ձգել, երբ յանկարծ գիւղի ծայրին
երևաց Տիգրանի վիթիւրքի հասակը:

Մենք մտածում էինք, թէ նա ինչ կտորող է բերած ինել —
անշուշա հաց, գուցէ մի ոչխար, բայց երբ եկաւ ու գետնի վրա
որեց մի տեռակ բոյս, մեր ուրախութիւնը շուտով փոխւեց ուրու-
դրեց մի տեռակ բոյս:

թեան: Մենք կարծում էինք, թէ այդ բոյսը անսննգարար, անպէտք մի բան է:

Նկատելով մեր յուսահատ տեսքը, Տիգրանը գործի անցու, շարունակ կրկնելով.

— Կը տեսնէք, թէ ինչքան լաւ է, այսպիսի լաւ բան կետեցներում կերած չկար:

Տիգրանը զուր լցրեց կաթսայի մէջ և բոյսն էլ ածեց մէջը: Մենք ըրջապատեցիք խարոյկը և հիացմունքով դիտում էինք Սրի եռալը: բացւել էր նաև մեր ախորժակը, իսկ Տիգրանը լուրջ և հպարտ դէմքով փայտով խառնում էր. այդ բոյսէին այնքան ցանկալի կերակուրը:

Մասիս բարձրակալը

1829 թւի սեպտեմբեր ամսան
չերմանացի պրոֆեսոր Գորդոնը իր
մի քանի ընկերների հետ եկաւ Արա-
րատիան գաշտը: Մասիս սարի դաւա-

թը բարձրանալու դիտաւորութեամբ
Գորդոնը իր ընկերներով այցե-
լեց էջմիածնի վանքը, այնտեղ ծանօ-
թացաւ Խաչատուր Արովիանի հետ և
խնդրեց նրան, որ իբր թարգման ու-
ղեկցէ իրենց: Արովիանը համաձայնեց:

Խաչատուր Արովիանը այսպէս է
նկարագրում իրենց ճանապարհորդու-
թիւնը:

Սեպտեմբերի 9-ին մենք ճանա-
պարհ ընկանք դէպի ս. Յակոբայ վանքը, որ գտնուում է Մասիս
սարի ստորոտում Ակոսի գիւղի մօտ:

Հետեւեալ օրը Գորդոնը իր ընկերներից մէկի հետ և մի տե-
ղակ գիւղացու առաջնորդութեամբ փորձեց բարձրանալ սարը՝
որեւեան կողմէց: Երեք օրւայ ընթացքում հաղար ու մի նեղու-
թիւններ կրելուց յետոյ նրանք հազիւ հասան մինչև 13,000 ու-
նաշափ բարձրութեան. առաջ գնալ նրանք չկարողացան և կրկն

Խաչատուր Արովիանը

վերագանգում մեզ մօտ մենք մնացել էինք Ակոսիում:

Սակայն պրոֆեսորը և ընկերները յուսահատեցին: Նրանք
սկսեցին մասրամասն հարցուփործ անել այն տեղերին լու ծածօթ
վրաղցիներին, թէ սարի որ կողմով աւելի հեշտ է դաշտաթթ բարձ-
րանալը: Նրանք յատուկ զրա համար բերել էին օրածայր գաւա-
զաններ, երկաթեայ կօշիկներ և տաք զգեստ:

Ես ինպիեցի պրոֆեսորին, որ ինձ էլ թոյլ տան հետները
սարի զագաթթ բարձրանալու: Նա տւաւ իր համաձայն բնութիւնը:

Եւ այսպէս սկսեցինք մեր վերելքը. մեզ տաշնորդում էին
Ակոսի գիւղի տէրը, վեց զրաղցիներ և երկու զինուորներ:

Սեպտեմբերի 18-ին մենք սկսեցինք վեր բարձրանալ՝ լեռան
արևմտեան կողմով. արահետը ընկնում էր դժւարագնաց առապար-
արեւմտեան կողմով. արահետը ընկնում էր գոչւող տեղից վերև
ների մէջ: Սյու օրը հազիւ հասանք Քիք Գեօլ կոչւող տեղից վերև
գանւող մի բլրակի: օրը երեկոյանում էր. այլ ևս տրամադ շարժել
անկարելի էր: Դժնղակ ստորամանիք էր այդտեղ: թէ և տաք զգեստ-
ներ բաւականաշափ ունէինք, բայց էլի անսանի տառապանքներ
կրեցինք այդ գիշեր:

Հետևեալ օրը վերցրինք հետներս միմիայն անհրաժեշտ զգեստ-
ներ և մի քիչ հաց ու շարունակեցինք մեր վերելքը: Անմատչելի
ներ և մի քիչ հաց ու շարունակեցինք մեր վերելքը: Անմատչելի
քարակոյտերից մի կերպ անցնելուց յետոյ՝ հեշտացաւ ճանապար-
արակոյտերից մի կերպ անցնելուց յետոյ՝ համար չհասած, մեծ անդա-
հը: Բայց ժամի 12-ին, վեռ լեռան կատարը չհասած, մեծ անդա-
հը: Բայց ժամի 12-ին, վեռ լեռան կատարը չհասած, մութ ամսեր պա-
շողութեան հանդիպեցինք: Եզանակը խառնւեց, մութ ամսեր պա-
շողութեան հանդիպեցինք: Առաջ գնալ անկարելի էր: Սյու տեղի
մելի երկիւղ պաշարեց մեզ: Առաջ գնալ անկարելի էր: Սյու տեղի
մելի երկիւղ պաշարեց մեզ: Առաջ գնալ անկարելի էր: Սյու տեղի
կեցինք այդտեղ և ստիպւած ցած իջանք՝ մեր անձը փրկելու
համար:

Սակայն այդ կրկնակի անյաջողութիւնը յուսահատեցրեց պրո-
ֆեսորին: Նա ուզում էր անպատճառ հասնել իր առաջադրուծ նը-
պատակին, թէ կուզ ինքն իրեն վառնդի հնթարկէր:

Մինչդեռ նա այսպէս մտաւանջութեան մէջ էր՝ եղանակը
աւելի ու աւելի վառանում էր. սկսեց փշել դասնացունչ քամի.՝
աւելի ու աւելի վառանում էր. սկսեց փշել դասնացունչ քամի.՝
մէկ ու մասամբ պատեց գանգաթթը: Սակայն մի քանի օրից
մէկ ու մասամբ պատեց գանգաթթը: Սակայն մի քանի օրից
յետոյ, բարեբախաբար, եղանակը փշելուց դէպի լուր: Գրոփե-
յետոյ, բարեբախաբար, եղանակը փշելուց դէպի լուր: Օրոփե-
յետոյ, բարեբախաբար, եղանակը փշելուց դէպի լուր:

ըլ, խրառած դառն փորձից, չհամաձայնեցին այս անզամ ուղեկշել մեղ:

Մենք փարձեցինք պիտպացիներից վեց հոգու, իրբև առաջնորդների, նուև երկու զինուորի ու սեպառեմբերի 27-ին կրկին սկսեցինք մեր վերելքը դարձեռու արհմահոն կովմից:

Այս ճանապարհորդութիւնը, այս, շատ քաղցր էր մեզ համար. չէ որ Սոսին ուրն էինք ուզում բարձրունալ. բայց մեր հողին խոռվում, յուզում էին հապար ու մի հասկածելի մտքեր. մենք վստահ չէինք, թէ որդեօք մզչ պիտի վերապառնայինք...

Այս բոլոր մասաւանջութիւնների մէջ մեղ քաջալերաւմ էր պլրստիսորը. նա յորդորում էր մեզ՝ սրտապնդւել և յաղթահարել ամեն ուստակ գժւարութիւնների:

Հուսաւորում էր պայծառ, զուրեկոն արելքակը. մենք առանց դժւարութեան հաստնք այն բլրակը, որի սարուսում զիշերել էինք առաջին անզամ:

Սունեցանք ձեան սահմանին: Երեկոյանում էր. եղանակը սաստիկ ցրտեց, թէպէտ փայտ վառեցինք, կրակ արինք,—բայց էլի սանամանիքն իրենն էր անում: Մի կերպ անցկացրինք զիշերը:

Առաւուեան գէմ մեր առաջ բացւեց ահազնատեսիլ լեռան դէմքը. բնութիւնը պարզ էր, ոքանչելի: Եւ մենք մի արանետով առաջ շարժւեցինք դէպի վեր. Սրեգակի լուսասփիւռ ճառագայթները հրազարում էին շրջակայքը. Սասիս ուրը մայրական զթառտութեամբ առել էր մեզ իր թիկունքի վրա և բարձրացրում էր սարի գտգաթը՝ ամպաչու զառիկերով: Աւրախութիւնից մենք կարծէք թուզում էինք:

Կէսօրին հասանք այն տեղը, ուր կանգնեցրել էինք խոչք. Գիւզացիներից չարս հոգի տեղնուտեղը ընկան և չկարսպացան այլ և շարժւել—ոչ աջ և ոչ ձախ: Մեզ հետ միասին առաջ գնացսպներն էլ պահան չյոզնեցին՝ անընդհատ կացնածարութիւնից, որով նրանք ջարդառում էին ստույցը և ուր դնելու տեղեր պատրաստում:

Ամեն տեսակ տառապանք կրեցինք մենք. երբ սարի գտգաթը մեր աշքին այլևս չատ եւուր չերեց՝ էլ չնայեցինք նեղութեան—շատապով առաջ գնացինք՝ ժամ առաջ տեսնելու ցանկացած տեղը, շատերի գտգագելին: Սու էինք դադաթին. կարծես թի առած դէպի երկինք էինք ոլոնում. բայց մեր սաքերը արդէն լքել սկսնցին:

Միայն բուռն ցանկութիւնը մեղ ստիպում էր թոյլել առաջ ահանելու բերկը պին, ամբողջ աշխարհի ծննդառեղի:

Ենք հոդին լուս անհուն ուրախութեամբ, երբ սարի գտգաթը հաստնք: Շնորհաւորութեան ձայներ լուեցին ամենքին բերանք, իմ սիրուց արսին երկիւզած ցնծութեամբ, ըսլոր սոկորներս նից, իմ սիրուց արսին երկիւզած ցնծութեամբ, ըսլոր սոկորներս գապարաբեցին ինդութեամբ՝ երբ ես համբաւքեցի հայրերի լեռան գապարաբեցին ինդութեամբ՝ երբ ես համբաւքեցի հայրերի լեռան գաթը: Բուռն խորհրդառութիւններ պաշարեցին միոքս և ներքին յուզութերը արտասուքով պատեցին աշքերո...

Անպատմելի ժամեր անցկացրինք այնուղի: Երեք մասնում էր մայը մանելքուն. միայն երկու ժամ ցերեկ էր մացեր եւ մինչ պրոֆեսորը օգուշտական գործիքով չափում էր լեռան բարձրութիւնը՝ ես ամեն ջանք թափում էի ձեռք բներելու մի որի է իր, թիւնը՝ ես ամեն ջանք թափում էի ձեռք բներելու մի որի է իր, որ յիշուառեկի համար պահէի մօսա. սոկայն ձիւնաշնչի սառուցի ահապին կուտահօւթիւնից ոչինչ չկարողացայ գտնել:

Երբ մենք ազում էինք վերապահանակ՝ ես վերցրի ո. Յակոբայ վարչից բերած փոքրիկ խոչը և իմ ձեռքով սնկեցի սարի գտգավարքից բներած փոքրիկ խոչը կողմէց: Նետ վերցրի նաև մի փոքր ձիւն, որ թէն հալեցաւ ճանապարհին, բայց նրա ջուրը մի քանի օրից յեաս տարայ հասցը իշմիուծին:

Ճիւուր հրաժեշտ ուինք Սասիս գագաթին և սկսնցինք մեր վարէջքը: Գիշեցը մօս էր և մենք քանի հետանում էինք գտգաթիչները: Վիշեցը մօս էր և մենք քանի հետանում էինք գիշէ թից, տեկիք էլ փղձկասիրու խանդադատնքով նայում էինք գիշէ թից... Վիշեցապէս ցած եկանք և հասանք այնանք, ուր Ցացել էին մեր ընկերները. ամենքը անսահման ուրախուցն:

Ենք այս ճանապարհորդութիւնը, առաւուեանից սկսած մինչև սարի գտգաթ հասնելը, տեսց մօտ 20 ժամ: Կէս ժամ մացինք սարի գտգաթ հասնելը, կեռան բարձրութիւնը հասնում է մինչև 16,200 Փրանայնակեղ: Կեռան բարձրութիւնը հասնում է մինչև 16,200 Փրանայնակեղ: Կեռան բարձրութիւնը հասնում է մինչև 16,200 Փրանայնակեղ:

Արևի և վեր

Յ. Յավանելիւեան

Դէպի վեր, դէպի վեր... Անվերջ է ուղիու,
Յոդնեցան բաղութիւնը՝ այս կուռուն տնզօր,

Սպառեցաւ և վերջին ոյժն էլ ծնկներիս—
Դէպի վեր, սարն ի վեր, քաջասիրտ զինւոր:

Աւելի կարծրանան թող այս սկ ժայռեր,
Աւելի թող սպառնայ անդունդն ահուոր,
Դեռ շունչ կայ բերանումն, շարժւութ են ձեռքեր—
Դէպի վեր, սարն ի վեր, ով արք զինւոր:

Դեռ հեռու է կատարն անտամալ ու յստակ,
Բայց եթէ չհասնենք այնտեղ մենք այսօր,
Վաղն այստեղ ենք անշառշա, մերն է յուղանակ—
Դէպի վեր, սարն ի վեր, անվեճեր զինւոր:

Արտաւազդ

Զարկեցէք, դարբիններ, կըսանը սալին,
Զարկեցէք կըսանը—շղթայքն ամրանան
Անիծեալ արքոյի կապանքն ամրանան.
Զարկեցէք, դարբիններ, կըսանը սալին:

Անարկու ամպերը եկան ժողվւեցան,
Ծեր Մասեաց ճակատին սկ քող փաթթեցին,
Դուռը է փոթոիկ զազանի նըմտն,
Հառաչում, սուլում է կատազած քամին.



Յ. Յովաննիսեան

Զարկեցէք կըսանը. խորունկ քարայրից
Անա չար հողմի հետ հասնում են ծայներ...
Ճոլացաւ փայտակը—արքայի աշքից
Դէպի վեր թռչում են բարկութեան կայծեր:

Կամի նա ելնել վրէժինդիր հողով
Իւր անվերջ տանջանքի թոյնը մահաբեր
Ալխարհի չորս կողմը շաղ առլու մաքով,
Բայց ամուր են նրա ծանըը շղթաներ:

Մտերիմ գամփաներ կըծում են կապանք,
Կըծում են անդունդը կապանքն արքայի...
Արտաւազդ, վերջ շունչ նոգուդ տառապանք,
Եւ դեռ զատ հեռու է վախճանն աշխարհի
Զարկեցէք, դարբիններ, կըսանը սալին,
Զարկեցէք կըսանը—շղթայքն ամրանան,
Անիծեալ արքայի կապանքն ամրանան.
Զարկեցէք, դարբիններ, կըսանը սալին:

Ուխտագնացութիւն

Սկզբ

Այզինների նեղիկ, ստւերու փողոցներից գուրս եկանք լայն ու
արեւու գաշտը:

Մեր տաջեռում ընկած էր փրչոտ, աւազածածկ հարթ ճանապարհը:
Աւխտաւորները, կարծես շղթայից ազատւած, մէկէն քշեցին
ձիերն ու տարածւեցին լայն ճանապարհի վրա. Հրճւանքի անզումպ
աղազակը, միախառնւելով ձիերի վրա կախւած զանգակների ահազին
զըրնգոցին, թնուացրեց օդը՝ ուզու լայնարձակ զաշտի մէջ. Փոշե-
ղէն ստավերի թանձր գուլաներ բարձրանում էին վեր, հրբ-հրբում,
փաթաթւում էին իրար և արտգ քշում, կորչում էին փոքրիկ քա-
մու առաջ:

Իրար խանւած, ուրախ ու ցնծագին՝ արշաւում էր քարւանը:
Ամենքը հրճւում էին:

Նայում էի թեթև ու զարդարուն ձիեր նստած երիտասարդնե-
ներին, որոնք՝ քարւանից առաջ ընկած, խազանում էին ձիերը,
պատոյտներ էին գործում դաշտի մէջ և բաց թողնելով ձինաց սոնձե-
րը, մըրքի նման արշաւում էին բաց դաշտի մէջ, դէպի առաջ. Մենք
տեսնում էինք նրանց ետերից բարձրացող փոշու սիւները և լսում
էինք ձիանց սմբակների հետգինուէ նւազող ուժգին տոփիները:

Սիրտս հալում էր. ես նայում էի և այնպէս ջերմ փափագում
էի լին երիտասարդ, նրանց պէտ հագնել շողողուն զէնքեր, սան-
ձել մի կատաղի նժոյգ, ճանկել նրա բաշը և զաշտերի վրա վաղ-
վող հողմին մրցութեան կրծնչեր:

Բայց ահա երիտասարդներն արշաւեցին առելի առուջ և անյառացոն մեր աշըերից:

Առ եռ իմ խեղճ ձիու վրան էի և ոտներս թափահարելով խեղճ էի նրա կողերը. ձին հազիւ արնկտընկալով վտառում էր, իսկ և և մօրաքոյքո վեր վեր թռչելով ծիծագում էինք.

Աւրախ ու զւարճալի էր քարւանը, իսկի չէին լուռմ երգը, դրոյցը, կանչն ու ծիծաղը. Փոքրահասուկ տպաներն ու աղջիկները. վառ-վառ տօնական հագուստներով, ճշում էին ձիերի վրա և ձեռները վեր բարձրացնելով ծափ էին զարկում. Զարմանալի շատիոն էին զարձել կիսերը. Շատերը քնքութեամբ զրկել էին կրծքերի վրա փոքրիկ երեխաներ և զլուխները խօսնարհած նրանց ժայռացող գէմքերի վրա, մանկական լիզուվ թոթովում էին առուջ ու սիրուն բառեր:

Պառաւներն ու ալեռները ձիերի վրա կուճ եկած՝ շարունակ ետ էին մուռ ու կանչում էին, որ առաջ շվագենք:

* *

Մեր ճանապարհն ընթանում էր մերթ արկի տակ, բայց զաշափ և մերթ երկու կողմից բարձրացած սաղարթախիտ ուռների տակով:

Բողարի այս աբարթը Մինասն ամենեկին չէր կարող մոռանալ,
մինչեւ հիմտ նրա կինը՝ Օսանը պահանջում էր, որ նա Բողարին
տանէր հրացանադարկ անէր և կամ գայլերի ատամներին բաժին
դարձնէր...

«Ինչպէս, ինչպէս ետ իմ կեանքը փրկողին տանեմ իր կեան-
քից զրկեմ», այրւած սրտով ինքն իրեն խօսում էր Մինասը և ցա-
ծը, զսպւած հառաչ արձակում:

— Տար, ի, սէր Սատծն, տար էդ անտէրը. այսօք էլ դունչը
կոխել էր թանի կճուճը, մի շաբաթ առանց թանաղուրի ենք մնա-
լու, — կատաղած գոռում էր Օսանը,

«Ի հարկէ, քաղցած որ մայ, գլուխը թանի մէջ էլ կըկսիի ու
մածնի մէջ էր, ուզում էր կնոջը պատասխանել Մինասը, սակայն
կուի տեղիք շտարու հոմար, լուռ մայ:

— Կացնով գլխին զարկի, որ սատկի՝ բայց չսատկաւ. ախը ին-
չի պէտք է այդ շունը, որ սադ ես թողնում:

Մինասը թօնրատնից գուրս նայեց և տեսաւ, թէ ինչպէս շունը
ծանը հարւածից գլուխը մի կողմ ծռած՝ սասաիկ բարձր կաղկան-
ձում էր և բրդոտ բաշը ցնցում, որի վրա էր գտնուում վէրքը:

Բողարը մի խղճալի հայեացը ձգեց Մինասի երեսին, կարծես

գանգատւեց, որ էլի ծեծել են. նորից գլուխը կախեց և կաղկան-
ձիւնը շարունակեց:
— Խեղմ, խեղմ Բողար...

Մեր Բուրջուկը

Սկսակ

1.

Մեր Բուրջուկը մի եղն էր, մի աննման եղը. ոմնն բանով
լաւ ու գովական, տեսքով, շէնքով չնորհըով, սազական։ Խըը
կարմիր էր, պոզերը չալ, վերև կուացած, աչքերը նախշուն, ճա-
կատը լայն, վիզը հաստ, ուսն ուժեղ, պոչը երկար—ծայրը փունջ։

Բայց չկարծէք, թէ միայն աբտաքինով էր գրաւիչ. ոչ, ոչ,
ա հասկացող, ըմբռնող, խելօք, շատ խելօք եղն էր։ Մեր բոլոր
նարատերի աեղը նա ինձնից լաւ էրճանաշում, մի անգամ իր գնա-
ցած ճանապարհը երբէք չէր մոռանում։ նրա սայլը շուռ չէր գու-
ցած ճանապարհին չէր մալ—նրա ակօսը ծուռ չէր լինիլ, հոդաղը նրան
ճանապարհին չէր մալի. Ժամերով ուշը էի դարձնում, հետեւում էր, և
ճիվուուվ չէր խփիլ. Ժամերով ուշը էր դարձնում, հետեւում էր, և
նրա անիւը, թէկուդ մատ ճանապարհին, մի փոսի մէջ չէր ընկնիւ
քարի վրայով չէր անցնիլ։

Մեր Բուրջուկը զգում էր իր տիրոջ հոգու ուրախ ու տիուր,
բարկացած ու վշտութիւնը և վիտէր նաև իր անելիքի տե-
սակը։

Ուժեղ էր նա, օ շատ ուժեղ. նրա համբաւը, նրա անու-
նը, նրա փառքն ու պատիւը հենց այդ իր ուժն էր. մեր գիւղում
չկար հետը մրցող, նրա հետը լուծ անող և ոչ մի եղն։

Շըշակայ գիւղերում նոյն իսկ յայտնի էր նա։
Անթիւ, անհամար դէպքեր եմ յիշում, երբ նա իր ուժով զար-
ծութիւ, անհամար դէպքեր եմ յիշում, երբ նա իր ուժով զար-

ծութիւ, անհամար դէպքեր եմ յիշում, երբ նա իր ուժով զար-

ծութիւ, անհամար մի փոքրիկ հովիտ կայ, որով անցնում է

Մեր գիւղի հանդում մի փոքրիկ հովիտ կայ, որով սայլերն այդաղից անցնելիս դէմ

պարհը խիստ վատացել է, բոլոր սայլերն այդաղից անցնելիս դէմ

և առնում քարերին և ահագին դժւարութիւններով առաջ անցնում:

Մի անգամ բարձած սայլով երբ այստեղ հասայ, ուզեցի իրը թէ հեղա տեղով ոչ թէ Բուրչուկին, այլ միւսին քշել, բայց, հակառակի պէս, չկարողացայ և երկու անիւն էլ միւսին մեծ քարին դէմ ընկան։ Մոլորւեցի, մնախ։

Հենց այդ ժամանակ Զիլաւանց գութանի տասներկու լուծ եզն ու գոմէշը բերեցին ջուր տալու. առանց երկար մտածելու, թողեցի սայլը և գնացի Զիլաւանց Թաթոսի յայտնի Սէլան գոմէշը քշեցի, որ բերեմ, Բուրչուկի հետ լծեմ, սայլը գուրու հանեմ։

—Մի լծիր, այ աղայ, էդ գոմէշը մի լշիր. եղը մեղք է, էն մէկէլլ տար,—ասում էին գութանաւորները։

Ես յամառել էի, կոտրւել չուզեցի։ Երբ լծեցի գոմէշը և ուզում էի լծանը նստել—«եզանը ճիպոախ»—ասացին նրանք. բայց ես ամուր խփեցի Սէլանի կողքին, —ուսիդ մատադ Բուրչուկի, —ասացի։ Մոնչաց եզն, ճանչաց սայլը. կռացաւ գոմէշը, Բուրչուկը չոքեց, ճանկրուեց, քիչ յետ-յետ գնաց, բայց նորից ձգուց և անիւր հանեց։

Սայլը գուրս եկաւ անդունզի միջից։

Այն ժամանակ ծեր Թաթոսը, այդ յայտնի մաճկան ու ուսնչպարը, որ հարիւրաւոր եղ ու գոմէշ էր բանացրել, աչքերը լցւած, կռացաւ, համբուրեց եզան ճակտար, ապա, գառնալով հաւաքւածներին, տասց։

—Մի ոռս զերեզմանումն է, ես էսպէս բանը տեսած չեմ, հաւու է Բուրչուկին իրան կերածն, անունն ու պատիւլ։

Էլ որ մէկն ասեմ, որը թողնեմ, շատ, շատ բաներ է արել մեր Բուրչուկը, անտառի ճանապարհին, թէ քարւանի ժամանակ, թէ սարից իշնելիս, թէ խուրձ կըելիս, թէ գութանումը, թէ հենց կալումը։

Այսպէս Բուրչուկը մեր ամեն ինչն էր, մեր տունն ու տեղը, մեղ հաց աւողը, մեր փայտ բերողը, մեր աջու ձեռը, մեր մի ախուզէր։

Միաւում էին նրան մեր բոլոր բարեկամները. իսկ անեցիք, մտնաւանդ երեխաները անչափ էին սիրում նրան։ Երբ նա տառից էր գար, գազի առաջը կը կանգնէր և հսկայ բառաչով մօրս իմաց էր տար, թէ ինքը եկել է, մայրս միշտ կ

ջան, Բուրչուկ ջան։

Անունիդ մեռնեմ, արեիդ մեռնեմ,
Դոնաղիդ մեռնեմ, ես ուսիդ մեռնեմ,
Բուրչուկ ջան։

2.

Այսպէս տասը տարի եզնութիւն արաւ Բուրչուկը, հալալ ու ուրախ, կտրիչ ու դւարթ։

Բայց սկերես լինի ծերութիւնը, մեր Բուրչուկի զլսին էլ դժբախտութիւն բերեց. Աշնան ցեխերին, անտառի ճամփին, սայլն դժեցնելիս, եղբայրս Բուրչուկին չի լծում, խնայում է ծերութիւնը, բայց միւս եզները չեն կարողանում սայլն իշեցնել և ստիպւած նորից Բուրչուկին է լծում. . . և ինչ սոսկալի բան... ակը գալիս է, կպչում է ոտին և պատռում կճղակը. Վայ է տապակը գալիս է, կպչում է ոտին և պատռում կճղակը. Վայ է տապակը իսկած եղբայրս, անիծում, ճամփին, անտառն ու փայտը, հայլիս իսկած եղբայրս, անիծում, ճամփին, բայց էլ ինչ կարող էր անել։ Մի կերպ տուն է հասնում և լուծն ուսից վերցնում։

Էս էր ու էն, էլ չառողջացաւ, էլ հօռօվել. չլսեց, էլ սայլ չքաշեց մեր Բուրչուկը։

Ամբողջ ձմեռը տնքալով, վրչալով ապրեց խեղճը. Գարունը որ եկաւ, Բուրչուկին թողինք ազատ իր կամքին, ուր ուզի, գնայ, ուր ուզի, արածի։

Նա խելօք էր. երբէք, երբէք արտի մէջ չէր մանիլ, մի ծիլ շէր կոխ տալ, մի հասկ չէր ծովիլ—երկու արտերի մէջ զգուշութեամբ կարածէր, իւր կաղ ոտը քաշ տալով։

Այդ ամառ մի օր մի սայլ խուրձ ունէինք բերելու. մեր եզն սերը գութանում էին, բայց հարեւանի մի եղը կար և Բուրչուկին էլ եկել էր աղ լիզելու. թէս չէնք ուղում Բուրչուկին լծել, էլ կարող էր լուծ քաշել, լծեցինք և զնացինք խոտը բերելու։

Ճանապարհին զգում էի, որ անգթութիւն է Բուրչուկին լծելու. Շուտ-շուտ յետ էր նայում, կեռ-կեռ պողերով լծանը խփում։

Երբ յետ էինք զալիս սայլը բեռնած, լծակիցը նրան սպմում էր, ճանապարհից հանում և այդ բանը ուսւը ուշաք ուսւ ծակում

Եր սիրտս: Մի աեղ էլ յանկարծ խիստ ծանր զնչեց. նայեցի դէմ-
քին, օ, անհաւասալի բան—արտասուժի խոշոր կաթիները գլոր-
ւում էին Բուրջուկի աչքերից. նու լաց էր լինում իւր ծնրութիւ-
նը, սպում իւր բախտը, անիծում օրը:

— Ախաղէր, եղը լաց է լինում,—ասացի եռ յուզւած:

— Կողքից մի գնուլ,—ասաց եղբայրս լացակումած և եր-
կուս էլ անցանք սայլի յետել և լուս ու մունջ հետեւում էինք
սայլին: Այսպէս մինչև տուն յետկից եկանք:

Երբ բաց էինք թողնում եղները, եղբայրս համբուրեց Բուր-
չուկի ուսը և լտրով առաց.

— Հալալ արա, Բուրջուկ ջան, ինձ քո ամագը:

Բուրջուկը լիզում էր եղբօրս ձեռքերը, իսկ նա, յենւած նրա
պողերին, լալիս էր:

Սիրտս շարժւեց, թողեցի և տուն մտայ...

Փիսօն ու փեսան

Զաւախիեցի

Մարիամ աքիրը մածուն էր մերել,
Մածուն էր մերել, մառանը դրել,
Ու երեկոյեան նոր փեստն որ գայ,
Սեր—ձւածեղով մի լաւ պատիւ առայ.
Ու երեկոյեան եկաւ նոր փեստն,
Խոչկախ աղուիրը լիք բերնէ-բերան:
Խաչկախ աղուիրը լիք բերնէ-բերան
Կաղին-քիշմիշով, համով կանֆետով,
Բազգառ-խուրմայով, չիր ու փշատով...
Կաղին քիշմիշը՝ տոն ջահէններին,
Չիր ու փշառն անէլ հարսներին,
Բազգառի խուրման՝ պառաւ Գիւլնանին,
Համով կանֆետն էլ չար մանուկներին:

Ու մեր փեստն եկաւ, եկաւ նստաւ
Հով թոնրի վրա, ալ դօշտի վրա,
Հպարտ բազմեցաւ:

— Այ բորով եկար, դու աղիղ փեսայ,
Իմ աղիղ փեսայ, դուն բարով եկար,
Դուն բարով եկար, աղլուխով եկար,
Դուն ինձ հիւր եկար, ինչ լաւ օք եկար,

Էս զլիխո եկար:

Մածուն եմ մերել, մածունն եմ դրել,
Երեսի սերը քեզ համար պանել,
Կարմիր ձւածեղն երեսին դրել
Քեզ միտյն վայել...

Մարիամ աքիրը գնաց, որ բերի,
Գնաց, որ բերի ու փեսին պատւի,
Գնաց, ինչ տեսնի.

Գող փիսօն մտել, մածունը թափել,
Ձւածեղն անսուշ կերել ու լափել,
Կծուճ—քրեզան սիրուն լպստել,
Իր աղիղ փեսին ոչինչ չի թողել...

— Վայ, քուանամ ես, բոռո ու-երես,
Գետինը մանես, ու նողն անցնես.
Ու ջուրն ընկնեմ, ինչ ձիւն տամ զլիխո,
Էլ ինչով պատւեմ իմ աղիղ փեսին...

Այս բոռո կատու,
Վայ բոռո կատու,
Թէ ձեռքո ընկնես գու...

«Ի՞նչ, Մարիամ աքիր, էտ ինչ է եղել,
Երկինք է պատուել,
Գետին հոգ կարել,

Թէ տառմերդ են չըր սոկոր դառել»
— Էհ, ինչ ես ասում, փիսայ ջան, դու էլ,
Հանագ անելու ժպմանակ Բո գտել...
Կատաւն է մտել, մածունը կերել,
Սկ-երես կատաւն կերել է, լափել,
Իմ աղիղ փեսին բաժին չի թողել...

Այս բոռո կատու,
Վայ բոռո կատու,
Թէ ձեռքո ընկնես գու
«Ի՞նչ ասիր, զօքանչ, ոյդ ինչ է եղել,

Կատուն է մտել, մածունը կերել
 կերել է, լափել, փեսին չի թողել...
 Վախ բոո կատու,
 Իմ վայս տաս դու
 Թէ չանեմ եռ քեզ
 Հալալ երկու կէս...
 Զօքանչ, այդ լըրին պէտք է պինդ փակել,
 Պէտք է պինդ փակել ու մի լաւ թակել
 Որ չը յանդգնի իր կեանքում մէկ էլ
 Փեսի փայն ուտել,
 Անբաժին թողնել...
 ԱՌ բոո կատու,
 Թէ ձեռքս ընկնես դու...»

 Ու ելաւ փեսան, մեծ մահակն առաւ,
 Մեծ մահակն առաւ և մառան մտաւ.
 — Դէ, դսան դէմ կաց ապա մի, զօքանչ,
 Տես, թէ ինչ կանի՛ քո փեսան էս քաջ,
 « Ըմմ... միանւ... » կանչում է կատուն
 Թարաքից թաքուն,
 Մլաւում, խնդրում է մեր Մարիամ աքոր,
 Կճուճի ետքից խնդրում, աղաջում.
 « Էս անգամ ների, ես էլ չեմ անի:
 Թէ մէկ էլ անեմ զրոյլ տանի,
 Երգւում եմ ահա մկների սիրուն,
 Այդ փեսիդ խաթրուն,
 Ըմմ... միանւ... միանւ...
 — Ի՞նչ ներել-մերել, մածունն ես կերել,
 Բոլորը լափել,
 Էլ մնց թէ ներել
 Այ թէ քեզ ներել:
 Ու թրախկ, մահակն ուղիղ թարաքին...
 Կճուճ ու ափսէ թափան յատակին,
 Սատանայ կատուն թարաքից թուաւ,
 Խեղ Մարիամ աքոք քիթ երես ճաւ կուաւ,
 Ու դուան ճեղքից փըշտ արաւ, փախաւ,
 Դուրս փախաւ, պրծաւ...
 ԱՌ, բոո կատու,
 Վախ բոո կատու,
 Թէ ձեռքս ընկնես դու...

Եղբ մեզանում և Երոպայում

Ա.

Կ. Մ. Շահնազարեան

Զեմ կարծում, որ էշ անսած չմինիք, այն կենդանին, որին երկայնականչ էլ են ասում մեզանում և մեծ թէ փոքր համոզ-
 ւած են, որ նրա պէս յիմար արարած չկայ աշխարհումս: Յիրաւի,
 կանգնիք էշի զիմաց, մի լաւ նայիք նրա քիթ ու մոռութին, զը-
 գումի պէս կախ ընկած կարկած զիմին, լատան-լատան ականչ-
 ներին, խոշոր ու թըմբած աչքերին, տպեղ կերպարանքին ու շար-
 ժւածքին և կըտեսնես, որ «էշ» ադունը շատ սազ է գալիս նրան:

Մեղանում իշուկը, քանի որ մէջքին փալան չի գրւել ու կող-
 քերին ճիպոտ չի զիպել, մի շատ ուրախ ու կայտառ կենդանի է.
 Քերին ճիպոտ չի զիպել, մի շատ ուրախ ու կայտառ կենդանի է,
 նսուառում, խը լոք անում, աջ ու ձախ թոշկոտում, կապկութիւններ
 անում, մի խօսքով նա շատ գրաւիչ է իր խաղերով:

Մեր իշուկի տարին դեռ Արացած, անսում ես խեղճի մէջքին
 մի ծանր փալան դրին, փորքաշով պինդ կապեցին ու մի քանի
 փութ ծանըռութիւն բեռնեցին, զիւղ կամ քաղաք տանելու: Մեր
 իշուկի ուժը չի պատում այդ բեռանը. նա ճըկը-ճըկը է անում,
 մէջքից երկասկամ է, ուրքերը դողդողում են, ուզում է ճիլւել
 բեսի տակ, մէկ էլ յանկարծ տիրոջ ճիպոտ զաւակին այնպէս է
 շըմմինում, որ զամանքից թէ սարսափից երկու գաղ տուաջ է
 թոշում: Ել կըհամարձակւի մեր իշուկը տեղը կամ ճը-
 կուիլ. ճիպոտը միշտ շարժւում է ետեից. ինչքան ուզում է թոզ
 մէջքը կոտրի, ով է նրան հարցնողը...

Գնում է անթալով մեր իշուկը, քրտինքը լրի պէս գազում է
 նրանից, բերանը փրփուր է կապում, աչքերը մթնանում են, ու
 ծուռում է ճանապարհից. ճիպոտն ուզում է նրա ծուռ քայլը. ուշ-
 քը գլուխն է գալիս, անսում է, որ իր երազած երջանիկ աշխար-
 հը չէ սա, ուր միշտ կարելի է տրտինդներ տալով ապրել:

Տարունակում է լուռ ու մաւնջ իշուկը իր ճանապարհը, ահա
 յանկարծ տեսնում է քիթ տակին զիմները բարձրացրած փափուկ
 յանկարծ տեսնում է քիթ տակին զիմները, բանջարներ, ախորժակը բացւում է, զուտիք
 ու զիթ-զիթ խոտեր, բանջարներ, ախորժակը բացւում է, զուտիք
 ծուռում է գէպի բոյսը, բերանը լայն բաց անում ու հենց որ ուզում է
 հափ-կծել, տիրոջ դագանակը՝ թըմբիկ զիպչում է չոր գիմին. աչ-
 քեր կըտեկ են կտրում ու դատարկ ծնուները երար շըխչըխկում...

տում արտծելու, իր ցանկացած խոտն ուտելու, իր ուզած ջուրը խմելու, ոչ ոք նրան չի արգելում, ոչ ոք նրան բէղամաղ չի անում. առաջւան պէս ամենքն սիրում են նրան, ինքն էլ նրանց է սիրում. սէրը՝ սիրոյ փոխարէն...

Մեռնում է Եւրոպայի էշը ոչ թէ բեռան տակ, սկզո՞ն ու կաշին մնացած, այլ հանգստառթեան մէջ, խոր ծերութեան հասած. նրա վրա ցաւում է տէքը, մանուկները արտասուում են էշի վրա ու յարգանքով թաղում գիւղից մօտիկ մի փոսի մէջ.

Ահա այսպէս են վարւում Եւրոպացիք, ուր յիմար անասուններն էլ խելօք են, իսկ մեզ մօտ մեր խելօքներն էլ յիմարանում են, որովհետև մենք չգիտենք նրանց դրաւել, կրթել, խնամել:

Արցունքներ

8. Մալխանեան

1

Առաւոտը տեղաշորիս մէջ դեռ սկանկած էին, երբ ներս մտաւ հօրեղայրու և յայտնեց, որ մեր սպիտակ մաղեանը զիշերս որձ քուսակ է բերել:

Ուրախութիւնից սիրաւ թնդաց: Շտապով հագայ շորերս ու զազեցի զէպի գոմը: Գոմի գուոը բաց անեուն ողէս տեսայ նորածինը: Նա առթի ննման սև էր և փայլուն. ողորկ, կոլոր, սիրուն:

Ուրախութիւնից խելքս կորցրած՝ մօտ վազեցի նրան գրկելու, համբուրելու: Իմ այդ յարձակումից վախեցած՝ նա երկու ոստիւն գործեց և մօտացաւ մօըը:

Մայրը կամացուկ խըխնջաց, հոսուաց ձագուիին, դունչը տարաւ զէպի նրա զլուխը և կարծես-ականջին տաց՝ «մի վախիր, դա մեր բարեկամն է», և ինձ թոյլ տւեց մօտենալու:

Ես ձեռքս քսեցի զլիխն, բաշխն. նա այսպէս նուրբ էր, ինչպէս թաւիշ, այնպէս փոփուկ։ ինչպէս մետաքս. շշափեցի նրա մէջքը, ոտքերը, փարւեցի զզովը, համբուրեցի դունչն ու երեսը և սպատիկ ուրախացած ելայ դուրս ընկերներիս հաղորդելու իմ բախտաւորութեան մտսին:

2
Քարուն էր արգէն. ջրերը բարձունքներից թափւում էին ներքեւ, նախ հարթավայրերում սփուռում, ապա միանալով զետակների ու զետերի հետ՝ դիմում գէզի մայր ծովը: Ծառ ու մացառ, խոտ ու ծաղիկ իրենց գլուխները համարձակ դուրս էին հանել: Սրկնքի ամպերը կապանքներից ազատած՝ արձակ լողում էին երկնակամարում, մերթ կայժում, մերթ անձրեում...

Կենդանիները մի անսահման խնդութեամբ կայտում էին գալարոտ տեղերում, վեր-վեր թռչում, կեանք վայելում: Կայտում էր և իմ սեաթոյր գուռատկը. շարունակ պայտյուններ էր գործում մօր շուրջը, վազում-վաղվում, էլի մօտենում մօըը, մի երկու ումզ համեղ կաթիլ ծծում ու դաբճեալ շարունակում կայտուել:

Իլին երբ երեկոներն արօափ գալիս էր գիւղ, ես գնում էի քուսակիս իր մօր հետ տուն բերելու:

Մի օր էլ երբ դարձեալ վնացի նրանց տուն բերելու՝ քուսակս չդայայ իխու մէջ, ոչ էլ նրա մօըը: Տիուր տուն եկայ և եզելու շուրջը յայտնեցի հօրեղբօրս: Հօրեղբայրս զրուխը կախեց, քիչ մտածեց, ապա ձի նստեց, զնոց վնարելու:

Աւշ, շատ ուշ զիշեր էր, երբ նա վերադարձաւ տուն և յայտնեց, որ ոչ մի աեղ չէ գտել, վազն առաւոտ հարկաւոր է աւելի հետունները որոնել:

3

Ես ամբողջ զիշերը վշաից չկարողացայ քնել. քուսակիս կարուն ինձ տանջում էր, կասես, կեանքիս կէսը կողցը էր: Վերջապէս լուսացաւ և մենք մի քանի հոգով վնացինք պատելու:

Ես վնացի զէպի հարաւ, անցկացայ մի ձարակ, բարձրացայ մեր գիւղի մօտի սարի գլուխը, ապա թեքւեցի սարի քարքարուած որի անունը մինչև օրս էլ «Գայլիներ» է. այնաեղ հարթավայրը, որի անունը մինչև օրս էլ «Գայլիներ» է. այնաեղ նկատեցի մի սպիտակ կէտ. ճանաչեցի այս. դա մեր մաղեանն էր. նկատեցի մի սպիտակ կէտ. ճանաչեցի այս. դա մեր մաղեանն էր.

Հասույ: Նա ինձ տեսնելուն պէս մի վցուակ իրինչ արձակացաւ կախեց ներքեւ: Ես աւելի մօտեցայ նրան և կեց և գլուխը նորից կախեց ներքեւ: Ես աւելի մօտեցայ նրան և մի տեսայ նրա աշխ մի թարմ կմախք. սարսափ եկամ վրաս, և մի սպիտակ ուղոչն էր ծածանուում թեթի գարնանային զեփիւոի աւշն: սպիտակ ուղոչն էր ծածանուում թեթի գարնանային զեփիւոի աւշն:

Էլին. Նրա ու սմբակներից ճանաչեցի ես:

Կակծից սիրու մըմուղ. ծանր վշտով լցւած նայեցի մօրը և
տիսայ, թէ ինչպէս անխօս կենդանին այդ ժամանակ հոտոտում
էր իր զաւակի մարմի մնացորդները և աչքերից ճեղեղի պէս ար-
տասուք թտփում:

Արդէն ուշ էր. ուզեցի նրա բաժից բռնել-տանել տուն, սա-
կայն նա՛ գժզոն կերպով ջարժեց գուշուը, խլեց բաշը ձեռիցս,
ֆոկաց և նորից սկսեց զաւակի մնացորդները հոտոտել, լիդել ու
արտասւել:

Հօրեղբայր երկար որսնելուց, երբ ոչ մի տեղ ոչինչ չէր
գտել, քայլերն ուղղել էր դէպի գիւղի հարաւային կողմը: Նա
եկաւ, գտաւ ինձ. տեսաւ քուտակի ընկած կմախքն ու արտա-
ւող մօրը, մի քանի օրովէ մասց արծանացած նայելիս, ապա
երեսը շրջեց դէպի ինձ ու հազիւ լսելի ձայնով թոթովից.

— Խեղճ անասուն. գայլերն են պատաստել կերել, կմախքը
թողել են այստեղ, — ապա լսու քայլերով մօտեցաւ կենդանուն,
ձեռքի թոկը անցկացրեց նրա վիզը և քայլերն ուղղեց դէպի
գիւղը:

Այն օրւանից մեր սպիտակ մագեանը յաճախ երեկոները
տուն չէր գալիս. նրան գտնելու, տուն բերելու համար ես միշտ
գնում էի «Գայլըները» և շտրանակ նրան տեսնում էի այն-
տեղ իր զաւակի գերեզմանի վրա արտասուք թափնիխ:

Մկների ժողովը

Ար. Խնկոյեան

Մուկը ընկաւ դննէդուռ
էլ չը թողեց տուն-կտուր,
Զահէլ ահէլ գեղովի
Զաշերից ջոկ, տեղովի,
Կանչեց, բերեց ժողովի,
թէ ինչ անեն, որ կատւէն:
Մի նարքով տղատւեն:
Եկան գեղի ջոշերը,
Երկար բարակ պոչերը

Մամնակցեցին խորհրդին,
Մի մուկ խօսեց իր հերթին.
— Լսէք, մկներ, ցեղակից,
Չունիմ որդի, կողակից,
Ես մի անտէր ծերուկ եմ,
Բայց պատւաւոր մի մուկ եմ.
Պակսեց ուժը իմ սոի,
Պէտք է մեռնեմ անօթի.
Սովու է չոքել դուսնը,

Ա'խ, այս կատաւն, Մռունք,
Սակց սատկում, տաղ անում.
Մուկ է տեմում, վազ անում.
Բոնում զլիխց, կախ անում,
Թաթռվ տալիս, խաղ անում,
Ուտում, քէֆը չաղ անում,
Էսպէս զուլում ու կրտի,
Դեռ աշշերն էլ ջուխտ ճռակ.
Բայց թէ ապնիւ մեր ցեղը
Կորչելու չէ զուր տեղը.
Ցան էլ ունի իր գեղը:

Այ, բերել եմ ես մի զանդ,

Ծափ-ծընդոց,

Մէջը զնդոց:

Կատւի զիք մենք կախ տանք,

Որ ինչքան էլ օրօրայ,

Որ ինչքան էլ շորորայ,

Սոկց ստոկի, տաղանի,

Գանի իմաւանք գազանի:

Ե, զանդը մկ կախ անի.

— Այօ, դնւ.

«Ալծն ամսի».

— Բայօ, դնւ.

«Բալծն կոխէ».

— Զալօ, դնւ.

«Զալծն կաղ է».

— Մատօ, դնւ.

«Մատօն կարճ է».

— Փատօ, դնւ.

«Էդ էլ խեղճ է».

— Համբօ, դնւ.

«Ես տկար հմ».

— Զամբօ, դնւ.

Ասենք տարայ,

Բո որ կատուն զայ ինձ վրձու:

— Բառն, Խոօն, թոնդ մէկից

Բոնեն կատվին քամակից:

«Ի՞նչ է խօսում շոր դանգը».

Լաւ է զու տար էղ զանգը:

էլ ինչ Բոօ, ինչ Փատան»:

Ճանաց Բառն ճուտեմստան»:

— Լոի յանդուգն».

Կոտրւիք դուք.

Կախուներիդ և Բաղեմ»:

Ճառ առեմ, թէ զանդ կոխիմ»:

Գոչեց ջոջը»:

Քաշեց պոչը»:

Մալորի ծառի վրա

Ն. Տեր-Նիկողոսիս

Մալորը հասել էր իրիկնաղէմ էր: Երեխան ելաւ ծառը
սոլոր ուտելու Բարձրացաւ ամենաբարձր ճիւղերից մէկի վրա
և սկսեց թաղել հասունաքած, կարմրին աւող, հեղքած քաղցրահամ
և սալորները: Երբէք այդչափ վերև չէր բարձրացած: Կանգնել էր
առարող առաջին դիւզի վրա, որ եթէ մի դորեզ շարժում անէր, պիտի
կոտրւէր անպատճառ:

Մասի վրա կար-աղքաւի մի բռն, որի մէջ գտնւում էին նրա

տգեղ ձագուկները: Նա կանգնած էր ազռաւի բնի տակ:

Յանկարք երեխան նկատում է, որ հարիւրուր ադռաներ զանազան կողմերից կաւելով՝ գալիս են դէպի սալորի ծառը: Սալորենին, որ լուսութառած էր պայծառ արևի ճառողայթներով, մի ակնթաքթում մթնեց:

Աւ ո՛ւ ազռաւները հստաքւեցին գլխին, նստուեցին ստլորենու ճիւղերի վրա և սկսեցին կատաղի կերպով կռաւել, լայն-լայն բաց ու խուփ անելով իրենց կռուցները:

Նրանք իրենց տեղերում չեն կարող հանգիստ մնալ, թաջում էին մի ճիւղից միւսը, պտոյտներ էին անում երեխայի գլխին, մօտենում էին այնչափ, որ նա զգում էր թէ ինչպէս նրանց թեւերը դիպչում էին իր մազերին: Մի քանիսը, աւելի յանդուցները շեշտակի յարձակւում էին վրան ու քիչ էր մնում աշքերը հանէին:

Երեխան իսկոյն հասկացաւ պատճառը: Այդ տգեղ, չարտառակ թռչումները եկել էին ազատելու երեխայից իրենց ընկերոջ բունը, որին վատակու մասին նա ամենակն չէր էլ մտածել:

Նա յուզւած է, նա թոյլ է, մենակ, իսկ թքնամիները կատաղի ու բողմաթիւ:

Շոբում է ճիւղերը: Ազռաւներն աւելի զայրացած՝ մի փոքր հեռանում են, բայց մինչև նա մի քայլ կանի գէպի ներքեւ, մինչև կըքանի մի հաստատուն ճիւղ իջնելու համար, նրանք աւելի և կռատղած, աւելի և բարձրաձայն կռուալով՝ յարձակւում են վրան և աշխատում են կռմ գլուխը կտցտհարել, կամ աշքերը նանել:

Օգնութիւն չի կանչում, հեռու են; նրան չեն լսիլ: Աշխատում է ինըը դիմադրել: Չարժում է անդադար ճիւղերը, միակ միջոցը, որով կարսդ է պաշտպանել:

Բարակ, վառնգաւոր ճիւղեր բռնելով իջնում է, առանց նայելու, թէ ոտն ուր է զնում ընազդաբար: Նրա հայեացքը շարունակ վեր է սւզզւած:

Թոյլ բարակ ճիւղերը կռարտւում են անդադար ստի տակ, քիչ է մնում վայր ընկնի, սակայն փոքր առ փոքր իջնում է:

Աշխատում է ոչ մի շարժում չանել դէպի տգռաւի բռնը, իսկ յարմոր ճիւղերն այն կաղմ էին գտնուում: Ազռաւների կտցահարած տերեները, նուրբ ճիւղերն անձրնի պէս գլուխն են թափ-

ւում, թշնամիների զայրոյթը զադաթնակիտին է հոռել:

Վերջապէս այդպէս կոխ մզելով՝ կարողանում է իջնել այնքան, որ հասնում է հաստ և ամուր ճիւղերին և աղա արտգութեամբ իջնում մի ճիւղից միւսը:

Ազատների զայրոյթն էլ փոքր առ փոքր շիջեց: Նրանք իրանց բունը միջի թանկագին ճաղերով տղատած տեսան և պաշտպանութեան եկած հարիւրաւոր ագռաւները ոկուցին ցրւել իրենց եկուաւոր բները և տեսել ցոլոք աղսաւներին իրենց յաղթութիւնը:

Երեխան ծառի կիսոց թառա ներքե գունատ, յոզնած, զոզում էր ամբողջ մարմնով և ազռաւների կռացը զեռ նիշում էր նրա ականջում:

Դազգոջուն ոտներով վազեց գէպի մայրն և տաաց:

«Մայրիկ, ազռաւներն աշքերո հանում էին»: Նա ընկաւ մօք գիրկը և սկսեց սաստիկ լոլ:

Ճ Ա Ճ Հ Ո Ւ Կ

Տաւգենեն

Որոից վերադառնալիս՝ անց էի կենում մի պարտէզի միջով։ Շունս վազում էր իմ տռջեից։

Նա յանկարծ էր քայլերը փոքրացրեց և սկսեց կամոց ու զզոյլ տոաջ գնալ, կարծես որսի հոտ էր տռել:

Ես նայեցի ու փոքր ինչ հեռուն, ճամփի վրա տեսայ մի փոքրիկ ճնճղուկ, որի կտուցի շուրջը գեղին էր դեռ, իսկ զլուխը աղաւաղով ծածկւած։ Նա ընկել էր բնից ու անշարժ զառկել էր միայնակ ու անօգնական, հոգիւ գուրք եկած փոքրիկ թեկրը փոած։

Երբ շունս ծանրաքայլ մատենում էր նրան, յանկարծ մօտակայ ժառի վրայից մի մեծ, ու կըծքով ճնճղուկ, օսքէ զէս ցած նետածակ առ երկու տնկամ թռու դէպի շան զաւաշը։ Նա յարձակւում էր, որ երկու տնկամ թռու դէպի շան զաւաշը... Բայց նրա փոքրիկ մարմինը գուսում էր փրկի, պահպանի ձոդին... Բայց նրա փոքրիկ մարմինը գուսում էր սարուսփից։ Նրա ծղբացը կտաղի էր։ Նա ուժից ընկնում էր։ Նա իրան զոհում էր։

Ի՞նչ ահապին նրէշ ոփորի երեար նրա աշքին շունը... Բայց և ի՞նչ ահապին նրէշ ոփորի երեար նրա աշքին շունը... Բայց և

այնպէս նա նոտած մտալ չկարողացաւ բարձր ու անվտանգ ճիւզին... նրա կամքից աւելի զօրեղ մի ուժ մղեց նրան վայր...

Եռնս կանգ առուր. ետ քաշւեց... նրանի նա էլ ճանաչեց այդ ուժը:

Ես շտապեցի շւարած շանս ետ կանչելու և հեռացայ՝ զգալով մէջո մի պատկառանք դէպի այդ փոքրիկ թոշունը:

Այն, մի ծիծաղէք, Ես պատկառում էր այդ փոքրիկ ներոս թոշնակի առջե, նրա սիրոյ ուժի առջե:

Գերի արծիւր

Դուսանեսկի

1

Մեր բանտն էին բերել մի վիրաւոր արծիւ: Բոլոր բանտարկեալ-ներս շրջապատեցինք նրան: Զէր կարողանում թոչել. աջ թե՛ռ կախ էր ընկած զեանին, մէկ ոտն էլ վնասւել էր: Թոշունը կատաղի հայեցք էր ածում շուրջը, դիտում էր հնատաքքիր ամբոխը և բաց էր անում էր կեռ քեթը, միշտ պատրաստ թանկ ծախելու իր կեանքը:

Երբ բոլորն էլ նայելուց կշտացան ու սկսեցին ցրւել, նա կազմով, մի ոտի վրա ոստոսաելով և առողջ թեր թափ տալով, քաշւեց բանտի բակի ամենահեռաւոր ծայրը և այստեղ կուչ եկաւ անկնում:

Այդաեղ նա ապեց մօա երեք ամիս և այդ տմբողջ ժամանակը լուրս չեկաւ իր անկիւնից:

Սկզբում յաճախ էին գալիս նրան նայելու և զրգուում էին շանը նրա դէմ: Շունը գազազած վրա էր ընկնում, բայց վախենում էր շատ մօտենալը: Արծիւը հապարտ ու վայրագ, վիրաւորւած արշայի պէս, կծկւած իր անկիւնում, դիտում էր հետաքքիր այցելուներին:

Սկզբում նա ուտել չէր ուզում, մի քանի օր բան չառաւ բերանը, վերջը ուտառում էր, բայց ոչ մեր ձեռքից, ոչ էլ մեր ներկայութեամբ: Երբ տեսնում էր մօտը մարդ չկայ, և համոզւում էր, որ մենակ է, մի քանի քայլ հեռանում էր իր անկիւնից և կաղալով անցնում էր պարսպի տակով, մի քսան քայլի չափ, յետոյ

զառնում էր ետ, նորից էր գնում, նորից ետ զայս, կարծես զբոսնելիս լինէր: Բայց հենց որ հեռակից նկատում էր մէկին, իսկոյն կազալով ու ոստոստալով շտապում էր իր տեղը և գլուխը ետ դցած, կտուցը լայն բաց արած, պատրաստում էր կամի: Ոչ մեր քաղցր խօսքերը, ոչ մեր փաղաքշանքները չեին մեղմացնում նրա սիրալը:

Մենակ ու չարացած սպասում էր նա մանւան, ոչ ոքի չնաւատուկ և ոչ ոքի հետ չնաշտելով:

2

Չպիտեմ ինչպէս, մի օր էլ յանկարծ բանտարկեալների մէջ միտք ծագեց, թէ հարկաւոր է նրան բաց թողնել:

— Թէ սատկելու է, թող բանտում չսատկի, — ասում էին մի քանիսը:

— Ի հարկէ, ազատ սովոր, անկախ թոշուն է, բանտին չի ընտելանալ, — պնդում էին միւսները:

— Մեղ նման չի, — աւելացրեց մէկը:

— Բան ասիր, ոս հօ թոշուն է, իսկ մենք մարդ:

— Արծիւը, ախտէց, անտառների թագաւոր է:

Ճաշից յետոյ, երբ աշխատանքի գնալու զանգը ուին, բանտարկեալներս արծիւն տռանք միասին: Նրան գրկողը պինդ սեղմել էց կտուցը, որովհետև ոաստիկ դիմադրում էր և ուզում էր զորիխը ազատի: Հասանք մի բարձր տեղ, ամենքս էլ հետաքքիրութեամբ կամենում էինք տեսնել թէ ուր պիտի զնայ արծիւը: Զարմանալի բան, բոլորս էլ մի բանով բաւական էինք, կարծես մենք էինք ազատութիւն ստանում...

— Սրան տես, Է. անպիտանին բարութիւն ենք անում, զեռ կծում էլ է, — ասում էր նրան տանող բանտարկեալը, գրեթէ սիրով սեղմելով թոշունին:

— Դէ բաց թող — կանչեց մէկը:

— Ազատութիւն տուր, իսկական ազատութիւն, — աւելացրեց մի ուրիշը:

Արծիւն բռնողը նրան զցեց մեր բարձրութիւնից ցած, դէպի մեր ոտքերի տակ տարածւող դաշտավայրը:

Աշնան վերջերն էր, օրը ցուցաւ և մատիլապատ: Քամին ուռւմ էր մերկ դաշտերի վրա և խշխում էր զեղսած ու չորացած,

փշու ու վայրի խոսերի մէջ։ Արծիւը ոլացաւ ուզիդ, թափ տալով
հիւանդ թեղ և կարծես շտապով որ մեզանից հեռանայ՝ ուր որ էլ
լինի։ Բանտարկեաները հետաքրքրութեամբ հետեւում էին թէ ինչ-
ու սեին էր տալիս նրա գլուխը չորացած խոտերի ֆօնի վրա։

— Մատկ, Է, — մտածկոտ արտասանեց մէկը,
— Ո՞նց է փախչում, — աւելացրեց միւսը։
— Իսկի ետ էլ չի նոյսում։
— Զլինի գու կարծում էիր, նորից ետ պիտի գայ ու չնոր-
նակալութիւն յայանի, — ծաղրեց մի ուրիշը։
— Հապա, սրան առում են ազատութիւն...
— Ազատութիւնը լաւ բան է։
— Էլ չի երեսում...
— Ի՞նչ էք կանգնել։ Մարշ, — կանչեցին մեղ ուզեկցով պահա-
պան զինւորները, և բոլորս լուս քարշ եկանք գէպի մեր տաժանա-
կիր աշխատանքը։

Արծիւ ու ճիճուռ

Ա. Շատրւան

Հսկայ թերը լայն-լայն տարածած՝
Նզօր արծիւը ուզգեց իր թոիչք
Դէպի բարձրաբերձ լիներ սեպացած,
Դէպի անսահման կապուտակ երկինք,
Երկար սաւառնեց նա խիա ամպերում,
Թանի ոյժ ունէր զօրեղ թերում,
Առ վերջ ի վերջոյ՝ յոգնած ու դաշրած՝
Նա նստեց հսկայ մի լիռան կրծքին,
Արի գագաթը մինչ երկինք հասած՝
Սարսափ էր ազգում վերև նայողին։
Նստեց նա ճանգիստ, անվախ, անվրդով
Եւ շուրջը գոռող հայեացք ձգելով,
Իր արքայական ձայնովն ահեղ
Արսուց ուժգին. «Մենակ եմ այստեղ»
Մենակ ու ազատ այս լեռն վըրայ,
Որպէս քաջայտգթ լիտօր արքայ

Իմ զան է անհուն այս երկնակամար,
Արու ու ամպեր — ուզիս պատւանդան.
Ո՞վ կայ աշխարհում փառքիս հուասոր,
Ո՞վ կարէ հասնել գահիս բարձրութեան։

— Ե՞ս...

Լուեցաւ յանկարծ մի ձայն թոյլ բարակ,
Մեծապանծ թըռչնի հենց ոտների տակ.

— Ես՝ անձրեային ճիճուս աննշան։

— Ի՞նչպէս, դու այստեղ, իմ գէմ յանդիման։

Ասա ինձ շուտով, ճիճուս անպատկառ,

Թըռեղբց դու այս ամպերին հասար»...։

— Այն նեիւած ճահճից, որտեղ այժմ դու

Զըզւում ես անգամ հայեացք ձգելու։

— «Թայց ի՞նչ հնարքով գու, միջատ չնշին,

Հասար իմ անհատ ամպազարդ գահին։

Ոսմ, պատմիր ինձ, Ընչպէս, ի՞նչ կերպով։

— Ի՞նչպէս. — սողալով, արծիւ, սողալով։

Վապաստակի մահը

Է. Սիեօն-Տօմոն

Վապաստակ մայրն ու իր որդին ձմեռնամտի մի ցուբա ու
քամի օր գնացին լիի հարաւային ափը, մտան ցախակոյտերի տակ

և մի կերպ տեղաւորւեցին այստեղ Այսօր այդտեղ էին գիշերեւու։

Գտմին աւելի ու աւելի սաստկանում էր. ցուբան էլ միւս
կողմից էր ուժեղանում. կէս գիշերին ձիւն եկաւ։ Բուք ու բուքն
սկսեց։

Այսպիսի մի գիշեր բոլորովին յարմար չէր որսի համար, սոկայն
պառաւ աղւէսը տանից դուրս էր եկի և թփերի արանքով գուլիս
էր գէպի ցափերը. յանկարծ նապաստակի հոտ զգաց. մի բուքէ
կանգ տուու, յետոյ սկսեց գաղտագողի առաջ գնալ գէպի ցափա-
կոյտը։

Բուքի ձայնը նպաստաւոր էր աղւէսի համար, նա բաւական
մօտեցաւ նապաստակներին. բայց տերեների խմխոցը զարթեցրեց
մայր-նապաստակին. Սա զինց որդու թիվերը և երկուսն էլ սորի

ելան։ Աղւէսը վրաները նետւնց, բայց թափչօք անյաջող էր, մայր-նապաստակը փախաւ, աղւէսը եռեկից ընկաւ։

Նապաստակը մի ճանապարհ միայն ունէր իր առջևնա սլացաւ ուղղակի քամուն հակառակ, կարնց ճռիմը։ Նապաստակը մի քիչ էլ առաջ անցաւ և հասաւ յօի տփին։ Ծյուեղ ծլ ընտրութիւն չկար։ Նա անցաւ բարձր եղեգնուածի միջով և մէկ ցաւկում նետւեց իոր ջուրը։ Աղւէսը եռեկից թռաւ, բայց ջուրը շատ սառն էր, միջից դուրս եկաւ։

Նապաստակն արագ լող տւաւ գէպի զիմացի ափը։ Բայց գէ-մուգէմից փշում էր սաստիկ քամի. կարճ, սաոցաւպատ ալիքները ծփում էին նրա գլխի վրաից, ջուրը լցւած էր ձիւնով, ոքը խանգարում էր նապաստակի ճանապարհ։ Վրկարոր ափի մուգ զիծը մյուծան նեռու էր։

Ականջները ամուր սեղմած մէջքին՝ նապաստակը արտգ լող էր տախու։ Բայց շատ դժւար էր այդքան երկար լող տալ սասր կի մէջ։ Նապաստակը հասել էր համարեա ճափի եղեգնուածին, երբ բարցող ձիւնի մի հաստ շերտ ճանապարհը կարեց։ Քամին ունում էր մերձաւոր ափին սոված աղւէսի պէս և տյդ ունցը զրկում էր նապաստակին ուժից և կորովից։ Նապաստակը ձիւնը ճեղքել չկարողացաւ, և ջուրը նրան ետեւ տաքաւ գէպի լճի խորքը։

Նորից լող տւաւ, բայց զանդաղ, շատ զանդաղ. երբ նու հասու նորից եղեգնուածին, նրա մորթի անզամները կտնկունել էին, ուժերը սպառել, քաջարի սիբուր թոյլ էր բարախում։ Աշողութեամբ անցաւ եղեգնուածի միջից, բայց երբ հասաւ պատառող բոյսերին, ուժերը գաւառանեցին, շարժումները սաստիկ թռացան. շուրջը սառուց էր հաւաքւում։

Մի քանի ըսպէից յետոյ նրա ցրտատար թաթերը դադարեցին շարժւելուց. թաւամազ դնչին այլնս չէր ցնցւում. նրա անուշ շա-գանակառյն աչիկները յաւիտեած փակւեցին։

Նապաստակները

Ար. Խնկոյեան

Նապաստակները տմբողջ ցեղսի
Անառի մէջ արին ժողով։

Եւ ժողովում մի ծեր Շլպիկ
Ասու. էկսէք, մեծ ու պատիկ։

Շունը հոչէ,

Քամին գլէ,

Ամոր գոռայ,

Մուկը ճքուայ,

Մեր էս ցեղը,

Հա կը դողայ,

Էսպէս տպրել չի կորելի

Էս աշխարհում չորիքով լի.

Չորն ու բարին ոչիսընի հիա,

Թողնենք զնանք, լցւենք մի գետ։

Շլպիկները՝ ոչ այս, ոչ այն,

Ելան ընկան մաէի ճամփան։

Հենց որ եկան գետին մօտիկ։

Էն գորտները, մեծ ու պատիկ,

Խոռնիքուաը

Ընկան ջուրը։

Խսկոյն այդանել մի առլ Շլպիկ՝

— Դորձէք, կանչեց, պապիս որդիք,

Էլ մի կախէք ձեր քթերը,

Մեղնից վախկոտ են զորտերը։

Առլեզի մահը

Վ. Փափազեան

1.

Մեր ֆուրգոնը կանգ տուաւ ուղիղ երասխի ափին։ Յած իջանք, Բեռները բոլոր իջեցրին, մեր ծտուայ Ստեփանը մեծ կարսկեաը փոեց գետին, մայրս սփառց բաց արաւ և նստեցինք ճաշի։

Ոսացին որ կէսօրից յետոյ միայն պիտի անցնէինք։

Ճաշը վերջացնելուց յետոյ մենք — երեխաներս գետափ իջանք և զնենել ոկտեցինք եղեղքին կպած ինչ որ նոււ։ Սա մի խոշոր տա- գական առաջ էր. ուղղակի սնդուկ, չորս կողմը Փայտէ ցանկապատ

137

շնած: Մի երկար ձող էլ—պէտք է որ թիակը լինէր—արկզի մի-
ֆց պարզւում-գնում էր և խրւում ջուրը:

— Հաստ է, հասկացրեց մեզ հայրս, որ մօտ էր եկել:

— Դրանեվ էինք միթէ անցնելու: Այդ ջրատ, ցեխոտ ու
լափծուն յառակի վրա էինք հաւաքւելու: Իսկ մեր ֆուրզմնը, ապ-
րանքը, էիմը:

— Կը աեսնէք,—ժպաց հայրս—բոլորն էլ կանցնեն: Գնացէք
առ այժմ գետափից հեռու: Մի մօտենաք ջրին: Այստեղ ափերը
փլում են յանկարծ: Իսկ եթէ ջուրն ընկաք, էլ չէք ազատուիլ:

— Կը խեղդւենք:

— Եւ ինչպէս... ասաց Սաեփանը.—այ, այսպէս կը խրւէք
ջրի մէջ... (ու ձեացրեց), յետոյ՝ դօլ-դօլ-դօլ... ջուրն ու ցեխը
կը լցուի փորներդ ու վըզզ... ջրի ատակը: Մէկ էլ էն կը տեսնէք
որ ծօվը էք հասել:

— Իրաւ որ, ինչ ցեխոտ է:

— Կարմիր ցեխ է:

— Կասես արիւա լինի... լերգ ու հողախառն արիւն:

2

Մի փոքր ժամանակից յետոյ մեզ մօտ — ափն եկան նոր հիւրեր:

Քսան-երեսուն ոչխարներ էին դրանք: Փոշոտ, ազտոտ, յոզնած
ու զլուխները կտսի՝ խեղճ անասունները կիտւեցին եղերքին, կպան
միմետնց ու սպասեցին:

Կային նրանց հետ նաև երկու խոշոր շներ: Բայց ինչպիսի
շներ: Մանաւանդ մէկը, որ անազին, մի հորթի չափ էր. ըրդոտ,
որիւնատ աչքերով և սկ, մեծ մռութով:

Նրանք էլ յոգնել էին: Լեզուները կտսի՝ հասան թէ չէ, շնթըու-
կեցին և աչքերը փակ՝ մնացին:

Երկու թուրք նովիւներ էին հօտը բերողները: Երկու անազին,
շէկ փոփախներով սեազէմ մարդիկ որ եցկար ցուպերովը մի կէ-
տի վրա ժողովեցին ոչխարներին և իրենք էլ նրանց կողքին՝ փըռ-
ւեցին գետին:

Սկզբում մեր շնիկ Առլէզը զարմանքից ոստնեց, տեղն ու
տեղը քարացածնայում էր նորեկներին: Յետոյ, երբ նստել էինք —
ոկսեց մռմռալ, վիզը ցցեց ու մի փոքրիկ «համ, համ» նետեց գէ-
պի շները: Իսկ երբ ամենքը տեղաւորել էին, էլ չհամբերեց, մի
քայլ առաջ զնաց և բաւական քաջ ձայնով հաջեց:

— Համ, համ, համ...

Գամփուերը աչքերը կիսովին բացին, մի բոպէ զննեցին փոք-
րիկ յանդուգնին, յետոյ լուռ՝ էլի փակեցին:

Առլէզին քաջալերեց այդ մռութիւնը: Երկու քայլ էլ առաջ
գնաց, նայեց նրանց և դարձեալ՝

— Համ, համ...

Գամփուերը և ոչ իսկ մռութիւն շաբժեցին:

Այն ժամանակ Առլէզը քաջաբար մօտ զնաց և առաջին գամ-
փըսից ուղիղ մի քայլ հեռու՝ լարւեց ոտքերի վրա: Միաժամանակ
նա կատարելապէս պատրաստեց ևս հետւելու և փախչելու, եթէ
յարձակում կրէր:

Այդպէս, զլուխը առաջ պարզած, բաւական երկար ու լնդ-
համ՝ հաջեց: Հաջեց ու լուց, զարձեալ առաջ զնաց, ետ քաշւեց,
ոկսեց մի քիչ մօտենալ շան մռութիւն, մի քանի «համ» նետել զէ-
պի նա և... վերջապէս լուց:

Երեխ ամաչեց իր շատախօսութիւնից:

— Ետ մի կանչէք, պատւիրեց հայրս: — Առլէզը ծանօթանալ է
ուզում իր հսկայ ազգակիցների հետ:

Առլէզը բոլորովին մռեցել էր զամփուին, հռտառում էր նրա
մեծ ականջները, թաթերն ու մռութը:

Գամփուն էլ աչքը բաց էր արել և հետեւ էր շնիկի շարժում-
ներին: Մինչև անդամ քիչ էլ պարզեց ոև դունչը դէպի նա և մի
ներին: Եղանակ անդամ քիչ էլ պարզեց ոև դունչը դէպի նա և մի
ներին: Եղանակ անդամ քիչ էլ պարզեց ոև դունչը դէպի նա և մի
ներին: Եղանակ անդամ քիչ էլ պարզեց ոև դունչը դէպի նա և մի
ներին: Եղանակ անդամ քիչ էլ պարզեց ոև դունչը դէպի նա և մի
ներին: Եղանակ անդամ քիչ էլ պարզեց ոև դունչը դէպի նա և մի
ներին: Եղանակ անդամ քիչ էլ պարզեց ոև դունչը դէպի նա և մի
ներին:

Ծանօթացել էին: Առլէզի պոչը աւելի աշխայժով էր երերւում:
Յետոյ յանկարծ բարձրացրեց նա իր առջևի թաթերը և գրւ զամ-
փըսի հաստ գլխին:

Նրանից յետոյ նա անցաւ միւս կողմը: Այստեղ միւս շան
էլ ծանօթացաւ և այնուհետեւ երեք շները մասերմաքար մի-
մանց կողքի հստած ոկսեցին խաղաղ կերպով իրարու պատմել՝
ով գիտէ ինչ հետաքրքիր բաներ...

3

Գործերն այս լբութեան մեջ էին, երբ լաստը վերադառն
մեզ տանելու:

Նստեցինք բաւական վախվիսելով: Մշակներն ու լաստավարը

ներս տարոն մեզ ու մի որոշ տեղ նստեցըին կարպեափ վրա։ Հայրս
ու մայրս խօսիւ պատուիրեցին՝ առվներիցո չշտրժւել։

Այսուհետեւ լատավավարը հօրիցս իրուունք խնդնեց ոչխացների
հոռն էլ մեզ հետ անցկացնելու։

Տեղ կար։ Ի մեծ ուրախութիւն Առլեզի, ոչխացներին ու շնե-
րին բչեցին և ժողովեցին մեր կողքին։

Աշխորները քիչ իրանեցին, առաջնորդ երկու այծերը պողե-
րով փորձեցին գէմ դնել, բայց երբ լուսու շարժւեց, կանգնած
մացին և մինչև ոնդամ վախից սկսեցին դողդողալ։

Այծերը միայն հանդարտ չեին մնում։ Տեղները նեղ էր։ Այս-
այն ոչխացին էին մղում, անցնում էին ուրիշ կողմ, երբ ջուրը
տեսնում էին—իրանում էին, ետք գնում և ամենքին նեղու-
թիւն առիտ։

— Հանգիստ կացէք, անիծածներ. — ձեռքով խփեց նրանց հովիւ-
ներից մէկը։

Բայց երբ լասուը հոսանքի մէջ մտաւ ու սկսեց պատռել և
անցնել, և երբ ջրերը ելան ու պայթել սկսեցին լաստի կողերի
վրա—այծերը ուելի գժւեցին։

Մենք ասեա—վախից կծկւել՝ իրար էինք կպել։

Մօրս աշքերի մէջ էլ սարսափ էր նկարւած։ Գրկել էր մեզ ու
նսոնել։

— Մի նայէք, ջրին մի նայէք..., մռմռում էր նա։

Հանդիսաւ ու անվրդով էին միայն թիակի վրա ընկած լաստա-
վարը, հովիւները, այլ և շները։

Իսկ Առլեզի տրամադրութիւնը զւարթ էր նոյն իսկ։ Ընկեր-
ների հետ խաղաց քիչ, իրան մէկ մէկ մօտ եկող ոչխացների վրա
հաջեց քաջարար ու հո մղեց, յետոյ մինչև տնդամ սիրտ ունեցաւ
յարձակւել ու զոռալ լաստի կողերը ծեծող ջրերի գէմ։

Իմ քաջ Առլեզ...
4

Հենց այդ միջոցին էր, որ մի սարսափելի բան տեղի ունեցաւ։
Զեմ յիշում, լաստը արդեօք ջրի հոսանքից շատ ծուեց, թէ
ոչխացները երկիւղից խառնւեցին իրուր։ Այսքանը միայն մտաքե-
րում էմ, այծերը սկսեցին սաստիկ գժութիւններ տնել։ Մասն ոչ-
խացների մէջ, ճղեցին նրանց խումբը, գլուխնին իջեցրած։ պողերը
գէմ տւում մօտեցան մեզ...
Հովիւներից մէկը վրա հասաւ, բանեց մի այծի եղջերներից
և ետ քաշեց, բայց միւսը շուռ եկաւ և վաղեց գէղի չները։

Առլեզը, որ հաջում էր ոչխաների վրա, այժմ դորձաւ գէպի
այծը և կատաղի կերպով լարւեց դէմը։

Սյծը գլուխը դէմ տւաւ և փորձեց մի լաւ ծեծ տալ փաքրիկ
բարկացկոտին։

Առլեզը տեսաւ որ կատակ չէին անում, սաստիկ վախեցաւ
ոուր պողերից, ետք բաշւեց՝ առանց ձայնը կտրելու։ Սյծը վրտ
քայլեց, Առլեզը ետ դնաց և յանկարծ...։

Յանկարծ լաստի բացւածքից դուրս ընկաւ ու զնդակի նման
զլորւեց պկառը դեսի մէջ։

Ափին մօտ էինք, բայց ջուրը դեռ խոր էր, բաւական խոր։

Մի սոսկալի ճիշ բարձրացրինք ամենքս։ Լաստավարը շփոթւեց
ու մեղ նայեց. հովիւները դէպի ջուրը կացան։

— Օգնեցէք, կանչեցի ես.— Առլեզը ջուրն ընկաւ։

Բայց ոչ ազ աեղիցը շարժւեց։ Ա՛վ սիրտ կանէր ջուրը նետ-
ւել. այդ կատաղի, պկառը զեսը, որի մէջ դժւար թէ կարելի լի-
նէր լող տալ։

Եւ ջուրը տանում էր, ընկդմում իմ խեղճ Առլեզին։

Անձայն, պկառը ջուրը կուկ տալով, փոքրիկ սաները զեր
ու վար անելով իփրձւում էր նա լոգալ, հստանքին գէմ դնել. կառ-
չել մի բանից, ուուիը բարձր բռնել... Բայց լաստի շարժումներն
խսկ վասում էին նրան, ջրի կոյանքը մզում դէպի նա ու ծածկում
ամբողջովին։

— Սպասեցէք շնիկս, ձայսում էի ես սրան-նրան զարձած ու
աղաչելով։ — Հայրիկ, աղատիր Առլեզին... Մայրիկ...։

Միւս եղբայններու ու քոյրերու էլ էին աղաչում։

— Ափոնն, — ասաւմ էր հայրս, — հի կարող է մանել զետը. Ջու-
րը կը քայլ մտնողին... Խեղճ Առլեզ, դժւար թէ աղատւի։
Ու ամենքս լալիս էինք, լալիս և նայում թշւառ շնիկի յուսա-
հատ ջանքերին, ընկդմել-ենինլուն, թաթերի ցնցւումներին։

Հովիւները նոյն իսկ յուզում՝ նայում էին։
Իսկ գամփումը։ Ա՛ն, նրանք... Պէտք էր մէկ աեսնել նրանց։
Վեր էին թռել, կատաղի հաջոց սկսել, վաղում էին գէս ու
գէն, օննում, ամենքին մօտենում, խղճալի, օդնութիւն ուզող հա-
յեացըներով մեղ նայում...։

Հաջում և իրեն կտրտում էր մանաւանդ նրանցից մեկը. այն խոշոր, նորթի մեծութեամբ զամփոր:

Աչքերը թրջւել էին. Արտառում էր կարծես. Հայեացքը փոխի փոխ տեղենքիս էր դարձում և թում էր թէ ասում էր.

—Գութ չունիք, ինչու էք կանգնել. միթէ պիտի թողնէք կորչի այդ փոքրիկ սիրուն արարածը...

Իսկ լուսում գնում էր, Առլէզին էլ ջուրը հետացնում էր և նա այժմ թաթերն անգամ շարժել չէր կարողանում:

Թուլացել էր, խեղդւում էր...

Եւ ահա այդ ժամանակ յանկարծ գամփոերից մեծը կատաղի կերպով նաշեց ու ջուրը նետուեց:

Զարմանքից գոռացին ամենքրւ Լաստավարն իսկ թողեց թիակը. հովիւները զունատւեցին և բարկացած՝ սկսեցին կանչել.

—Բարօ, ետ, ետ դարձիր...

Բոյց Բարօն մեծ սատումներով լողում էր դէպի Առլէզը, դընում էր նրան օգնութեան:

5

Լասար արդէն տիին էր հասել. չւանը նետել էր և կպչում էր ցամաքին:

Այնտեղ, եղերքին երևացին բազմտթիւ ուրիշ մարդիկ:

Լոել էին մեր ձայնը, տեսել էին եղածը և զարմանքով ու սրտատրով հետևում էին գամփուն:

Հերոս շուն: Ինչպէս լողում էր անընդհատ, մանում էր ջրի տակ, եխում. միւս կողմից էլ հաջում էր. կարծես ուզում էր իմաց սալ խեղդւողին, սիրդ առաջ ու տռել.

—Քաջ կաց, զալիս եմ ահա...

Եւ զնում էր. Պիտի համնէր անշուշտ:

Ափն իշտնք: Լասար ետ դարձու, իսկ մենք ջրի եղերքին սպասում էինք Առլէզի ազատւելուն:

Տարերտառաբար շնիկը գուրս էր ընկել նոսանքից և ջրի ծըփումներից մղում էր դէպի եղերքը:

Գամփու հասաւ նրան շուտով, մի վերջին սատում էլ դարձեց, մի ուրախ հաջոց էլ արձակեց և բերանովը բռնից շնիկի վզից:

Ափի զբա եղած մարզիկ սգեղրւած՝ կռացել էին դէպի ջուրը և գոռում էին:

—Հա այգաղէս, առլէն, քաջ եղիր, լողա... Այս կողմն արի, էլի՞ մի քիչ ոյժ... Կեցցես...

Իսկ Առլէզը այլիս չէր շարժւում. Թաթերը երերուն, մարմինը թուլացած և ջրաթաթախ զալիս էր՝ զամփոի բերանի տակից կախւած...

Այնուհետև մնում էր քիչ տեղ. Մի երկու ճիկ և ու հովու շունը ափ դուբս եկաւ, Առլէզին գետին զրեց և թոթւեց իր վեայի ջուրը:

Յետոյ, երբ մենք Առլէզով էինք զբաղւում, շուրջը նայեց, զարմանքով դիտեց իրեն շրջապատող ժպառուն մարդկանց, լուս հեռացաւ, միանձալու զնաց իր հօտին:

Մենք զբաղւած էինք Առլէզին ուշի բերելով:

Առլէզը սակայն շապրեց: Մի քանի ժամ յետոյ մի քանի ցըն ցումեր դործեց և երբ մեր ֆուբդունը պատրաստ էր նորից մեղ տանելու—մեր ձեռքերի վրա փչեց իր վերջին շունչը:

Նրասխի ափին, աւազների մէջ մի փոս փորեցինք, Առլէզին այնուեղ թաղեցինք, լացինք վըան ու մեկնեցինք...

Մարդկութեան բարեկամներ

Գորբունով-Պասադով

1

Ալպեան Սէն-Բենար լեռան սառցապատ կիրճերի և վիճերի միջով ձգւում է մի ընդարձակ լեռնանցք:

Սէն-Բենարի լեռնանցքը անվտանգ է ամառը միայն, պարզ եղանակին. իսկ ձմեռը, փորորկի միջոցին, երբ լեռան հազար ու մի փոսերը և ճեղքւածքները ձիւնով ծածկւած են լինում, այնտեղով գնալը ոչ միայն դժւար է, այլ նոյն իսկ վտանգաւոր:

Տարւոյ մէջ մարդիկ օից անգամ միայն կառող էին անվասնգ անցնել Սէն-Բենարի քարքարուաներով, եթէ նրանց օգնութեան անշասնէին այն տեղերում տպարող պատրաստակամ, մարդառէր անձեր:

Աւթերորդ գարում արդէն այդ վտանգաւոր լեռնաշխարհում ընակութիւն հաստացին մի քանի կրօնաւորներ, որոնք իրենց անձը նւիրեցին դժբախտ պատահարների հնթարկւող ուղեղուներին փրկելու դործին:

962 Թւականին Բեռնաբ-դը-Շօնտօն սարկաւագը հիմնեց Սէն-Բեռնար լեռան վրա մի վանք, ուսարական մտրդկանց ապաստանելու համար. ուղևորները այդուեզ ժամանակաւորապէս ստանում են օթեան, մնունդ և ամեն տեսակ օվնութիւն:

Լեռնային այս ապաստարանում աշխատող վանականների հոգատարութեան գլխաւոր առաջկան է՝ անդապար որոնել ճանապարհը կրցըրած կամ կորստեան մատնաւած ուղևորների:

Ամեն օր երկ-երկու վանականներ վնում տեսնում են լեռնանցը ամենավտանգաւոր տեղերը: Իսկ երբ եղանակը վատ է լինում կամ վերից թափւում են ձեան հիւսեր ու քարսկոյտեր, այդ ժամանակ վանքից գուրս են գալիս և վասնեւած մարդկանց որոնել ոկում վեց վեց վանականներ՝ թիակներ, պատգարակներ և կազդուրիչ խմբչք վերցըրած հետները:

Սակայն դժւար, երբեմն նոյն իսկ բոլորովին տնկարելի պիտի լինէին որոնութեան լեռնանցքի հասու, խորը ձեան շերտերի տակ, եթէ վանականները չունենային հաւատարիմ օգնականներ. — գրանք աէն-բեռնարեան յայտնի շներն են.

•

Սէն-բեռնարեան շները աչքի են ընկնում իրենց հասառական կարողութեամբ և բարութեամբ. Այս շները ծանր աշխատանք են կատարում. Նրանցից ամեն մէկը իւրաքանչիւր օր վազվում— անցնում է ահազին տարածութիւն, վնարելով ճանապարհը կորցըրած կամ ուժասպոռութիւնից վայր ընկած ու յաճախ ձեան տակ մնացած ուղևորներին:

Այս խելօք կենդանիները իրենց բարի կամքով երբեմն օրեք շարունակ որոնում են ծիւնածածկ ճանապարհները և վիճերը: Ձեան հիւսի հանդիպելով նրանք մեծ խնամքով հոտուաւմ, որոնում են մտրդու հետք և երբ գտնում են, անմիջապէս սկսում են փորել ձիւնը իրենց ամուր թաթերով՝ գուրս հանում տակը մնացած ուղևորին:

Այդ շների մէջքին կաշէ լայն գոտով կապած է ինում մտնուզի կտոր, իսկ վզից կախած է լինում խմելու գեղով լի մի սրւակ. մանուղը և զեղս էլ նրա համար են, ոք փետացած, ուժասպառ եղած ուղևորը կարողանայ տաք բանով ծածկւել և խմիչքով կազդուրւել:

Իսկ եթէ, բան է, վանքի շներին չի յաջազւում ապատել ձեան տակ թաղւած ուղևորին, եթէ ճանապարհին վայր ընկած և սառած

ճամփորդը չէ շարժւում շների հարւածներից, այդ դէպքում ները նետի արագութեամբ, ամենամօտ ճանապարհով, սլանում են շները վանք և բարձր հաջոցով գուրս կանչում վանականներին՝ օգդէպի վանք և բարձր հաջոցով գուրս կանչում վանականներին՝ օգնութեան համական պատահարի մատնաւծին:

Եւ շնորհիւ սէն-բեռնարեան շների նուրբ-հուառութեան, որատես, խոշոր աչքերին, նրանց ոյժին և արագավազութեան՝ շատ ու տես, խոշոր աչքերին առաջ արագավազութեան՝ շատ ու շատ հարիւրաւոր մարդիկ են ազատւել Ալպեան սարերու մնիսւ-ասպիկի փորձանքից:

2.

1824 թւականին սէն-բեռնարեան շների մէջ ամենից աւելի աշքի էր ընկնում մէկը. Կրա անունն էր Աղամանդ: Վանքի մնացքի մէկը ընկնում մէկը. Կրա անունն էր Աղամանդ: Վանքի մնացք ցած բոլոր շներից նա աւելի քաջ էր և հասկացող. Նրանից մնացած շները, ինչպէս իրենց ուսուցչից, սովորում էին մոլորած ուղերդին որոնելու արւեստը:

Պատահեց, որ մի անդում սոսկալի բուք վեր կացաւ սարում. Աղամանդից բառում էր վայր թափւող ձեան հիւսերի դպրդիւնը: Աղամանդը իսկոյն այս կողմերը վազեց՝ որոնում անելու:

Լեռնային մի շաւզի վրա նա հոտուելով զգաց մարդու մօտիկութիւն և սկսեց բարձր ձախով հաջու: Նրա հաջոցին արձատիկութիւն և սկսեց բարձր ձախով հաջու: Կան վանականները շտապեցին գանք տւին վանքի միւս շները, և ահա վանականները շտապեցին գանք տւին վանքը՝ իւրաքանչիւր ուուր ծայրերով: «Աղամանդ»-ը կայս ձեռնափայտեր՝ երկաթեայ ուուր ծայրերով: «Աղամանդ»-ը առաջնորդեց նրանց դէպի մի արանետ, որտեղ կրօնաւորները առաջնորդեց նրանց դէպի մի արանետ, որտեղ կրօնաւորները ձեան հիւսի տակ գտան ուշակորոյս եղած մի աղամարդու և մի կնոջ:

Վանականները փաթաթեցին այդ խեղճերին, պատգարակի վրա դրին ու պատրաստեցին նրանց վանք տանելու: Բայց մոք վրա դրին ու պատրաստեցին նրանց վանք տանելու: Կան շներին մնացք ու պատրաստեցին նրանց վանք տանելու: Կան գնացնեցին վանք տանելու: Վայր էլ բան չէր երեսում. վարդապետները շնասկացան, թէ բնչ է բայց էլ բան չէր երեսում. վարդապետները շնասկացան, թէ բնչ է պատրաստեցին նրանք չորս կողմը փորփռեցին, բայց ոչնչ չգտան. Կնոջն ու տղամարդուն առան վանք տարան:

«Աղամանդ»-ը մենակ մնաց, նա շարունակեց ինչ-ոք բան ու բռներ. Մէկ ժամից աւելի նա անընդհատ փորփռում էր ձիւնը իր զորել թաթերով. յոզնում էր, ապա հանգստանում, ու յատոյ կը զորել թաթերով. յոզնում էր, ապա հանգստանում վերջապէս զիմում. — այսպէս աճան վերջապէս զիմում. — այսպէս աճան վերջապէս զիմում:

տակից դուրս հանեց համարեա բոլորովին ոառած մի փոքրիկ աը-
դայի:

«Աղամանդ»-ը սկսեց տղայի նրնոը և ձեռքերը լիզել իր տաք
լեզուվ, մինչև որ նրա ուշքը վրան եկաւ: Աղա բարի շունը պառ-
կեց տղայի կողքին, ջանալով տաքացնել նրան իր բըդու մարմով:
Յետոյ նա այն զիրքով պառկեց, որ մանուկը Կեշտութեամբ կարո-
դանար շան վրա բարձրանալ. իր փաղաքշանքներով հասաւ շունը
նպատակին.—մանուկը նստեց բարի գամփոփ մէջքին, բռնեց նրա
բըդու զից իր զողոզացող թաթիկներով: Եւ այսպէս՝ «Աղաման-
դ»-ը տղային ուրախ-ուրախ տարաւ հասցրեց վանք:

Իսկ այդ միջոցին վանքում մեծ իրարանցում էր ընկել: Վանա-
կանների ազտատօն կինը այդ տղայի մայրն էր. երբ նա վանքում
ուշքի եկաւ, ուրօտափահար եղաւ իմանալով, որ վանականները չեն
ազատել երեխային: Հենց այն է, նա ուզում էր վանքից դուրս վա-
զել՝ այդ բուք ու բորանին սառուցի և ձիան մէջ որոնելու իր զա-
ւակին, որ յանկարծ երեաց Աղամանդը — թուլացած, հետլով. ու-
րախութիւնից մայրը լաց եղաւ, իսկոյն վերցրեց իր երեխային շան
մէջքից. փոքրիկը պինդ-պինդ բռնել էր «Աղամանդ»ի թաւ մազե-
րից...



ԵՐԵՒԵԼԻ ՄԱՐԴԻԿ

Մերու Մաշտոց

Կ. Մ. Նահեազարեան

Հայերս մինչև Մերու Մաշտոցի ժամանուկները թէև գրքեր
ունէինք, բայց բոլորը գրւած էին յոյների կամ ասորիների լեզուվ,
և եկեղեցիներում Ս. Գիրքը կարդալին, հմուտ թարգմանիչներ
ուէտք է հայերէն բացատրէին, որ հասարակ ժողով զը բան հաս-
կանար: Դողոցներում ևս, որ մի քանի վանքեր միայն կային,
աշակերտները փոխանակ հայերէնի, յաւնարէ ու ասրերէն էին
սովորում, որ շատ խորթ էր նրանց ու գմւար հասկանալի:

Աշակերտի դրութիւնը շատ ան-
տանի էր. մի կողմից օտար լեզվի
գմւարութիւնը, միւս կողմից արտա-
գրելու չարչարանքը մաշում էր նրա
սիրաը. ոչ ոք չկար, որ նրա նեղու-
թիւնները թեթևացնէր, ուսումն ու
գիտութիւնները նրա համար հեշտաց-
նէր:

Բայց ահա չորրորդ դարում երեե-
ցաւ Մերու Մաշտոցը, որ շատ հմուտ
էր յոյն, ասորի և պարօիկ լեզուներին,
նա թագաւորի պալատում տաենազպիք
էր առաջ, բայց յետոյ պաշտօնը թող-
նելով և վարդապետ ձեռնազրւելով,
քարոզում էր ու գիւղեգիւղ ընկած սովորեցնում ժողովրդին:
Նա զգաց աշակերտի դառը դրութիւնը և մտածեց սեփական



Նշանագրեր հնարել մայրենի լեզւի համար: Նա իր միտքը յայտնեց այն ժամանակւայ Սահակ կաթուղիկոսին, որ համամիտ լինելով Մեսրոպին՝ շատ ուրախացաւ և մի ժողով կազմեց Վաղարշապատ քաղաքում, ուր ներկայ էին ժամանակի գիտնականները և ինքը Վասմշապուհ թագաւորը:

Այդ ժողովում թագաւորը յայտնեց, որ Միջադեպում իր ճանապարհորդութեան ժամանակ Հարէլ անունով մի քահանայ նրան տաել էր, թէ այստեղի Դանիէլ եպիսկոպոսը հայերի համար տառեր է հնարել և իրանից ինդրում է թոյլ տալ Հայաստանում գործադրելու, բայց ինքը խառնւած լինելով, ուշը չի գարձրել:

Այս բանի վրա ամենքն ուրախացան և շուտով Վահրիճ անունով մի մարդ ուղարկեցին Դանիէլի մօտ, որ այն տառերը բերէ, բայց երբ ստացան ու առ ժամանակ գործադրեցին՝ աեսան որ շատ ձայներ պակաս են, ուստի Մեսրոպ ինքն անձամբ դնաց Դանիէլի մօտ, որ նրա խորհրդակցութիւնով կարողանայ թերին լրացնել. միայն այստեղ օգուտ չտեսնելով՝ ճանապարհորդեց շատ տեղ և դիմեց շատ երևելի յոյն լեզւագէտների, բայց ոչ մէկից էլ իր ցանկացած արդիւնքը չստացաւ:

Նա ամենին չյուսահատւեց իր անյաջողութեան վրա, այլ աւելի եռանգով սկրաւ գործը, մի գործ, որից միայն կախւած էր Հայաստանի մանուկների փրկութիւնը:

Եւ ահա մի օր, երբ ազօթքի ժամանակ մտքով յափշտակւած էր, այսպէս երեաց նրան, իբր թէ մի ձեռք նշանագրեր էր գրում մի քարի վրա, որոնց ձեռքը իսկոյն ապաւորում էին իր մտքի մէջ՝ նա տեսած ձեերն իսկոյն գրեց և Հոռովանոս անունով մի յոյն լեզւագէտի հետ կարգի դնելով՝ բերաւ Հայաստան...

Անցու մի փոքր ժամանակ և անա Մեսրոպի ու Սահակի ձեռքով Հայաստանը լցւեց դպրոցներով, ուր հայ մանուկը բռն հայկան տառերն արաւանելով՝ ինդացրեց ամենքի սիրան ու հոգին:

Շատ առաջադէմ աշակերտներ գուրս եկան այդ ժամանակները, որոնց Մեսրոպ և Սահակ ուղարկեցին Կ. Պոլիս, Աթէնք, Աղքանաղըիա, իրանց ուսումը կատարելադրելու. և այդ աշակերտների օջնութիւնով էր, որ թարգմանեցին յունարէնից Աստւածաշակերտների միմեանց մօտ բերելով, կարող եմ կազմել բառեր, ուզեց նաև միմեանց մօտ բերելով:

Տառերը շատ փոփոխութիւններ կրեցին, մինչև որ հաստն այն կողիկ ձեին, որ տեսնում ենք այժմ մեր գրքերում և որն օրէցօք տւելի ևս կատարելագործում է:

Գուտենբերգ

Կ. Մ. Շահմազարեան

1

Ճպագրութիւնը հնարադների մէջ առաջին ու ամենից նշանաւոր տեղը բռնում է Գուտենբերգը:

Գուտենբերգը ծնւել է Գերմանիայի Մայնց քաղաքում, որ Հոկտնուի ավին է, 1400 թւականներին: Նա ազգատ ծնողների զաւակ էր: Դեռ փոքր երեխայ էր, երբ զրկեց հօրից: Նրա մանկութեան տարիները յայտնի չեն մեզ, միայն ասում են, թէ շատ աշքարաց, աշխատատուէր ու հետաքրքրուղ երեխայ էր:

Նա զնում էր քաղաքի դպրոցը և լուս պարապում էր երբ չափահաս դառաւ, սկսեց ճանապարհորդել նւրոպայում և մի քանի տարիներ անցկացրեց Հոլանդիայում. ամեն տեղ նա աշխատում էր օգտակար բաներ սովորել ու զանազան արհեստների գաղանիքն իմանալ:



Մի բան, որի վրա նա անդադար մածում էր, այն էր, թէ ինչ հնար գրտանէ, որ կարողանայ հեշտ կերպով շատացնել միենոյն գրքի օրինակը. մտշեց իր կեանքը գրա համար և վերջապէս հասաւ իր նպատակին՝ գտաւ տպագրութեան արհեստը:

